Дополнительной проблемой является недостаточная разработанность критериев оценки самостоятельности и осознанности проектных решений в условиях использования генеративных ИИ-инструментов. В образовательной практике это приводит к размыванию границ между допустимой поддержкой и недобросовестным замещением когнитивной деятельности обучающихся. Отсутствие чётко сформулированных ориентиров способствует усилению субъективного фактора в оценивании студенческих работ и формированию противоречивых установок как у преподавателей, так и у обучающихся [7, 12]. Существующие этические подходы к использованию ИИ в образовании преимущественно опираются на нормативные и запретительные модели, которые не учитывают специфику проектного и творческого обучения. Такие модели слабо применимы в контексте дизайн-образования, где значительная часть познавательной деятельности осуществляется в форме неформализованных, интуитивных и визуально опосредованных процессов. В результате возникает разрыв между декларируемыми принципами академической добросовестности и реальными условиями формирования проектного мышления. В данной связи актуализируется необходимость разработки аналитического подхода, позволяющего рассматривать использование генеративного ИИ в дизайн-образовании с учётом когнитивной функции эскизного этапа, особенностей образовательного контекста и этических последствий делегирования отдельных стадий проектного процесса алгоритмическим системам. Постановка данной

проблемы предполагает переход от универсальных оценочных суждений к формированию обоснованных критериев допустимости и ответственности при использовании ИИ в процессе подготовки будущих дизайнеров.

Цель и задачи исследования. Целью настоящего исследования является аналитическое осмысление этических аспектов использования генеративных технологий искусственного интеллекта в дизайн-образовании с акцентом на влияние ИИ на ранние стадии дизайн-процесса, прежде всего на этап эскизирования и концептуального поиска, как ключевые элементы формирования проектного мышления обучающихся.

Для достижения поставленной цели в работе предусматривается решение следующих задач:

1. Проанализировать особенности трансформации дизайн-процесса под воздействием генеративных ИИ-инструментов в профессиональной и образовательной среде;
2. Рассмотреть роль эскизного и концептуального этапов в формировании когнитивных и проектных навыков обучающихся в контексте дизайн-образования;
3. Выявить основные этические риски, связанные с использованием генеративного ИИ в процессе подготовки дизайнеров, включая вопросы авторства, ответственности и академической добросовестности;
4. Проанализировать феномен подмены проектного процесса формально завершённым визуальным результатом при некритическом применении ИИ-инструментов;
5. Обосновать необходимость дифференцированного подхода к использованию генеративного ИИ на различных этапах дизайн-процесса с учётом их когнитивной и образовательной функций;
6. Сформулировать аналитические основания для разработки этически ответственных критериев использования ИИ в дизайн-образовании, ориентированных на сохранение и развитие самостоятельного проектного мышления обучающихся.

Материалы и методы

Настоящее исследование носит аналитический и концептуальный характер и направлено на осмысление этических аспектов использования генеративных технологий искусственного интеллекта в дизайн-образовании и профессиональном проектировании. Работа не предполагает проведения эмпирического эксперимента или количественного анализа, а основывается на систематизированном изучении научных публикаций и концептуальном анализе существующих подходов к интеграции ИИ в образовательный процесс. Выбор данного типа исследования обусловлен спецификой рассматриваемой проблематики, находящейся на стыке дизайн-практики, педагогики и этики, а также необходимостью теоретического осмысления новых профессиональных и образовательных вызовов, связанных с внедрением генеративных ИИ-инструментов.

Методологическую основу исследования составляют:

- положения теории дизайн-мышления, рассматривающие проектирование как итеративный, рефлексивный и когнитивно нагруженный процесс [8, 11];
- концепции воплощённого и внешнего мышления, согласно которым визуальные и графические действия (в том числе ручное эскизирование) выступают не только средствами фиксации идей, но и инструментами их формирования [8, 9];

- современные подходы к анализу когнитивного делегирования (cognitive offloading) в условиях использования цифровых и интеллектуальных технологий [5, 6];
- положения академической этики и теории академической добросовестности, применительно к высшему образованию и проектно-ориентированным дисциплинам [7, 12].

Исследование опирается на междисциплинарный подход, объединяющий результаты работ в области дизайна, педагогики, когнитивных наук и исследований в сфере искусственного интеллекта.

В ходе работы были использованы следующие методы:

- аналитический обзор научных источников, посвящённых применению генеративного искусственного интеллекта в образовании, дизайне и творческих дисциплинах;
- сравнительный анализ подходов к использованию ИИ на различных этапах дизайн-процесса, включая концептуальное эскизирование, разработку и визуализацию проектных решений;
- концептуальный анализ этических рисков, возникающих при использовании ИИ в образовательной и проектной практике, с акцентом на проблемы авторства, самостоятельности мышления и профессиональной ответственности;
- педагогическая рефлексия, основанная на профессиональном опыте преподавания дизайн-дисциплин в системе высшего образования.

Данные методы позволили выявить противоречия между потенциальными возможностями ИИ как инструмента и рисками его некритического применения в образовательном процессе.

Анализ и отбор научных источников. Корпус источников для исследования был сформирован на основе публикаций, соответствующих следующим критериям:

- релевантность тематике искусственного интеллекта в образовании, дизайне и проектировании;
- наличие теоретического или аналитического осмысления когнитивных, педагогических и этических аспектов применения ИИ;
- публикация в рецензируемых научных журналах или сборниках конференций;
- актуальность исследований (преимущественно публикации последних лет).

Особое внимание уделялось работам, рассматривающим влияние генеративных ИИ-инструментов на процессы мышления, формирования проектных решений и оценивания учебных результатов, а также публикациям, посвящённым вопросам академической добросовестности и этических рамок использования цифровых технологий в высшем образовании.

Настоящее исследование имеет ряд ограничений, связанных с выбранным методологическим подходом. В частности, работа не включает эмпирические данные, полученные в результате экспериментального или статистического исследования, а опирается на анализ существующих научных публикаций и профессиональную педагогическую практику автора.

Тем не менее, выявленные в ходе исследования положения и выводы позволяют сформулировать обоснованные этические и методические рекомендации, а также обозначить направления для дальнейших эмпирических исследований в области дизайн-образования и применения генеративного искусственного интеллекта.

Результаты и обсуждение

В современной образовательной практике в области дизайна всё более широкое применение получают генеративные инструменты искусственного интеллекта, используемые на различных этапах проектного процесса. К числу наиболее распространённых относятся системы визуальной генерации изображений (Midjourney, DALL·E, Stable Diffusion), позволяющие на основе текстовых запросов формировать вариативные композиционные и образные решения, а также языковые модели (ChatGPT), применяемые для разработки концептуальных описаний, структурирования проектных идей и первичного анализа информации. На этапах представления проектных решений используются инструменты мультимедийной генерации (например, Runway ML), обеспечивающие создание анимационных и визуальных материалов. Указанные технологии интегрируются преимущественно в стадии концептуального поиска, разработки и визуализации, что позволяет рассматривать их как часть современного инструментария дизайн-образования. Вместе с тем их применение требует дифференцированного и критического подхода, поскольку характер их использования непосредственно влияет на степень когнитивного участия обучающихся и логику формирования проектных решений (табл.).

Таблица

Использование генеративных ИИ-инструментов в дизайн-образовании

<i>Инструмент</i>	<i>Функция</i>	<i>Этап проектного процесса</i>
Midjourney	генерация визуальных образов	концептуальный поиск
DALL·E	формирование визуальных концепций	ранний этап проектирования
Stable Diffusion	вариативная генерация изображений	эскизирование
ChatGPT	формулирование концепций и текстов	исследование и идея
Runway ML	создание анимации и видео	презентация

Использование генеративного ИИ на этапе эскизирования и концептуального поиска. Этап эскизирования в дизайн-процессе традиционно рассматривается как ключевая фаза формирования проектного мышления, в рамках которой происходит первичная визуализация идеи, её уточнение и многократная переоценка. Ручной эскиз в данном контексте выступает не только как средство фиксации замысла, но и как инструмент мышления, позволяющий дизайнеру постепенно выстраивать логику формы, пространства и функциональных связей [8, 9].

Использование генеративных ИИ-инструментов на данном этапе способно существенно изменить характер когнитивной нагрузки обучающегося. С одной стороны, ИИ может выполнять функцию расширения визуального опыта, снижая барьеры, связанные с недостаточной насмотренностью или страхом перед сложной формой, особенно у студентов младших курсов. Генерация альтернативных форм и образов при корректно сформулированном запросе нередко способствует выходу за пределы шаблонного мышления и стимулирует интерес к дальнейшему развитию идеи [3]. С другой стороны, делегирование этапа эскизирования алгоритму приводит к утрате самого процесса формирования замысла. В ситуации, когда визуальное решение возникает мгновенно и в готовом виде, у обучающегося

отсутствует необходимость проходить путь проб, ошибок и последовательных уточнений. В результате эскиз утрачивает функцию инструмента формирования идеи и всё в меньшей степени отражает индивидуальную логику проектного развития. Подобная подмена особенно проблематична в образовательном контексте, где именно процесс, а не визуальная убедительность конечного образа является основным предметом оценки [5, 6, 10].

Использование ИИ на этапе разработки и визуализации проектных решений. На этапах разработки и визуализации проектных решений генеративные ИИ-инструменты демонстрируют высокий прикладной потенциал. Автоматизация отдельных операций, ускорение подбора визуальных характеристик, работа с цветом, фактурой и антуражем позволяют оптимизировать процесс представления проекта и повысить его наглядность [3]. В то же время применение ИИ на данном этапе сопряжено с рядом этических рисков. Во-первых, визуальная убедительность результата может маскировать недостаточную проработанность концепции. Во-вторых, использование алгоритмически сгенерированных решений без критической проверки способствует снижению ответственности за принимаемые проектные решения. В образовательной практике это проявляется в стремлении заменить аналитическую работу над проектом формальным улучшением его внешнего вида.

Отдельного внимания требует проблема алгоритмической непрозрачности. Студент, использующий ИИ как «чёрный ящик», зачастую не способен объяснить происхождение того или иного решения, что затрудняет оценку осознанности проектного процесса [6, 7]. В подобных случаях ИИ фактически выступает не как инструмент, а как соавтор, роль которого не артикулируется и не осмысливается [7, 12].

Этические аспекты авторства и ответственности в условиях использования генеративного ИИ. На завершающих этапах проектирования вопрос распределения ответственности между человеком и алгоритмом приобретает особую остроту. В профессиональной практике дизайнер несёт ответственность за принятые решения независимо от используемых инструментов. Однако в образовательном контексте эта граница часто оказывается размытой.

Если конечный продукт представляет собой визуально привлекательное, но концептуально необоснованное решение, возникает проблема оценки авторства. В условиях отсутствия чётко зафиксированного процесса проектного развития становится затруднительным определить степень участия обучающегося в формировании результата. Это особенно критично в случаях, когда ИИ используется не как вспомогательный инструмент, а как основной источник проектных решений [7, 12].

Таким образом, использование ИИ в финальной стадии проектирования требует чётких этических рамок, предполагающих сохранение за студентом ответственности за обоснование, интерпретацию и корректировку результатов генерации.

В образовательной среде применение генеративных ИИ-инструментов неизбежно связано с вопросами академической добросовестности. Использование ИИ без раскрытия данного факта может рассматриваться как форма академической недобросовестности в тех случаях, когда отсутствует аргументация проектных решений и не прослеживается логика их развития [5, 12]. При этом формальный запрет на использование ИИ не представляется эффективным решением. Практика показывает, что подобные запреты не устраняют проблему, а лишь способствуют развитию скрытых и некритич-

ных форм применения технологий. Более продуктивным является формирование прозрачных критериев допустимого использования ИИ, ориентированных не на фиксацию результата, а на анализ процесса [6, 7].

Существенным фактором остаётся человеческий аспект оценивания [7]. Различия в опыте, цифровой компетентности и индивидуальном отношении преподавателей к ИИ неизбежно влияют на интерпретацию студенческих работ. Это подчёркивает необходимость исключения размытых формулировок и внедрения чётких, однозначных требований, минимизирующих субъективность оценки.

Этические рамки корректного использования ИИ в дизайн-образовании. На основе проведённого анализа и педагогической практики можно сформулировать ряд принципов, определяющих этически корректное использование ИИ в дизайн-образовании:

- допустимость использования ИИ на этапе генерации идей при условии последующей самостоятельной переработки и развития концепции;
- обязательное наличие эскизного материала, отражающего логику проектного развития и индивидуальный ход мышления обучающегося;
- способность студента аргументировать принятые решения, объяснять выбор формы, материалов и пространственных решений;
- недопустимость представления в качестве конечного результата исключительно алгоритмически сгенерированного визуального образа без аналитического сопровождения;
- признание ИИ-инструментом, а не заменой творческого и аналитического процесса.

Подобный подход позволяет рассматривать ИИ не как угрозу дизайн-образованию, а как инструмент, требующий осознанного и этически выверенного применения.

В образовательной практике целесообразно структурирование использования генеративных ИИ-инструментов в соответствии с этапами проектного процесса. В частности, их применение рекомендуется ограничивать стадиями после первичного ручного эскизирования, что позволяет сохранить последовательность формирования проектной идеи. Существенным является требование обязательной аргументации обучающимися принятых решений, включая пояснение роли и степени использования ИИ в работе. В целях повышения прозрачности процесса проектирования оправдано внедрение практик его фиксации (эскизы, промежуточные варианты, текстовые пояснения), позволяющих проследить логику развития проекта. Кроме того, представляется необходимым формирование чётко регламентированных правил использования ИИ-инструментов в образовательной среде, обеспечивающих разграничение самостоятельной и алгоритмически сгенерированной составляющих работы.

Для более наглядного представления логики интеграции генеративных ИИ-инструментов в образовательный процесс может быть использована модель, отражающая особенности их применения на различных этапах проектирования (рис.).

Представленная модель демонстрирует дифференцированный характер использования ИИ: ограниченное — на этапе концептуального поиска, допустимое — на стадии разработки решений, расширенное — при визуализации и презентации, и вновь ограниченное — на этапе рефлексии и анализа. Такой подход позволяет сохранить последовательность формирования проектного мышления и обеспечить осознанное использование технологических инструментов.




Рис. Модель интеграции генеративных ИИ-инструментов в проектный процесс в дизайн-образовании

Заключение

Проведённое исследование показало, что внедрение генеративных технологий искусственного интеллекта в дизайн-образование оказывает существенное влияние на структуру и логику проектного процесса, а также на формирование профессиональных и этических установок обучающихся. Использование ИИ в образовательной практике сопровождается как расширением инструментальных возможностей, так и возникновением новых рисков, связанных с подменой самостоятельного проектного мышления алгоритмически сгенерированным результатом.

В ходе анализа установлено, что наибольшая уязвимость образовательного процесса проявляется на ранних этапах проектирования, в частности на стадии эскизирования и формирования концепции. Делегирование этих этапов генеративным системам снижает роль ручного эскиза как инструмента мышления, ограничивает развитие когнитивных и рефлексивных навыков и препятствует формированию устойчивых проектных связей, необходимых для профессионального становления дизайнера.

Выявлены ключевые этические проблемы, сопровождающие использование ИИ в дизайн-образовании, включая размывание авторства, перераспределение ответственности и сложности обеспечения академической добросовестности. Показано, что этические риски обусловлены не самим фактом применения ИИ, а характером его использования, отсутствием прозрачных критериев оценки и смещением акцента с процесса проектирования на визуально убедительный результат.

Обоснована целесообразность дифференцированного подхода к применению генеративных ИИ-инструментов на различных этапах дизайн-процесса. Осознанное и ограниченное использование ИИ может рассматриваться как допустимое при условии сохранения за обучающимся ответственности за формирование идеи, аргументацию проектных решений и демонстрацию логики их развития. В данном контексте ключевая роль отводится преподавателю как модератору и носителю профессиональных и этических стандартов, а не как формальному контролёру технологий.

Полученные выводы подчёркивают необходимость выработки чётких и недвусмысленных образовательных рамок, регулирующих использование генеративного ИИ в дизайн-образовании. Такие рамки должны быть ориентированы на сохранение самостоятельного проектного мышления, развитие профессиональной ответственности и минимизацию субъективного фактора оценивания.

Результаты исследования могут быть использованы в качестве теоретической основы для дальнейшего осмысления этических аспектов применения искусственного интеллекта в проектно-ориентированном обучении, а также для разработки методических рекомендаций, направленных на интеграцию ИИ в образовательную практику без утраты её фундаментальных целей.

Список литературы

- [1] **S. Chacko**, Exploring design education in the age of generative artificial intelligence: opportunities and challenges, 2024.
- [2] **S. Chellakkannu**, Embracing Generative AI in Design: Practical Implementations, Artificial Intelligence and Its Practical Applications in the Digital Economy, 2024, 189-206 p.
- [3] **Y. Liu, B. Xu, Y. Feng, P. Wu**, Analysis of the application of generative artificial intelligence in interior design education, Ain Shams Engineering Journal 16(12) (2025) 103757 p.
- [4] **A. F. C. A. Fathoni**, Leveraging Generative AI Solutions in Art and Design Education: Bridging Sustainable Creativity and Fostering Academic Integrity for Innovative Society, E3S Web Conf., 426, 2023, 01102
- [5] **M. Lindo, C. Cutad**, Impact of Generative AI on Self-Regulated Learning and Cognitive Offloading, IMCC Journal of Science 4 (2) (2024) 18-22.
- [6] **K. Jain, M. Kiran**, Rethinking Education in the Age of Generative AI: Cognitive Offloading, Assessment Reform, and Institutional Adaptation, 2025.
- [7] **E. Ahmedtelba, S. Mitereva, M. L. Ponce**, Critical integration of generative AI in higher education: Cognitive, pedagogical, and ethical perspectives, Journal of Research in Humanities and Social Science 25 (2025) 1-12.
- [8] **K. Lindgaard, H. Wesselius**, Once More, with Feeling: Design Thinking and Embodied Cognition She Ji: The Journal of Design, Economics, and Innovation 3 (2017) 83-92.
- [9] **C.M. Gray, M.A. Siegel**, Sketching Design Thinking: Representations of design in education and practice. Design and Technology Education: An International Journal 19(1) (2014) 48-61.
- [10] **E. Sung, T. R. Kelly, J. Han**, Influence of sketching instruction on students' design cognition. Journal of Engineering Design 30 (6046) (2019) 1-28.
- [11] **A. Freimane**, Design Thinking – From Post-Its to Fingertips: Rethinking Embodied Cognition in Design. In: Proceedings of the 27th International Conference on Engineering and Product Design Education, 2025, pp.157-162.
- [12] **A. Kofinas, et al.**, The impact of generative AI on academic integrity of authentic assessments. British Journal of Educational Technology, 2025.

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԲԱՐՈՑԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԵՐԸ
ԴԻԶԱՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ

Ալեքսանդրյան Գայանե Արտաշեսի

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

gayaalexandryan@gmail.com

Արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառումը դիզայնի ոլորտում էական ազդեցություն ունի ինչպես նախագծման գործընթացի, այնպես էլ մասնագիտական կրթության վրա: Գեներատիվ ալգորիթմները և մեքենայական ուսուցման մեթոդների վրա հիմնված գործիքները կիրառվում են նախագծման գործընթացի տարբեր փուլերում՝ գաղափարի էսքիզավորումից մինչև նախագծային լուծումների ներկայացում: Կրթական միջավայրում դրանց օգտագործումը հաճախ ուղեկցվում է ստեղծագործական ինքնուրույնության սահմանափակմամբ և ալգորիթմիկորեն գեներացված արդյունքների վերարտադրությամբ, ինչն առաջացնում է բարոյագիտական և մասնագիտական խնդիրներ: Հոդվածի նպատակն է վերլուծել նախագծման ընթացքում արհեստական բանականության կիրառման բարոյագիտական տեսանկյունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ուսանողների ստեղծագործական ինքնուրույն մտածողության ձևավորման վրա: Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական աղբյուրների վերլուծություն, համեմատական և հայեցակարգային վերլուծության մեթոդներ: Արդյունքում բացահայտվել են հիմնական էթիկական ռիսկերը՝ կապված հեղինակային սահմանազատման, նախագծային որոշումների գիտակցվածության նվազման և դիզայների դերի վերափոխման հետ: Հիմնավորվել է դիզայնի կրթության մեջ արհեստական բանականության կիրառման բարոյագիտապես պատասխանատու և քննադատական մոտեցման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. արհեստական բանականություն, դիզայնի գործընթաց, դիզայնի կրթություն, բարոյագիտություն, ստեղծագործական ինքնուրույնություն, գեներատիվ տեխնոլոգիաներ, հեղինակություն, մասնագիտական պատասխանատվություն

ETHICAL ASPECTS OF ARTIFICIAL INTELLIGENCE USE IN DESIGN EDUCATION
AND DESIGN PROCESS

Gayane Aleksandryan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

gayaalexandryan@gmail.com

The application of artificial intelligence technologies in the field of design significantly influences both the design process and professional training. Generative algorithms and machine learning-based tools are increasingly employed at various stages of the design process, ranging from conceptual sketching to the presentation of project solutions. However, in educational contexts, their use is often accompanied by a

reduction in independent creative exploration and a shift towards the reproduction of algorithmically generated outcomes, thereby raising a number of ethical and professional concerns. The purpose of this article is to analyse the ethical aspects of the application of artificial intelligence in the design process, with particular attention to its impact on the formation of independent creative thinking among students. The research employs an analytical review of scholarly sources, comparative analysis, and conceptual examination. The results identify key ethical risks related to ambiguity of authorship, reduced awareness of design decision-making, and the transformation of the designer's role. However, these issues underscore the necessity of developing a responsible and critically grounded approach to the use of AI technologies in design education.

Keywords: *artificial intelligence, design process, design education, ethics, independent creative thinking, generative technologies, authorship, professional responsibility*

Ալեքսանդրյան Գայանե Արտաշեսի (ՀՀ, ք. Երևան) – ՃՀՀԱՀ, Դիզայնի տնօրեն, դասախոս,
(+374)44154747, gayaalexandryan@gmail.com
Александрян Гаяне Арташесовна (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дизайна, преподаватель,
(+374)44154747, gayaalexandryan@gmail.com
Aleksandryan Gayane (RA, Yerevan) – NUACA, department of Design, lecturer, (+374)44154747,
gayaalexandryan@gmail.com

Ներկայացվել է՝ 10.02.2026թ.

Գրախոսվել է՝ 09.03.2026.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

20-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արմենուհի Ալբերտի Ալեքսանյան՝ Լյուբա Վլադիմիրի Կիրակոսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

*aleksanyan.armenuhi@yandex.com

Հոդվածում ներկայացվում է Հայաստանի 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության կառավարման և պահպանության ոլորտում առկա արդի խնդիրների համալիրը: Վերլուծվում են տվյալ ժամանակաշրջանի ճարտարապետական կառույցների արժևորման առանձնահատկությունները, իրավական և կառավարչական մեխանիզմների արդյունավետությունը, ինչպես նաև մասնագիտական և հասարակական ընկալման դերակատարումը ժառանգության պահպանման գործընթացում: Քննարկվում են արագընթաց քաղաքաշինական զարգացումների, տնտեսական գործոնների և նորմատիվ-իրավական դաշտի անկատարության հետևանքով առաջացող սպառնալիքները: Հոդվածում ընդգծվում է միջգիտակարգային մոտեցումների, միջազգային փորձի կիրառման և համալիր ռազմավարությունների մշակման անհրաժեշտությունը՝ 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության պահպանության և կայուն կառավարման ապահովման նպատակով:

Բանալի բառեր. 20-րդ դարի ճարտարապետություն, մշակութային ժառանգություն, պահպանություն, կառավարման քաղաքականություն, քաղաքաշինություն

Ներածություն

20-րդ դարի ճարտարապետական ժառանգությունը Հայաստանի մշակութային միջավայրի կարևոր և միևնույն ժամանակ ամենախոցելի շերտերից է: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է սոցիալ-քաղաքական խորքային փոփոխություններով, արագացված քաղաքաշինական զարգացումներով և ճարտարապետական նոր գաղափարների ու ոճական որոնումների ձևավորմամբ՝ սկսած վաղ մոդեռնիզմից մինչև խորհրդային նեոկլասիցիզմ և ուշ մոդեռնիստական փորձարարություններ: Այդ ժառանգությունը ոչ միայն արտացոլում է դարաշրջանի գաղափարական, տեխնոլոգիական և գեղագիտական առանձնահատկությունները, այլև ձևավորել է Հայաստանի քաղաքների ներկայիս կերպարն ու տարածական ինքնությունը [1]:

20-րդ դարի ճարտարապետական ժառանգության արժևորման և պահպանության խնդիրները պայմանավորված են ոչ միայն իրավական կամ տնտեսական գործոններով, այլև հասարակական ընկալման առանձնահատկություններով: Մասնագիտական գրականությունը ցույց է տալիս, որ ժամանակակից (մոդեռնիստական) ճարտարապետությունը հաճախ չի ընկալվում հասարակության կողմից որպես «իրական» կամ «արժեքավոր» ժառանգություն՝ ի տարբերություն ավելի հին, ավանդական հուշարձանների: Արդյունքում դրա արժեքը լիովին չի գնահատվում, և այն հաճախ դուրս է մնում հանրային ուշադրությունից ու պահպանության գործընթացներից:

Միևնույն ժամանակ 20-րդ դարի ճարտարապետական ժառանգությունը հաճախ բավարար չափով ուսումնասիրված և գնահատված չէ՝ մասամբ հենց իր «նոր» լինելու պատճառով, ինչն էլ

բարդացնում է դրա պահպանությունն ու ինտեգրումը ժամանակակից քաղաքային զարգացման գործընթացներում [2]:

Հողվածի նպատակն է վերլուծել Հայաստանում 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության կառավարման և պահպանության արդի մարտահրավերները՝ դիտարկելով թե տեսական, թե գործնական խնդիրները: Հողվածում փորձ է արվում ընդգծել այդ ժառանգության մշակութային նշանակությունը, բացահայտել առկա վտանգները և քննարկել հնարավոր մոտեցումներ ու ռազմավարություններ, որոնք կարող են նպաստել դրա կայուն պահպանությանը և ինտեգրմանը ժամանակակից քաղաքային զարգացման գործընթացներում:

20-րդ դարի ճարտարապետական ժառանգությունը հանդիսանում է ժամանակակից մշակութային ինքնության ձևավորման կարևոր բաղադրիչ՝ արտացոլելով հասարակական, քաղաքական, տեխնոլոգիական և գեղարվեստական գործընթացների բարդ փոխազդեցությունը: Հայաստանի Հանրապետությունում այս ժառանգությունն առանձնանում է իր բազմաշերտ բնույթով՝ ընդգրկելով խորհրդային մոդեռնիզմի, նեոկլասիցիզմի, կոնստրուկտիվիզմի և տեղական ճարտարապետական ավանդույթների յուրահատուկ սինթեզը: Սակայն, ի տարբերություն ավելի վաղ պատմական ժամանակաշրջանների հուշարձանների, 20-րդ դարի ճարտարապետությունը երկար ժամանակ դուրս է մնացել ժառանգության պահպանության համակարգված քաղաքականության և հանրային ընկալման կենտրոնից [3]:

Վերջին տասնամյակներում Հայաստանի արագ քաղաքաշինական զարգացումները, սոցիալ-տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական և կառավարչական մեխանիզմների անկատարությունը լուրջ սպառնալիքներ են ստեղծում 20-րդ դարի ճարտարապետական արժեքների պահպանության համար: Շատ շենքեր ենթարկվում են ֆիզիկական քայքայման, գործառության փոփոխությունների կամ ամբողջական ոչնչացման՝ առանց մասնագիտական գնահատման և փաստագրման [4]:

Հողվածի նպատակն է բացահայտել Հայաստանի 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության պահպանության հիմնական խնդիրները, գնահատել գործող իրավական և ինստիտուցիոնալ շրջանակները, ինչպես նաև առաջարկել հնարավոր մոտեցումներ և ռազմավարական ուղղություններ, ուղղված այս ժառանգության կայուն պահպանությանը և ժամանակակից զարգացման գործընթացներում դրա արդյունավետ ինտեգրմանը:

Հետազոտության գիտական նորույթը այն է, որ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվում և համակարգվում են 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության պահպանության հիմնախնդիրները՝ հաշվի առնելով ժամանակակից քաղաքաշինական զարգացումները, սոցիալ-մշակութային փոխակերպումները և տեխնոլոգիական փոփոխությունները: Հետազոտության շրջանակում՝

- վերաիմաստավորվում է 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության արժեքային համակարգը՝ ընդգծելով ոչ միայն պատմամշակութային, այլև գաղափարական և նորարարական նշանակությունը,
- առաջարկվում են գնահատման նոր չափանիշներ՝ հատկապես մոդեռնիստական և հետմոդեռնիստական կառույցների համար,
- բացահայտվում են պահպանության գործընթացում առկա իրավական, կառավարչական և հանրային ընկալման խնդիրները,

- մշակվում են պահպանության և վերաօգտագործման արդիական մեխանիզմներ՝ համադրելով միջազգային փորձը տեղական առանձնահատկությունների հետ:

Հետազոտությունը նպաստում է 20-րդ դարի ճարտարապետության պահպանության տեսական և գործնական հիմքերի զարգացմանը՝ առաջարկելով նոր մոտեցումներ, որոնք կարող են կիրառվել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

Նյութեր և մեթոդներ

Հետազոտությունը հիմնված է միջգիտակարգային մոտեցման վրա՝ համադրելով ճարտարապետության պատմության, մշակութային ժառանգության պահպանության և քաղաքաշինական կառավարման ոլորտների տեսական և կիրառական մեթոդները:

Սա հնարավորություն է տվել բացահայտել 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության պահպանության համակարգային խնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղղությունները:

Ուսումնասիրության նյութերը ներառում են ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային աղբյուրներ, որոնք հնարավորություն են տալիս համակողմանիորեն գնահատել 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության կառավարման և պահպանության խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Ընտրված դեպքերին վերաբերող տվյալները ներառում են շենքերի կառուցման ժամանակագրությունը, հեղինակային պատկանելիությունը, գործառության փոփոխությունները և պահպանվածության ներկայիս մակարդակը: Հետազոտությունները թույլ են տվել բացահայտել ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալ-քաղաքաշինական գործոնները, որոնք ազդում են տվյալ օբյեկտների պահպանության վրա:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են բազմազան աղբյուրներ՝ ապահովելու 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության պահպանության խնդիրների բազմակողմանի ուսումնասիրությունը:

Հետազոտության հիմնական նյութական բազան կազմվել է հետևյալ աղբյուրներից.

- 20-րդ դարի ճարտարապետական օբյեկտների վերաբերյալ պատմական և արխիվային փաստաթղթեր (նախագծեր, շինարարական փաստաթղթեր, քաղաքաշինական պլաններ),
- գիտական հոդվածներ, մենագրություններ և մասնագիտական հրատարակություններ ճարտարապետության և ժառանգության պահպանության ոլորտներից:

Հետազոտության իրականացման համար կիրառվել են հետևյալ մեթոդները.

- **պատմավերլուծական մեթոդ**՝ 20-րդ դարի ճարտարապետական զարգացման փուլերի և պահպանության խնդիրների պատմական համատեքստի բացահայտման համար,
- **համեմատական վերլուծության մեթոդ**՝ տարբեր երկրներում և տարածաշրջաններում կիրառվող պահպանության մոտեցումների համեմատման նպատակով,
- **դաշտային դիտարկման մեթոդ**՝ առկա ճարտարապետական կառույցների ֆիզիկական վիճակի գնահատման համար,
- **փաստաթղթային վերլուծություն**՝ նորմատիվ ակտերի, վերականգնման նախագծերի և քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով,

- **համակարգային մոտեցում՝** ճարտարապետական ժառանգության պահպանության խնդիրների դիտարկման՝ որպես սոցիալական, մշակութային և տեխնիկական գործոնների փոխկապակցված համակարգ:

Կիրառվել են որակական վերլուծության մեթոդներ, որոնք նպաստել են արդի մարտահրավերների ձևակերպմանը և հնարավոր լուծումների առաջարկմանը: Ստացված տվյալների սինթեզն իրականացվել է, նպատակ ունենալով ձևավորել գիտականորեն հիմնավորված եզրահանգումներ և առաջարկություններ՝ ուղղված 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության արդյունավետ կառավարմանը և պահպանությանը Հայաստանի պայմաններում:

Արդյունքներ և քննարկում

Երիտասարդական պալատի ստեղծումն ու քանդումը:

Երևանի ամենանշանավոր խորհրդային մոդեռնիստական կառույցներից մեկն էր Երիտասարդական պալատը, որը, կառուցված լինելով 1970-ականներին, ուներ յուրահատուկ ծավալատարածական լուծումներ և ծառայում էր որպես հասարակական և մշակութային կենտրոն: Շենքը հայտնի էր «Կուկուռուզնիկ» մականունով՝ իր յուրահատուկ ձևի պատճառով և նման էր եգիպտացորենի կոճին: Այն 1970-ականների խորհրդային մոդեռնիզմի ամենատպալուրիչ օրինակներից էր և աչքի էր ընկնում իր համարձակ, ֆուտուրիստական ճարտարապետությամբ: Այն գտնվում էր քաղաքի բարձրադիր հատվածում և երկար ժամանակ ծառայում էր որպես բազմաֆունկցիոնալ կենտրոն՝ ներառելով հյուրանոց, ռեստորան, համերգասրահներ և ժամանցային տարածքներ: Շենքի նախագծման հեղինակներն էին Արթուր Թարխանյանը, Սպարտակ Խաչիկյանը և Հրաչյա Պողոսյանը: Նրանք խորհրդային Հայաստանի նշանավոր ճարտարապետներից էին և համատեղ ստեղծել են մի շարք կարևոր կառույցներ Երևանում: Երիտասարդական պալատը նրանց ամենահայտնի մոդեռնիստական նախագծերից մեկն էր (նկ. 1): Երևանի Երիտասարդական պալատի պատմությունն իսկապես հաճախ ներկայացվում է որպես խորհրդանշական օրինակ, թե ինչպես կարող է քաղաքը կորցնել իր ինքնության մի կարևոր շերտ: Այն համարվում էր ոչ միայն ճարտարապետական, այլև մշակութային կարևոր կենտրոն: 2005–2007 թթ. այն ապամոնտաժվեց՝ պաշտոնապես հիմնավորվելով շենքի վթարային տեխնիկական վիճակով, վաճառվեց մասնավոր ներդրողի նոր կառուցապատման ծրագրերի համար, քանդվել է 2006թ.-ին (նկ.2), [5]: Այս դեպքը հաճախ դիտարկվում է որպես մշակութային ժառանգության կորստի օրինակ՝ պայմանավորված քաղաքաշինական և ներդրումային շահերով:

Սակայն շատ ճարտարապետներ, քաղաքագետներ և մշակութաբաններ այս որոշումը քննադատեցին՝ նշելով, որ.

- շենքը հնարավոր էր վերանորոգել և հարմարեցնել ժամանակակից պահանջներին,
- այն ուներ բարձր ճարտարապետական և պատմամշակութային արժեք:

Այս դեպքը հաճախ համեմատվում է համաշխարհային այնպիսի օրինակների հետ, երբ մոդեռնիստական ժառանգությունը թերագնահատվել է և ոչնչացվել՝ հետագայում գնահատվելով որպես կորուստ: Այսօր այդ տարածքը երկար ժամանակ մնացել է անորոշ կարգավիճակում, և խոստացված նոր կառուցապատումը տարիներ շարունակ չի իրականացվել:

Այս պատմությունը կարևոր հարցեր է բարձրացնում՝

- ինչպես հավասարակշռել զարգացումն ու ժառանգության պահպանումը,
- ինչ չափանիշներով պետք է գնահատել «վթարային» շենքերը,
- ով է որոշում քաղաքի ճարտարապետական ապագան:



**Նկ. 1. Երիտասարդական պալատը՝
կառուցված 1970-ականներին**

**Նկ. 2. Ամբողջությամբ քանդված
2004–2007 թթ. [5]**

Արդյունքում՝ չիրականացվեց համարժեք մասնագիտական գնահատում դրա պահպանման հնարավորության վերաբերյալ, չկատարվեց ամբողջական փաստագրում, չիրականացվեց դրա տեղում նախատեսված նախագիծը, տարածքը մնաց անօգտագործելի:

Այս դեպքը հաճախ ներկայացվում է որպես խորհրդանշական օրինակ այն բանի, թե ինչպես 20-րդ դարի արժեքավոր մոդեռնիստական շենքերը կարող են կորսվել տնտեսական շահերի գերակայության և կառավարման թերությունների հետևանքով:

Երիտասարդական պալատի օրինակը ցույց է տալիս մի շարք համակարգային խնդիրներ՝

- իրավական դաշտի անկատարություն (պաշտպանության մեխանիզմների բացակայություն կամ անարդյունավետություն),
- քաղաքաշինական որոշումների ոչ թափանցիկություն,
- մասնագիտական գնահատման և հանրային քննարկման բացակայություն:

20-րդ դարի ճարտարապետական ժառանգությունը Հայաստանում ոչ միայն չի պահպանվում, այլ հաճախ վերանում է առանց պատշաճ փաստագրման և գիտական գնահատման [4]:

Միաժամանակ, առկա է մասնագիտական դիսկուրսի և գիտական հետազոտությունների սահմանափակ ծավալ, ինչը խոչընդոտում է արդյունավետ կառավարման և պահպանության ռազմավարությունների մշակմանը:

Հանրապետության հրապարակ շրջակայքի վարչական շենքերի համալիրը – ներկայացնում է խորհրդային շրջանի քաղաքաշինական ամբողջական լուծում, որտեղ նկատվում են ինչպես պահպանության, այնպես էլ մասնակի վերափոխումների գործընթացներ: Հանրապետության հրապարակը Երևանի կենտրոնական հրապարակն է՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքի քաղաքացիական և վարչական կյանքի սիրտը: Այն հայտնի է իր ճարտարապետական համադրությամբ, երգող շատրվաններով և պետական կարևոր կառույցների դասավորությամբ շուրջպտույտ ձևով: Հրապարակը նախագծել է Ալեքսանդր Թամանյանը՝ որպես Երևանի գլխավոր քաղաքաշինական առանցք: Այն բաղկացած է շրջանաձև կենտրոնից և հարթ եզրային

հատվածից, որի սալահատակը հիշեցնում է հայկական գորգի նախշ: Շենքերը կառուցված են վարդագույն և սպիտակ տուֆից, իսկ հիմքերը՝ մուգ բազալտից: Կենտրոնական հատվածում տեղակայված են երգող շատրվանները՝ գիշերային լուսային և երաժշտական շոուով: Հրապարակի շուրջը գտնվում են Հայաստանի կառավարության շենքը, Ազգային պատկերասրահը և Պատմության թանգարանը, ինչպես նաև Արմենիա Մարիոթ Հոթել Երևան: Այստեղ են անցկացվում պետական արարողություններ, հանրահավաքներ և ազգային տոնական միջոցառումներ:

Ներկայումս Հանրապետության հրապարակը ձևավորում են հինգ կարևոր ու տպավորիչ շենքեր՝ կառուցված 1920-1950-ականներին: Աջ կողմում Կապի և արհմիությունների շենքն է. այս շենքում է այսօր գործում ՀՀ Կապի և տրանսպորտի նախարարությունը: Անմիջապես վեր ՀՀ Կառավարության 1-ին շենքն է՝ մեծ աշտարակ-ժամացույցով. նախագծել է ճարտարապետ Գ. Թամանյանը: Այս հոյակերտ շինությունը այսօր էլ ՀՀ Կառավարության նստավայրն է: Ազգային ներդաշնակ համադրությունները չեն խանգարել ունենալ միանգամայն դասական մոնումենտալ ճարտարապետություն: Իսկ տուֆի գունային համադրությունների շնորհիվ այն բացարձակապես չի ճնշում իր մոնումենտալությամբ:

Հրապարակը կառուցապատող ճարտարապետներն իրենց առջև խնդիր էին դրել ստանալ մայրաքաղաքի գլխավոր հրապարակին հարիր մոնումենտալ ամբողջական տարածական հորինվածք: Այդ խնդիրը լուծվել էր հաջողությամբ և հրապարակն իրավամբ պատվավոր տեղ ուներ ոչ միայն խորհրդային հանրապետությունների, այլ նաև աշխարհի լավագույն հրապարակների կողքին: Մակայն, Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո (1991թ.) հրապարակի համայնապատկերում վեր խոյացած բարձրահարկ կառուցապատումը որոշ չափով խաթարել է այդ տարածական հորինվածքի միասնական կերպարը և այն որոշակիորեն կորցրել է իր ամբողջական ընկալումը:

Հանրապետության հրապարակը խորհրդանշել է Հայաստանի պետական ինքնության և անկախության: Խորհրդային շրջանում այն հայտնի էր որպես Լենինի հրապարակ, սակայն 1991-ին վերանվանվեց ի պատիվ անկախ Հայաստանի Հանրապետության (նկ. 3, 4), [6]: Այսօր այն համարվում է ոչ միայն զբոսաշրջային կենտրոն, այլև ազգային հավաքատեղի՝ միավորելով մշակութային և քաղաքական նշանակությունը:



Նկ. 3. Խորհրդային շրջանում այն հայտնի էր որպես Լենինի հրապարակ



Նկ. 4. Հանրապետության հրապարակ շրջակայքի վարչական շենքերի համալիր [6]

Հետագոտության ընթացքում իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության պահպանությունը հանդիսանում է բազմաշերտ և բարդ գործընթաց, որը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով:

20-րդ դարի պատմական հուշարձանների պահպանության մոտեցումները տարբեր երկրներում ձևավորվել են քաղաքական, մշակութային և տնտեսական պայմանների ազդեցությամբ: Իտալիայի և Հայաստանի օրինակները ցույց են տալիս ինչպես նմանություններ, այնպես էլ էական տարբերություններ:

Իտալիայի և Հայաստանի համեմատությունը ցույց է տալիս, որ 20-րդ դարի ժառանգության պահպանությունը կախված է ոչ միայն նյութական ռեսուրսներից, այլ նաև պատմական հիշողության ընկալումից, պետական քաղաքականությունից, հասարակության կրթվածությունից: Իտալիան ավելի հաջող է ինտեգրել իր 20-րդ դարի ժառանգությունը ժամանակակից կյանքում, մինչդեռ Հայաստանում այս գործընթացը դեռ զարգացման փուլում է: Սակայն աճող հետաքրքրությունը և միջազգային փորձի կիրառումը կարող են եսպես բարելավել իրավիճակը:

Իտալիայում հասարակությունը մեծապես գիտակցում է նույնիսկ 20-րդ դարի ժառանգության արժեքը: Հայաստանում նկատվում է փոփոխվող պատկեր՝ աճող հետաքրքրություն խորհրդային մոդեռնիզմի նկատմամբ, երիտասարդ սերնդի ներգրավվածություն: 20-րդ դարի առաջին կեսում, հատկապես Բենիտո Մուսոլինիի իշխանության տարիներին, Իտալիայում կառուցվեցին բազմաթիվ պետական շենքեր՝ մոնումենտալ և ռացիոնալիստական ոճով: Օրինակ՝ EUR թաղամասը (**Esposizione Universale Roma**) յուրահատուկ թաղամասերից է, որը խիստ տարբերվում է քաղաքի պատմական կենտրոնից: EUR թաղամասի սկզբնական կառուցվածքը եղել է՝ լայն ուղիղ պողոտաներով, խիստ սիմետրիկ պլանավորմամբ և մեծ կանաչ տարածքներով: 1940-ականներին այն դեռ մասամբ կառուցման փուլում էր, քանի որ նախատեսված էր 1942-ի համաշխարհային ցուցահանդեսի համար, որը չկայացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով: 1950–60-ականներին արդեն ձևավորվում են բնակելի զանգվածներ՝ շրջապատված վարչական ու մոնումենտալ շենքերով (նկ. 5): EUR-ը նախագծվել էր որպես «իդեալական քաղաք»՝ համատեղելով դասական հռոմեական ոճը և 20-րդ դարի ռացիոնալիստական ճարտարապետությունը: Բնակելի թաղամասերը հաճախ տեղակայված էին խոշոր պետական ու ցուցադրական շենքերի շուրջ՝ ստեղծելով լայն, բաց և կարգավորված տարածքներ: Այն գտնվում է Հռոմի հարավային հատվածում և այսօր հանդիսանում է բիզնես և վարչական կենտրոն, բնակելի թաղամաս, ճարտարապետական կարևոր համալիր (նկ. 6) [7]:



Նկ. 5. EUR թաղամասի քաղաքային տեսարաններ (1940–1960-ականներ)



Նկ. 6. Հռոմի արևմտյան մասում գտնվող EUR թաղամասի բնակելի շրջաններ [7]

Հայտնի է իր յուրահատուկ ոճով՝ լայն պոդոտաներ և սիմետրիկ պլանավորում, մեծ, մոնումենտալ շենքեր, **ռացիոնալիզմ, հին հռոմեական դասական ոճի համադրություն:**

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են մի շարք հիմնարար խնդիրներ.

Իրավական և ինստիտուցիոնալ թերի համակարգեր.

Գործող օրենսդրությունը հիմնականում ձևավորվել է ավելի վաղ ժամանակաշրջաններում, երբ մշակութային ժառանգություն ասելով հիմնականում նկատի էին ունենում հնագույն և միջնադարյան հուշարձանները: Այդ պատճառով չափանիշները՝ հնության, բացառիկության կամ «պատմական արժեքի» վերաբերյալ, հաճախ չեն հարմարեցված 20-րդ դարի ժառանգությանը, որը կարող է չունենալ «հնության» գործոնը, բայց ունենալ բարձր ճարտարապետական, քաղաքաշինական կամ սոցիալ-մշակութային արժեք:

Բացակայում են հստակ մեթոդաբանական մոտեցումներ, որոնք թույլ կտան գնահատել նորագույն շրջանի կառույցները: Օրինակ, 20-րդ դարի շենքերի արժեքը հաճախ կապված է ոչ միայն դրանց գեղարվեստական հատկանիշների, այլև տեխնոլոգիական նորարարությունների, գաղափարական նշանակության կամ տվյալ ժամանակաշրջանի հասարակական կյանքի արտացոլման հետ [8]: Այս բազմաշերտությունը դժվարացնում է միասնական չափանիշների սահմանումը: Հասարակական ընկալումը ևս դեր ունի. 20-րդ դարի շատ կառույցներ դեռևս չեն ընկալվում որպես «ժառանգություն», այլ դիտարկվում են որպես հին, բայց փոխարինելի շենքեր: Սա նվազեցնում է դրանց պահպանության նկատմամբ քաղաքական կամքը և նպաստում է օրենսդրական բացերի պահպանմանը:


Արդյունքում՝ հստակ չափանիշների և արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությունը բերում է նրան, որ 20-րդ դարի բազմաթիվ արժեքավոր կառույցներ չեն ընդգրկվում պահպանության պետական ցանկերում, ենթարկվում են փոփոխությունների կամ քանդման, և կորում է տվյալ ժամանակաշրջանի մշակութային շերտը [9]:

Միջազգային մակարդակում մշակութային ժառանգության չափանիշները սկզբնապես ձևակերպվել են լայն և ընդհանուր ձևով՝ առանց հատուկ տարբերակման ժամանակաշրջանների միջև: Օրինակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. կոնվենցիան սահմանում է, որ մշակութային ժառանգություն են «մոնումենտները, շինությունների խմբերը և տարածքները, որոնք ունեն բացառիկ համընդհանուր արժեք» պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից: Սակայն այստեղ **չկան կոնկրետ չափանիշներ 20-րդ դարի ժառանգության առանձնահատկությունների համար**, ինչպիսիք են տեխնոլոգիական նորարարությունը կամ արդիական շարժումների ազդեցությունը: Նույն միջազգային կառույցների փաստաթղթերում շեշտվում է, որ պետությունները պետք է **հարմարեցնեն կամ ստեղծեն օրենսդրություն**, որպեսզի ապահովեն ժառանգության պաշտպանությունը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջարկություններից մեկում նշվում է, որ անհրաժեշտ է «հարմարեցնել գործող օրենքները կամ ընդունել նորերը»՝ պատմական տարածքների պահպանության համար:

20-րդ դարի ժառանգության գնահատման բարդությունն ընդունված է նաև պրակտիկայում: Օրինակ, 20-րդ դարի ճարտարապետությունն (Ֆրենկ Լլոյդ Ռայթի գործերը) ընդգրկվում է համաշխարհային ժառանգության ցանկում ոչ թե «**հնության**», այլ **նորարարության, տեխնոլոգիական լուծումների և համաշխարհային ազդեցության** հիման վրա:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության հանձնաժողովը կուսումնասիրի ականավոր ճարտարապետ Ֆրենկ Լլոյդ Ռայթի նախագծած 10 կառույցները, որոնք առաջադրվել են

«համաշխարհային ժառանգության» ճանաչվելու համար: Ամերիկյան այս գանձերը՝ տներ, թանգարաններ և պաշտամունքի վայրեր, դասվում են ժամանակակից ճարտարապետության ամենախորհրդանշական, համարձակ և ազդեցիկ նմուշների շարքին: ԱՄՆ-ի կողմից առաջադրված «Ֆրենկ Լոյդ Ռայթի 20-րդ դարի ճարտարապետության հիմնական գործեր» փաթեթում ներառված էին հետևյալ շինությունները. *Unity Temple (Բլինդյու, Օուք Պարկ)*, *Frederick C. Robie House (Չիկագո)*, *Taliesin (Վիսկոնսին)*, *Hollyhock House (Լոս Անջելես)*, *Fallingwater (Փենսիլվանիա)*, *Herbert and Katherine Jacobs House (Վիսկոնսին)*, *Taliesin West (Արիզոնա)*, *Solomon R. Guggenheim Museum (Նյու Յորք)*, *Pauganվեցին՝ Price Tower (Օկլահոմա)*, *Marin County Civic Center (Կալիֆոռնիա)*: Սկզբում առաջադրվել էր 10 կառույց (նկ. 7) [10]: Սակայն երկար քննարկումներից հետո վերջնական տարբերակում մնաց 8 կառույց, որոնք 2019թ. ընդգրկվեցին **ՅՈՒՆԵՍԿՕ-ի** Համաշխարհային ժառանգության ցանկում:



Նկ. 7. Ֆրենկ Լոյդ Ռայթի նախագծած 10 կառույցները
(ընդգրկված ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում) [10]

Ժամանակակից (մոդեռնիստական) ժառանգության օրինակներում (օր. Բաուհաուսի շենքերը) ընդգծվում է, որ դրանց արժեքը կապված է **գաղափարական և մշակութային շարժումների ազդեցության հետ**, ինչը նույնպես պահանջում է հատուկ գնահատման չափանիշներ: Եթե նման չափանիշներ չկան, ապա այդ կառույցները կարող չեն չընկալվել որպես «պահպանության արժանի»: Բաուհաուսը Շինարարության գեղարվեստական ձևաստեղծման բարձրագույն դպրոց է, որը հիմնադրվել է 1919 թ. ապրիլի 12-ին՝ Սաքսոնա-Վայմարյան կերպարվեստի բարձրագույն դպրոցի և Անրի Վան դե Վելդեի հիմնած Սաքսոնա-Վայմարյան կիրառական արվեստի դպրոցի միավորման արդյունքում: Դպրոցը ղեկավարում էր գերմանացի ճարտարապետ Վալտեր Գրոպիուսը, նա ապագան դիտեց որպես «շենք, որը միավորում է բոլոր բնագավառներն ու արհեստները, որը երկինք կբարձրանա անմիջապես միլիոնավոր աշխատողների ձեռքից՝ որպես նոր հավատքի բյուրեղյա խորհրդանիշ» (նկ. 8), [11]: Հիմնական գաղափարը եղել է՝ «**արվեստի և տեխնոլոգիայի միասնություն**», գործել է 1919–1933 թթ.: Մեծ ազդեցություն է ունեցել ժամանակակից ճարտարապետության և դիզայնի վրա:



Նկ.8. Բաուհաուսը՝ Շինարարության գեղարվեստական ձևաստեղծման բարձրագույն դպրոց Տշենք, որը միավորում է բոլոր բնագավառներն ու արհեստները՝ [11]

Միջազգային փաստաթղթերը ցույց են տալիս, որ ժառանգության ընդհանուր սահմանումները չափազանց լայն են, պետություններին թողնված է որոշակի չափանիշների մշակում, իսկ 20-րդ դարի ժառանգությունը պահանջում է առանձնահատուկ մոտեցումներ:

Այս հանգամանքների համադրությունը հիմնավորում է այն պնդումը, որ գործող օրենսդրական դաշտերում հաճախ բացակայում են հստակ չափանիշներ, ինչի պատճառով 20-րդ դարի արժեքավոր օբյեկտները կարող են դուրս մնալ պետական պահպանությունից:

20-րդ դարի բազմաթիվ կառույցներ կառուցվել են այն ժամանակ նորարարական համարվող, սակայն ոչ միշտ դիմացկուն և երկարաժամկետ պահպանման համար հարմար նյութերով, ինչի հետևանքով դրանց վերականգնումն ու պահպանումը հաճախ բարդ և խնդիրներով լի գործընթաց է դարձել:

Լայն տարածում ստացավ **երկաթբետոնը**, պողպատե կոնստրուկցիաները և արդյունաբերական արտադրության նոր նյութերը: Այս նյութերը սկզբում համարվում էին հեղափոխական՝ իրենց ամրության և էժանության պատճառով, սակայն ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ դրանք միշտ չէ, որ երկարատև են առանց խիստ պահպանման: Օրինակ, երկաթբետոնի դեպքում հաճախ տեղի է ունենում **կարբոնացում և քլորիդային քայքայում**, ինչի հետևանքով պողպատային ամրացումները ժանգոտում են և կորցնում կրողունակությունը: Մա հատկապես ընդգծված է ծովային կամ խոնավ միջավայրերում գտնվող շենքերում (օր.՝ արդյունաբերական և մոդեռնիստական կառույցներ):

Այդ ժամանակաշրջանի շատ նյութեր նախագծվել են ոչ թե դարերով պահպանվելու, այլ արագ արդյունաբերական կառուցման և տնտեսական արդյունավետության համար: Օրինակ, որոշ պանելային համակարգեր, բետոնե տարրեր կամ կոմպոզիտ նյութեր ժամանակի ընթացքում ենթարկվում են ճաքերի, ջերմային դեֆորմացիաների և կապերի թուլացման: Մա հատկապես բնորոշ է հետպատերազմյան մոդեռնիստական շինարարությանը:

20-րդ դարի կառույցների վերականգնումը բարդանում է նաև այն պատճառով, որ հաճախ բացակայում են նյութերի սկզբնական տեխնոլոգիական տվյալները կամ դրանք այլևս չեն արտադրվում նույն ձևով: Մա նշանակում է, որ վերականգնման ժամանակ անհրաժեշտ է կամ նոր նյութերի ադապտացում, կամ ամբողջական կոնստրուկտիվ լուծումների վերանայում, ինչը կարող է ազդել շենքի իսկության վրա:

Ամփոփելով՝ 20-րդ դարի նորարարական նյութերը մեծապես նպաստեցին ճարտարապետության զարգացմանը, սակայն դրանց ֆիզիկական քայքայման առանձնահատկությունները և տեխնիկական բարդություններն այսօր դարձնում են այդ կառույցների պահպանումը և վերականգնումը մասնագիտական բարձր մակարդակի և բարդ գործընթաց [12]:

Վերլուծության հիման վրա ստացված արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ հիմնական եզրակացությունները.

Անհրաժեշտ է վերանայել 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության գնահատման չափանիշները՝ ներառելով դրա գեղարվեստական, տեխնոլոգիական և սոցիալական նշանակությունը: 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության գնահատման ավանդական մոտեցումները (հիմնականում՝ պատմական արժեք, հեղինակություն, և պահպանվածության աստիճան) այսօր համարվում են անբավարար, քանի որ դրանք չեն ընդգրկում ժամանակակից ժառանգության բարդ բնույթը՝ հատկապես արդյունաբերական, մոդեռնիստական և սոցիալապես ուղղված կառույցների դեպքում:

Նոր գնահատման մոդել - Գեղարվեստական-ճարտարապետական արժեք

Ձևաբանական նորարարություն, գեղագիտական որակներ (գեղագիտական համակարգ, հորինվածք), ռճային նշանակություն (մոդեռնիզմ, բրուտալիզմ և այլն), հեղինակի ներդրում, տեխնոլոգիական և նյութական արժեք, կառուցման նորարար տեխնոլոգիաներ:

Նյութերի փորձարարական կիրառություն (բետոն, պողպատ, նախալարված համակարգեր), ինժեներական լուծումների յուրահատկություն, կառուցվածքային արդյունավետություն և կայունություն

Սոցիալ-մշակութային արժեք - Սոցիալական գործառույթ (բնակարան, արդյունաբերություն, հանրային տարածք), հիշողության և ինքնության դեր, քաղաքային միջավայրի վրա ազդեցություն, օգտագործողների համայնքային նշանակություն:

Մոդելի հիմնական գաղափարի նորարարությունն այն է, որ ժառանգությունը չի դիտարկվում միայն որպես «պահպանման օբյեկտ», այլ՝ որպես **բազմաշերտ համակարգ**, որտեղ արժեքը ձևավորվում է ոչ միայն պատմական հեռավորությամբ, այլ նաև տեխնոլոգիական առաջընթացով և սոցիալական կենդանի գործառույթով:

Պետք է խթանել հարմարվող վերաօգտագործման մոտեցումները, որոնք հնարավորություն կտան համատեղել պահպանությունը և ժամանակակից գործառույթային պահանջները: Հասարակության իրազեկվածության բարձրացումը և մասնագիտական կրթության զարգացումը կարող են էապես նպաստել ժառանգության պահպանությանը: 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության պահպանությունը պահանջում է համակցված մոտեցում՝ ներառելով գիտական, իրավական, սոցիալական և տնտեսական գործոնների ներդաշնակեցում:

Ընդհանուր առմամբ, ստացված արդյունքները հաստատում են, որ 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության պահպանության մարտահրավերները Հայաստանում չեն սահմանափակվում միայն նյութական խնդիրներով, այլ ներառում են արժեքային, ինստիտուցիոնալ և մշակութային մակարդակներ: Քննարկման արդյունքում ձևակերպված մոտեցումները կարող են հիմք հանդիսանալ նոր քաղաքականությունների և մեթոդաբանական ուղեցույցների մշակման համար՝ ուղղված այս ժառանգության ճանաչմանը, պաշտպանությանը և ժամանակակից հասարակական կյանքում դրա ակտիվ ներգրավմանը:

Իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ մշակել և ներդնել 20-րդ դարի ճարտարապետական օբյեկտների նույնականացման, արժևորման, դասակարգման և պահպանման կարգավիճակի տրամադրման հստակ, չափելի և թափանցիկ չափորոշիչներ: Սահմանել այդ չափորոշիչների կիրառման միասնական ընթացակարգեր՝ ներառելով մասնագիտական փորձաքննության, հանրային քննարկման և որոշումների կայացման մեխանիզմներ: Միաժամանակ ամրապնդել օբյեկտների իրավական պաշտպանությունը՝ հստակեցնելով դրանց պահպանման,

օգտագործման, վերականգնման և փոփոխման թույլատրելի սահմանները, ինչպես նաև վերահսկողության և պատասխանատվության գործիքակազմը:

Մասնագիտական կարողությունների և կրթության խթանում՝ զարգացնել մասնագիտական վերապատրաստման ծրագրեր ճարտարապետների, քաղաքաշինարարների և ժառանգության պահպանության մասնագետների համար, ինչպես նաև ընդգրկել թեման կրթական ծրագրերում:

Արդյունքները վկայում են, որ տվյալ ժամանակաշրջանի ճարտարապետությունը դեռևս ամբողջությամբ չի ընկալվում որպես լիարժեք մշակութային արժեք, ինչը զգալիորեն խոչընդոտում է դրա պահպանման արդյունավետ կազմակերպմանը, որն էլ ունի մի շարք հիմնավոր պատճառներ: Հասարակական գիտակցության մեջ մշակութային արժեք ասելով հաճախ պատկերացվում են ավելի հին՝ «դասական» կամ միջնադարյան հուշարձանները: Այդ շրջանի կառույցները հաճախ կապված են պատմական կամ քաղաքական բարդ փուլերի հետ, ինչը կարող է առաջացնել բացասական վերաբերմունք: Իրավական և ինստիտուցիոնալ դաշտում ևս առկա են բացեր՝ շատ շենքեր չունեն հուշարձանի կարգավիճակ, հետևաբար չեն գտնվում պետական պաշտպանության տակ [13]: Ներդրողների և սեփականատերերի համար հաճախ ավելի շահավետ է հին շենքի փոխարեն կառուցել նորը, քան պահպանել և վերականգնել գոյություն ունեցողը, հատկապես եթե վերջինս դեռևս չի գնահատվում որպես արժեք:

Այս բոլոր գործոնների համակցությունը հանգեցնում է նրան, որ տվյալ ժամանակաշրջանի ճարտարապետությունը չի ստանում բավարար ճանաչում և պաշտպանություն, ինչն էլ խոչընդոտում է դրա պահպանման արդյունավետ կազմակերպմանը:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանի Հանրապետությունում 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության կառավարումն ու պահպանությունը գտնվում են անցումային փուլում և բխվում են բազմաբնույթ մարտահրավերների: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տվյալ ժամանակաշրջանի ճարտարապետական արժեքների զգալի մասը շարունակում է մնալ իրավական անորոշության դաշտում՝ չունենալով համապատասխան պահպանական կարգավիճակ, ինչի հետևանքով դրանք առավել խոցելի են քաղաքաշինական ճնշումների և շուկայական շահերի նկատմամբ: Մինևույն ժամանակ, արձանագրվել է մասնագիտական և հանրային ընկալման պակաս, որը խոչընդոտում է 20-րդ դարի ճարտարապետության արժևորմանը որպես մշակութային ժառանգության անբաժանելի մաս:

Եզրակացությունների հիման վրա կարելի է պնդել, որ գործող կառավարման և պահպանության մեխանիզմները հիմնականում արձագանքային բնույթ ունեն և չեն ապահովում կանխարգելիչ ու երկարաժամկետ պաշտպանություն: Այս հանգամանքն ընդգծում է համակարգային մոտեցման անհրաժեշտությունը, որը կներառի իրավական, ինստիտուցիոնալ, մասնագիտական և կրթական բաղադրիչների համադրումը: Հատկապես կարևոր է 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության դիտարկումը ոչ միայն որպես անցյալի վկայություն, այլև որպես ժամանակակից քաղաքային միջավայրի զարգացման և ինքնության ձևավորման ակտիվ ռեսուրս:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ 20-րդ դարի ճարտարապետական ժառանգության արդյունավետ կառավարումը Հայաստանում պահանջում է համակողմանի և երկարաժամկետ ռազմավարություն, որը կխաբսխվի գիտական ուսումնասիրությունների, միջազգային փորձի և տեղական համատեքստի համադրման վրա: Նման մոտեցումը կարող է նպաստել ոչ միայն արժեքավոր ճարտարապետական օբյեկտների պահպանությանը, այլև կայուն քաղաքային զարգացման և մշակութային ինքնության հարստացմանը:

Գրականության ցանկ

- [1] **Ա. Աղասյան**, Հայաստանի խորհրդային շրջանի ճարտարապետությունը. ձևավորման և զարգացման հիմնախնդիրներ. ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան, Երևան, 2015:
- [2] **Doğan Huriye Armağan**, Perception of the Modern Movement in Architecture as Cultural Heritage, 2020, Vol. 16, no. 1, pp. 65 – 78, <https://doi.org/10.2478/mik-2020-0004>
- [3] **Neri, G.** The transformation of 20th-century heritage: a case study of the musealization of the Cité Frugés in Pessac. Archit. Struct. Constr. **5**, 41 (2025). <https://doi.org/10.1007/s44150-025-00160-4>
- [4] Կիրակոսյան Լ., Երևանի ճարտարապետական կերպարի պատմական զարգացումը, Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի 8, ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2021, էջեր 247-253:
- [5] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B5%D6%80%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BA%D5%A1%D5%AC%D5%A1%D5%BF#
- [6] <https://visityerevan.am/browse/culture-historical-buildings/am/>
- [7] **Ն.Է. Մխիթարյան**, Երեվանի հանրապետության հրապարակի ծավալատարածական հորինվածքի վերլուծություն ՃՇՀԱՀ գիտ. աշխ.1 (85), (2023) էջ 112-124:
- [8] <https://www.lejournaldesarts.fr/patrimoine/rome-aura-bientot-son-musee-de-lanthropocene-163742>, https://en.wikipedia.org/wiki/EUR,_Rome#cite_note-storia2-6
- [9] **V. Paperny**, Architecture in the Age of Stalin: Culture Two. Cambridge University Press., Cambridge, 2002.
- [10] **M. Petzet**, Principles of preservation: An introduction to the International Charters for Conservation and Restoration. ICOMOS, Munich, 2009.
- [11] <https://www.doi.gov/news/photos/10-buildings-by-frank-lloyd-wright-nominated-to-the-world-heritage-list>
- [12] <https://fastnews.am/sport/post/bavouhavous-legendar-dprvocy>
- [13] <https://escs.am/am/static/monuments?s=culture>

ПРОБЛЕМЫ СОХРАНЕНИЯ АРХИТЕКТУРНОГО НАСЛЕДИЯ АРМЕНИИ 20-ГО ВЕКА

Арменуи Альбертовна Алексанян*, Люба Владимировна Киракосян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

*aleksanyan.armenuhi@yandex.com

В статье рассматривается комплекс актуальных проблем в области управления и сохранения архитектурного наследия 20-го века в Армении. Анализируются особенности оценки архитектурных сооружений данного периода, эффективность правовых и управленческих механизмов, а также роль профессионального и общественного восприятия в процессе сохранения наследия. Обсуждаются угрозы, возникающие в результате стремительного городского развития, экономических факторов и недостаточности нормативно-правовой базы. В статье подчеркивается необходимость междисциплинарного подхода, применения международного опыта и разработки комплексных стратегий для обеспечения сохранения и устойчивого управления архитектурным наследием 20-го века.

Ключевые слова: архитектура 20-го века, культурное наследие, сохранение, управленческая политика, градостроительство

PROBLEMS OF PRESERVING THE ARCHITECTURAL HERITAGE OF 20TH-CENTURY ARMENIA

Armenuhi Aleksanyan*, Lyuba Kirakosyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**aleksanyan.armenuhi@yandex.com*

The article presents a comprehensive set of current issues in the management and preservation of Armenia's 20th-century architectural heritage. It analyzes the specific features of valuing architectural structures from this period, the effectiveness of legal and administrative mechanisms, as well as the role of professional and public perception in the heritage preservation process. The threats arising from rapid urban development, economic factors, and the imperfections of the regulatory and legal framework are discussed. The article emphasizes the need for interdisciplinary approaches, the application of international experience, and the development of comprehensive strategies to ensure the preservation and sustainable management of 20th-century architectural heritage.

Keywords: 20th-century architecture, cultural heritage, preservation, management policy, urban planning

Ալեքսանյան Արմենուհի Ալբերտի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Դիզայն ամբիոն, դասախոս, հայցորդ, (+374)94477434, aleksanyan.armenuhi@yandex.com, **Կիրակոսյան Լյուբա Վլադիմիրի, ճ.դ., պրոֆեսոր** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեսության, պատմության և ժառանգության ամբիոն, (+374)91775869, kirakosyanlyuba@gmail.com

Александян Арменуи Альбертовна (РА, г. Ереван) – НУАКА, кафедра Дизайна, преподаватель, соискатель, (+374)94477434, aleksanyan.armenuhi@yandex.com, **Киравосян Люба Владимировна, доктор архит., профессор** (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Теории, истории и наследия архитектуры, (+374)91775869, kirakosyanlyuba@gmail.com

Aleksanyan Armenuhi (RA, Yerevan) – NUACA, Chair of Design, lecturer, claimant, (+374)94477434, aleksanyan.armenuhi@yandex.com, **Kirakosyan Lyuba, Doctor of Science (Architecture), Professor** (RA, Yerevan) - NUACA, Chair of Theory, History and Heritage of Architecture, (+374)91775869, kirakosyanlyuba@gmail.com

Ներկայացվել է՝ 04.04.2026թ.

Գրախոսվել է՝ 25.04.2026թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԻԼԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արմենուհի Ալբերտի Ալեքսանյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ
aleksanyan.armenuhi@yandex.com

Հոդվածում վերլուծվում են ճարտարապետական ժառանգության պահպանության և կառավարման ժամանակակից ռազմավարությունները, պայմանավորված արագ քաղաքաշինական զարգացմամբ, գլոբալացմամբ և տեխնոլոգիական առաջընթացով: Քննարկվում են ոլորտի հիմնական մարտահրավերները՝ քաղաքաշինական ճնշում, իրավական մեխանիզմների անկատարություն, ֆինանսական սահմանափակումներ և հանրային իրազեկվածության պակաս: Հայաստանի Հանրապետությունում ճարտարապետական հարուստ ժառանգությունը բախվում է պահպանության և կառավարման լուրջ խնդիրների: Վերլուծվում են հայաստանյան որոշ օրինակներ և բացահայտվում ինստիտուցիոնալ ու կարգավորիչ համակարգերի առկա բացերը: Առաջարկվում է համալիր մոտեցում, հիմնված կայուն զարգացման սկզբունքների, թվային փաստագրման տեխնոլոգիաների, պատմական շենքերի հարմարվող վերօգտագործման և հանրային ակտիվ մասնակցության վրա: Ճարտարապետական ժառանգության արդյունավետ կառավարումը պահանջում է հավասարակշռված ռազմավարություն, որը միաժամանակ կապահովի մշակութային արժեքների պահպանությունը և դրանց ներդաշնակ ինտեգրումը ժամանակակից քաղաքային միջավայրում՝ նպաստելով երկարաժամկետ մշակութային և տնտեսական կայունությանը:

Բանալի բառեր. ճարտարապետական ժառանգություն, պահպանություն, կառավարում, կայուն զարգացում, թվայնացում

Ներածություն

Ճարտարապետական ժառանգությունը յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ինքնության առանցքային բաղադրիչներից է, որն արտացոլում է պատմական զարգացման փուլերը, գեղարվեստական մտածողությունը և կառուցողական ավանդույթները: Այն ոչ միայն անցյալի արժեքավոր վկայություն է, այլև ժամանակակից հասարակության սոցիալ-մշակութային և տնտեսական զարգացման կարևոր ներուժ [1]:

21-րդ դարում ճարտարապետական ժառանգության պահպանությունն ու կառավարումը բախվում են նոր և բազմաբնույթ մարտահրավերների, որոնք պայմանավորված են գլոբալացմամբ, արագ քաղաքաշինական զարգացմամբ, կլիմայական փոփոխություններով և տեխնոլոգիական առաջընթացով: Հատկապես զարգացող քաղաքներում նոր կառուցապատումների ինտենսիվությունը հաճախ հակասում է պատմական միջավայրի պահպանության պահանջներին՝ առաջացնելով արժեքների կորստի վտանգ:

Հայաստանի Հանրապետությունը, ունենալով հարուստ և բազմաշերտ ճարտարապետական ժառանգություն, սկսած հնագույն հուշարձաններից մինչև 19–20-րդ դարերի քաղաքաշինական շերտեր, կանգնած է պահպանության և կառավարման արդիականացման անհրաժեշտության առջև [2]: Վերջին տարիներին իրականացվել են որոշակի քայլեր, ուղղված օրենսդրական կարգավորման և պահպանական ծրագրերի իրականացմանը, սակայն դեռևս առկա են համակարգային խնդիրներ՝ կապված կառավարման արդյունավետության, ֆինանսավորման և հանրային ներգրավվածության հետ:

Այս համատեքստում հողվածի նպատակն է վերլուծել ճարտարապետական ժառանգության պահպանության և կառավարման ժամանակակից մոտեցումները, բացահայտել առկա հիմնախնդիրները և առաջարկել ռազմավարական ուղղություններ, որոնք կարող են նպաստել ոլորտի կայուն զարգացմանը:

Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է ճարտարապետական ժառանգության պահպանության և կառավարման ժամանակակից փուլի ռազմավարությունների վերախմաստավորմամբ՝ դրանք դիտարկելով ոչ միայն որպես առանձին հուշարձանների պահպանության ուղղված միջոցառումների համակցություն, այլ որպես բազմաշերտ և փոխկապակցված գործընթաց, որը ներառում է սոցիալ-տնտեսական, մշակութային արժեքների և քաղաքաշինական զարգացման համատեքստերը [3]: Միաժամանակ, առաջարկվում է ինտեգրված մոտեցում, որի շրջանակներում իրավական կարգավորումները, տնտեսական մեխանիզմները, տեխնոլոգիական նորարարությունները և սոցիալական գործոնները դիտարկվում են ոչ թե առանձին, այլ փոխազդող և փոխլրացնող համակարգի մեջ՝ ձևավորելով միասնական և արդյունավետ կառավարման մոդել: Այս մոդելի էությունն այն է, որ տարբեր ոլորտներ՝ իրավական, տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալական, չեն դիտարկվում առանձին-առանձին, այլ որպես փոխկապակցված և փոխլրացնող բաղադրիչներ մեկ միասնական համակարգի շրջանակում:

Խնդիրներ և բացթողումներ - Անբավարար վերահսկողություն, մասնագիտական կադրերի պակաս, ծրագրերի անկայունություն:

Առաջարկվող ռազմավարություն - Ժամանակակից փուլում առաջարկվում է կիրառել հետևյալ հիմնական ուղղությունները. օրենսդրական բարեփոխումներ, թվային տվյալների միասնական բազայի ստեղծում, հանրային-մասնավոր գործընկերության զարգացում, կրթական ծրագրերի ընդլայնում և կայուն տուրիզմի խթանում:

Նյութեր և մեթոդներ

Հետազոտության իրականացման համար կիրառվել է համակցված մեթոդաբանական մոտեցում, որը ներառում է տեսական, համեմատական և վերլուծական մեթոդների ամբողջություն, ուղղված ճարտարապետական ժառանգության պահպանության և կառավարման ժամանակակից ռազմավարությունների բացահայտմանը:

Հետազոտության հիմքում ընկած են՝

- միջազգային գիտական գրականություն, նվիրված ճարտարապետական ժառանգության պահպանության տեսությանը և պրակտիկային,
- իրավական և նորմատիվ փաստաթղթեր (ՀՀ օրենքներ, միջազգային կոնվենցիաներ և ուղեցույցներ),
- Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ փաստագրական և վիճակագրական տվյալներ,
- նախորդ հետազոտությունների արդյունքներ և փորձագիտական հրապարակումներ:

Ուշադրություն է դարձվել հայկական ճարտարապետական ժառանգության առանձին օրինակներին, որոնք դիտարկվել են որպես դեպքային ուսումնասիրություններ ոլորտում առկա խնդիրների և հաջողված փորձի բացահայտման նպատակով [4]:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

- **Վերլուծական մեթոդ**, հիմնված տեսական աղբյուրների և փաստաթղթերի համակողմանի ուսումնասիրության վրա, որի նպատակն է բացահայտել առկա հիմնական խնդիրները և բնորոշել զարգացման հիմնական միտումները,
- **Համեմատական մեթոդ**՝ միջազգային և տեղական փորձի համադրության և գնահատման նպատակով,
- **Դեպքային ուսումնասիրության մեթոդ**, որոշակի ճարտարապետական հուշարձանների պահպանության և կառավարման փորձի վերլուծության համար,
- **Համակարգային մոտեցում**՝ ժառանգության պահպանությունը դիտարկելով որպես բազմաշերտ և փոխկապակցված գործընթաց,
- **Դիտարկում և նկարագրական վերլուծություն**, առկա իրավիճակի գնահատման և հիմնախնդիրների ձևակերպման համար:

Այս մեթոդաբանական մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովել հետազոտության բազմակողմանիություն և ստանալ հիմնավորված եզրակացություններ, ուղղված ճարտարապետական ժառանգության պահպանության և կառավարման արդյունավետ ռազմավարությունների մշակմանը [5]:

Արդյունքներ և քննարկում

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ճարտարապետական ժառանգության պահպանության և կառավարման համակարգը ժամանակակից փուլում գտնվում է վերափոխման գործընթացում, պայմանավորված ինչպես գլոբալ, այնպես էլ տեղական գործոններով: Վերլուծությունը բացահայտում է, որ ոլորտում առկա խնդիրները կրում են համակարգային բնույթ և պահանջում են համալիր լուծումներ [6]:

Քաղաքաշինական ինտենսիվ զարգացումը, հատկապես Երևան քաղաքում, հանգեցնում է պատմական միջավայրի մասնատման և արժեքների կորստի: Ուսումնասիրությունները ցույց են

տալիս, որ առանց հստակ մշակված կառավարման ռազմավարության պատմական թաղամասերը կորցնում են իրենց ինքնությունը և դառնում մասնակիորեն ձևափոխված տարածքներ: Միննույն ժամանակ, առկա են նաև դրական օրինակներ, որտեղ իրականացվել են պահպանական և վերականգնողական ծրագրեր՝ համադրելով պատմական արժեքների պահպանումը և ժամանակակից օգտագործումը [7]:

Հաջորդ կարևոր արդյունքը վերաբերում է իրավական և ինստիտուցիոնալ համակարգերին: Թեև առկա են համապատասխան օրենքներ և կարգավորումներ, դրանց կիրառման արդյունավետությունը հաճախ սահմանափակ է: Հետազոտությունը ցույց է տալիս, որ վերահսկողական մեխանիզմների թուլությունը և կառավարման մարմինների միջև համագործակցության պակասը խոչընդոտում են պահպանական ծրագրերի լիարժեք իրականացմանը [8]:

Ֆինանսական գործունեությունը շարունակում է մնալ որոշիչ, պետական ֆինանսավորումը բավարար չէ՝ ապահովելու հուշարձանների ամբողջական պահպանությունը: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում պետական-մասնավոր գործընկերության զարգացումը, ինչպես նաև մշակութային տուրիզմի ներուժի արդյունավետ օգտագործումը [9]:

Հանրային մասնակցության դերը գնահատվում է որպես առանցքային:

Երբ տեղական համայնքները ներգրավված են պահպանության գործընթացում, ծրագրերը դառնում են ավելի կայուն և արդյունավետ, ինչի արդյունքում իրականացվում է.

- ծրագրերի ավելի երկարաժամկետ հաջողություն,
- համայնքի կողմից նախաձեռնությունների աջակցություն և պատասխանատվության աճ,
- բնական կամ մշակութային ներուժի ավելի արդյունավետ պահպանում,
- հակամարտությունների նվազում տեղացիների և ծրագրի իրականացնողների միջև,
- տեղական գիտելիքի օգտագործում, որը բարելավում է որոշումների որակը:


Քննարկման արդյունքում կարելի է փաստել, որ ճարտարապետական ժառանգության պահպանության ժամանակակից ռազմավարությունը պետք է հիմնված լինի բազմակողմանի մոտեցման վրա՝ ներառելով իրավական բարեփոխումներ, կառավարման արդյունավետ համակարգեր, տեխնոլոգիական նորարարություններ և հասարակության ակտիվ մասնակցություն: Միայն այսպիսի ինտեգրված մոտեցումը կարող է ապահովել ժառանգության պահպանության և զարգացման հավասարակշռությունը [10]:

Ժամանակակից մարտահրավերներ - Քաղաքաշինական ճնշում

Երևանում և այլ քաղաքներում ակտիվ կառուցապատումը հաճախ հանգեցնում է պատմական միջավայրի խաթարմանը: Օրինակ, Կոնդ թաղամասը, լինելով պատմական արժեքավոր միջավայր, դեռևս չունի ամբողջական վերականգնման և կառավարման ռազմավարություն (նկ. 3): Այժմ հիմնականում հետնախորշերից բաղկացած Կոնդը քաղաքաշինական մեծ խնդիր է Երևանի համար: Վիճակն օրհասական է նաև կոնդեցի ընտանիքներում, որոնք 21-րդ դարում շարունակում են ապրել կենցաղային ոչ բավարար պայմաններում: Կառավարությունը 2024թ. հունիսի

27-ի նիստում այս տներն ու հողատարածքները ճանաչեց հանրային գերակա շահ. տարածքը ներառում է «ՀայՓոստ»-ի գլխավոր մասնաշենքը, Կոնդ թաղամասը՝ մինչև Պոռշյան փողոցի սկզբնամաս: Ծրագրից դուրս են մնում միայն Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցին ու եկեղեցապատկան շինությունները:

Կոնդի վերակառուցման ծրագիր ներկայացրած ընկերությունը պատրաստ է ներդրումների. վերակառուցել Երևանի Կոնդ թաղամասն իր ինքնատիպ ոճով:



*Նկ. 3. Կոնդ թաղամասի լուսանկարներ՝
հին տներ, ժանգոտած տանիքներ, փլվող պատեր*

World Trade Center Yerevan համալիրի նախագծող է ընտրվել բրիտանական **Foster + Partners** ճարտարապետական ստուդիան: Որոշումն ընդունվել է խիստ և մրցակցային ընտրության արդյունքներով, ասվում է ընկերության հայտարարության մեջ (նկ. 4), [11]:



Նկ. 4. Կոնդ թաղամասի վերակառուցման առաջարկ [11]

Միջազգային բյուրոյի ընտրությունը դարձել է նախագծի իրականացման կարևոր փուլ: Ստուդիան, որը հիմնադրել է լեգենդար Նորման Ֆոսթեր-ը, ձևավորել է աշխարհում բազմաթիվ նշանավոր կառույցների տեսքը՝ մշակութային կենտրոններից մինչև երկնաքերեր:

Հիմնական խնդիրները սովորաբար նշվում են հետևյալ ուղղություններով.

Անհամակարգված սեփականություն և կառուցապատում

Կոնդում խառն են պետական, համայնքային և մասնավոր տները, ինչն անհնար է դարձնում միասնական վերակառուցման ծրագրի արագ իրականացումը: Շատ դեպքերում վերանորոգումները կատարվում են մասնավոր նախաձեռնությամբ՝ առանց ընդհանուր ճարտարապետական հսկողության:

Քաղաքաշինական տեսանկյունից այստեղ մի քանի փոխկապակցված խնդիր կա.

Պետական, համայնքային և մասնավոր գույքերի համատեղ գոյությունը նշանակում է, որ ցանկացած նախագիծ պահանջում է բազմակի համաձայնեցումներ: Մեկ շենքի կամ բակի ներսում անգամ կարող են լինել տարբեր սեփականատերեր, ինչը գործնականում «կանգնեցնում» մեծածավալ ծրագրերը:

Իրավական և փոխհատուցման բարդություններ - Վերակառուցման համար անհրաժեշտ է կամ բնակիչների վերաբնակեցում, կամ փոխհատուցում (գնահատումները տարբեր են, մարդիկ հաճախ չեն համաձայնում վաճառել, գործընթացը ձգձգվում է տարիներով): Սա քաղաքաշինական վերակառուցման ամենաբարդ հատվածներից մեկն է՝ իրավական և փոխհատուցման խնդիրները: Այն սովորական երևույթ է շատ երկրներում, երբ խոսքը վերաբերում է բազմաբնակարան կամ խիտ կառուցապատված տարածքների վերափոխմանը: Խնդիրը ոչ միայն ֆինանսական է, այլ **կառավարման և իրավական համակարգման**: Քանի դեռ այդ երեքը միասին չեն աշխատում, Կոնդի նման տարածքներում փոփոխությունները շարունակելու են լինել մասնակի ու անհամաչափ:

Պատմամշակութային արժեքների պահպանություն - Թաղամասի պատմական շերտը՝ նեղ փողոցները, հին տները և ճարտարապետական առանձնահատկությունները, հաճախ վտանգված են կամ աստիճանաբար կորում են՝ նոր կառուցապատման ճնշման տակ:

Ենթակառուցվածքների մաշվածություն - Ջրամատակարարում, կոյուղի, ճանապարհներ և կոմունալ համակարգերը հիմնականում հնացած են և պահանջում են համալիր վերազինում, առկա են քանդված կամ քայքայված քարաշեն տներ (ժանգոտած տանիքներ, փլվող պատեր, անբարեկարգ բակեր ու նեղ փողոցներ, շինարարական տարածքներ, որտեղ հին տներն արդեն քանդվել են): Կոնդը համարվում է Երևանի ամենահին թաղամասերից մեկը, բայց այսօր դրա մեծ մասը գտնվում է վատ վիճակում՝ «քայքայված տներ, երբեմն առանց ջեռուցման կամ ջրամատակարարման» (նկ. 3):

Ռազմավարական մոտեցման բացակայություն - Չնայած վերականգնման գաղափարները պարբերաբար քննարկվում են, երկարաժամկետ և ամբողջական գլխավոր հատակագծի բացակայությունը խոչընդոտում է դրանց հետևողական իրականացմանը: Երկարաժամկետ և ամբողջական գլխավոր հատակագծի բացակայությունը խանգարում է, որովհետև բացակայում է հստակ տեսլականը և առաջնահերթությունների սահմանումը, տարբեր ծրագրեր և նախաձեռնություններ իրականացվում են հատվածաբար և չհամակարգված, չկա գործողությունների հաջորդականություն և ժամանակացույց, ռեսուրսների (ֆինանսական, մարդկային) բաշխումը դառնում է ոչ արդյունավետ, ներգրավված կողմերի (պետություն, համայնք, մասնավոր հատված) միջև համակարգումը թուլանում է:

Իրավական և ինստիտուցիոնալ խնդիրներ - Չնայած ՀՀ-ում գործում են ժառանգության պահպանությանը վերաբերող օրենքներ, դրանց կիրառման մեխանիզմները հաճախ թերի են: Վերահսկողության և պատասխանատվության համակարգերը լիարժեք չեն գործում:

Ֆինանսական սահմանափակումներ - Պահպանական աշխատանքները պահանջում են զգալի ներդրումներ, մինչդեռ պետական և մասնավոր ֆինանսավորման աղբյուրները սահմանափակ են:

Հանրային իրազեկվածության պակաս - Հասարակության լայն շերտերում հաճախ բացակայում է ժառանգության արժեքի գիտակցումը, ինչը բարդացնում է պահպանման գործընթացը:

Ժամանակակից ռազմավարական մոտեցումներ - Համակարգային կառավարում

Ժառանգության պահպանությունը պետք է իրականացվի ինտեգրված կառավարման համակարգի միջոցով, որը ներառում է՝ պետական մարմինների և մասնավոր հատվածի համագործակցություն, երկարաժամկետ ռազմավարությունների մշակում, մշտադիտարկման մեխանիզմների ներդրում:

Կայուն զարգացում և հարմարվող վերօգտագործում - Պատմական շենքերի նոր ֆունկցիաներով օգտագործումը (օրինակ՝ մշակութային կենտրոններ, հյուրատներ) կարող է ապահովել դրանց պահպանությունը և տնտեսական կենսունակությունը:

Հանրային մասնակցություն - Համայնքների ներգրավումը կարևոր գործոն է: Օրինակ՝ տեղական նախաձեռնությունները կարող են նպաստել հուշարձանների պահպանությանը և վերականգնմանը:

Եզրակացություն

Ճարտարապետական ժառանգության պահպանության և կառավարման ժամանակակից ռազմավարությունը պահանջում է համալիր և ինտեգրված մոտեցում, որը միավորում է գիտական, տեխնոլոգիական, իրավական և հասարակական գործիքակազմերը:

Արդյունքում պարզվեց, որ հիմնական մարտահրավերներն են՝ քաղաքաշինական ճնշումը, իրավական և ինստիտուցիոնալ բացերը, ֆինանսական սահմանափակումները և հանրային մասնակցության պակասը: Հայաստանի համար կարևոր է համադրել միջազգային փորձը և տեղական առանձնահատկությունները՝ ստեղծելով կայուն և արդյունավետ համակարգ, որը կապահովի ժառանգության պահպանումն ապագա սերունդների համար: Հայաստանում մշակութային ժառանգության արդյունավետ պահպանումը հիմնված է պետական ու մասնավոր հատվածների համագործակցության, թվայնացման, պատմական շենքերի ադապտիվ վերօգտագործման և համայնքային մասնակցության վրա, ինչը ստեղծում է կայուն համակարգ՝ ժառանգությունը դարձնելով սոցիալ-տնտեսական զարգացման ռեսուրս:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն համալիր և բազմաշերտ ռազմավարության կիրառմամբ է հնարավոր ապահովել պատմական միջավայրի պահպանումը՝ համադրված ժամանակակից օգտագործման և կայուն զարգացման սկզբունքների հետ:

Այսպիսով, ժամանակակից ռազմավարությունը պետք է միաժամանակ պահպանման և զարգացվածության ուղեցույց հանդիսանա, ինչը կնպաստի մշակութային արժեքների փոխանցմանն ապագա սերունդներին և Հայաստանի ճարտարապետական ժառանգության երկարաժամկետ կայունությանը:

Գրականության ցանկ

- [1] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, գիրք 2, Երևան, 1948:
- [2] Վ.Մ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:
- [3] Յու. Սաֆարյան, Ջ. Մուրադյան, Ս. Թովմասյան, Մ. Դավթյան, Հայաստանի Հանրապետության թույլ յուրացված տարածաշրջանների քաղաքաշինության կայուն զարգացման ուղիները, Երևան, 2011:

- [4] **F.G. Matero**, Ethics and policy in conservation. Journal of the American Institute for Conservation 46(3) (2007) 169–175.
- [5] **A.P. Roders, R. Van Oers**, Bridging cultural heritage and sustainable development. Journal of Cultural Heritage Management and Sustainable Development 1(1) (2011) 5-14.
- [6] **F. Bandarin, R. Van Oers**, The Historic Urban Landscape: Managing Heritage in an Urban Century. Wiley-Blackwell, 2012, <<https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000228283>>.
- [7] **ՀՀ օրենքը** Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին, 1998:
- [8] **J. Jokilehto**, International Charters on Urban Conservation: Some Thoughts on the Principles. Journal of Architectural Conservation 13(1) (2007) 7–17.
- [9] **UNESCO World Heritage Centre**. Operational Guidelines for the Implementation of the World Heritage Convention. UNESCO, 2021.
- [10] **ՀՀ կառավարություն**, Պատմամշակութային ժառանգության պահպանության պետական քաղաքականություն 2016, <<https://www.irtek.am/views/act.aspx?aid=87514andsc=%20>>:
- [11] <https://arlis.am/hy/acts/194630>; <https://factor.am/788905.html>; <https://www.wtca.org/world-trade-center-yerevan>; <https://www.instagram.com/p/DVYxKlriHrM/>

СТРАТЕГИЯ СОВРЕМЕННОГО ЭТАПА СОХРАНЕНИЯ И УПРАВЛЕНИЯ АРХИТЕКТУРНЫМ НАСЛЕДИЕМ АРМЕНИИ

Арменуи Альбертовна Алексанян

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
aleksanyan.armenuhi@yandex.com*

В статье рассматриваются современные стратегии сохранения и управления архитектурным наследием в условиях стремительного градостроительного развития, глобализации и технологического прогресса. Выделяются основные вызовы, включая давление урбанизации, недостаточную эффективность правовых механизмов, ограниченные финансовые ресурсы и низкий уровень общественной осведомлённости. Особое внимание уделяется Республике Армения, обладающей богатым архитектурным наследием, которое сталкивается как с возможностями сохранения, так и с проблемами управления. В работе анализируются отдельные местные примеры и выявляются существующие пробелы в институциональной и нормативной системах. Предлагается комплексный подход, основанный на принципах устойчивого развития, применении цифровых технологий документирования, адаптивного использования исторических зданий и активного вовлечения общества. Сделан вывод о том, что эффективное управление архитектурным наследием требует сбалансированной стратегии, обеспечивающей сохранение культурных ценностей и их интеграцию в современную городскую среду, способствуя долгосрочной культурной и экономической устойчивости.

Ключевые слова: архитектурное наследие, сохранение, управление, устойчивое развитие, цифровизация

CONTEMPORARY STRATEGY FOR THE PRESERVATION AND MANAGEMENT OF ARMENIA'S ARCHITECTURAL HERITAGE

Armenuhi Aleksanyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
aleksanyan.armenuhi@yandex.com

The article analyzes modern strategies for the preservation and management of architectural heritage in the context of rapid urban development, globalization, and technological advancement. It discusses the main challenges in the field, including urban pressure, imperfections in legal mechanisms, financial constraints, and a lack of public awareness. In the Republic of Armenia, the rich architectural heritage faces serious issues related to its preservation and management. Several Armenian case studies are examined, revealing existing gaps in institutional and regulatory systems. A comprehensive approach is proposed, based on the principles of sustainable development, digital documentation technologies, adaptive reuse of historic buildings, and active public participation. Effective management of architectural heritage requires a balanced strategy that ensures both the preservation of cultural values and their harmonious integration into the modern urban environment, contributing to long-term cultural and economic sustainability.

Keywords: architectural heritage, preservation, management, sustainable development, digitalization

Ալեքսանյան Արմենուհի Ալբերտի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Դիզայն ամբիոն, դասախոս, հայցորդ,
(+374)94477434, *aleksanyan.armenuhi@yandex.com*

Александян Арменуи Альбертовна (РА, г. Ереван) – НУАКА, кафедра Дизайна, преподаватель,
соискатель, (+374)94477434, *aleksanyan.armenuhi@yandex.com*

Aleksanyan Armenuhi (RA, Yerevan) - NUACA, chair of Design, lecturer, claimant, (+374)94477434,
aleksanyan.armenuhi@yandex.com

Ներկայացվել է՝ 23.02.2026թ.

Գրախոսվել է՝ 31.03.2026թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

ԲԱԶՄԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐՈՒՄ**Մարիամ Արմենի Առաքելյան, Մերգել Աշոտի Մինասյան, Էդգար Գևորգի Ներսիսյան***Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ**mariamaragelyan@nuaca.am*


Հոդվածում քննարկվում է բնակելի շենքերի ջերմային նախագծման մեթոդաբանության մշակումը, որը ներառում է վերականգնվող տեխնոլոգիաների ինտեգրմամբ բազմաէներգետիկ համակարգերի օպտիմալ ընտրությունն ու շահագործումը: Առաջարկվում է ֆոտովոլտային, արևային ջերմային և գերթերմալ ջերմային պոմպերի տեխնոլոգիաների համակարգային կիրառելիության մոդելի մշակում և գնահատում: Ներկայացված մոդելը կարող է ծառայել որպես արդյունավետ տեխնոլոգիական լուծում էներգաարդյունավետ շենքային նախագծերի իրականացման, նախագծային և շինարարության փուլերում օպտիմալ տեխնոլոգիական որոշումների կայացման համար, հաշվի առնելով, որ ՀՀ-ն ունի վերականգնվող էներգետիկայի՝ հատկապես արևային և երկրաջերմային ռեսուրսների զգալի ներուժ: Նշված դրույթները կարող են նպաստել երկրի տնտեսական և էներգետիկ համակարգերի կայուն զարգացման ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը:

Բանալի բառեր. բազմաէներգետիկ համակարգ, էներգաարդյունավետություն, էներգիայի պահի-հիմք, ինտեգրում, մոդել, գնահատում, կյանքի ցիկլ, օպտիմալացում

Ներածություն

Ապագծիաճանաչման գործընթացում շինարարական ոլորտն ունի առանցքային դեր՝ ուղղված էներգաարդյունավետ անցման տեմպերի բարձրացմանը, էներգետիկ աղբատության նվազեցմանը և կանաչ տեխնոլոգիաների խթանմանը:

Հայաստանի էներգետիկ կախվածությունը, հատկապես բնական գազի ներմուծումից, երկրի էներգետիկ անվտանգության և կայուն զարգացման հիմնական մարտահրավերներից մեկն է: Այն, ըստ էներգետիկ հաշվեկշռի տվյալների, կազմում է երկրի էներգիայի կիրառման մոտ 60% -ը, և մեծ մասն ուղղվում է տնային տնտեսություններին [1]: Սրանով պայմանավորված, վերականգնվող էներգետիկայի, մասնավորապես արևային և երկրաջերմային էներգիայի ներուժի արդյունավետ օգտագործումը կարևորագույն ռազմավարություն է Հայաստանի էներգետիկ համակարգի կայունության ապահովման համար: Կառուցվող և նախագծվող բնակելի շենքերում վերականգնվող էներգիայի համակարգերի ինտեգրումը միայն տեխնոլոգիական անհրաժեշտություն չէ, այլ նաև էական քայլ է դեպի էներգետիկ անկախությունը և կլիմայական փոփոխությունների դեմ պայքարը [2]:



Նկ. 1. Երկրաչեղմային և արևի էներգիայի ներուժը ՀՀ-ում

Անցումային շրջանը դեպի կայուն զարգացում և էներգախնայողության բարձրացման պահանջներ շինարարության ոլորտում դնում են նոր մարտահրավերներ, մասնավորապես, բազմաբնակարան շենքերի նախագծման և արդիականացման առումով, քանի որ այս շենքերը էներգիայի հիմնական սպառողներն են, ինչն ընդգծում է դրանց էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների ինտեգրման անհրաժեշտությունը: Վերականգնվող էներգետիկ համակարգերի, օրինակ արևային ֆոտովոլտային, ջերմային պոմպերի, քամու տուրբինների և գեոթերմալ տեխնոլոգիաների կիրառումը բազմաբնակարան շենքերում կարող է զգալիորեն նվազեցնել էներգիայի ծախսը և ածխածնային արտանետումները [3]: Այս դեպքում մեծ կարևորություն է ստանում տեխնիկական և գործառնական համատեղելիության գնահատումը՝ հաշվի առնելով շենքի կառուցվածքային առանձնահատկությունները, էներգաբեռների պրոֆիլը և տեղային բնական ռեսուրսները (նկ. 1):

Ներկայացվող ուսումնասիրության նպատակն է մշակել համակողմանի մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա ՀՀ-ում կառուցվող բազմաբնակարան շենքերում տարբեր վերականգնվող էներգետիկ համակարգերի ինտեգրման արդյունավետությունը գնահատել տեխնիկատնտեսական և գործառնական տեսանկյունից: Արդյունքները հնարավորություն են տալիս առաջարկել օպտիմալ նախագծային որոշումներ, որոնք նպաստում են շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացմանը, կայուն շինարարության զարգացմանը և վերականգնվող էներգիայի լուծումների արդյունավետ ներդրմանը:


Նյութեր և մեթոդներ

Վերականգնվող էներգետիկ համակարգերի ինտեգրման տեխնիկական իրագործելիության, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի տարբեր տիպերի հետ դրանց համատեղելիության գնահատումը պահանջում է համապարփակ մաթեմատիկական մոդելավորում: Մոդելը պետք է ներառի շենքի էներգաբեռի ժամանակային և սեզոնային պահանջի գնահատումը, վերականգնվող էներգիայի արտադրող տեխնոլոգիաների (օր.՝ արևային ֆոտովոլտայիկ համակարգեր,

արևային ջրատաքացուցիչներ, փոքր հողմային տուրբիններ) կիրառելիության վերլուծությունը [4], ջերմային պոմպերի աշխատանքային բնութագրերի հաշվարկը, ինչպես նաև տեխնիկատնտեսական, էներգետիկ և էկոլոգիական ցուցանիշների համալիր գնահատումը: Տեխնիկատնտեսական վերլուծության համադրմամբ հնարավոր է նույնականացնել առավել արդյունավետ ինտեգրման գործիքակազմերը, ինչպես նաև որոշել դրանց տեխնիկական, տարածական և գործառական սահմանափակումները [5]:

Մոդելի կառուցման հիմքում բազմաէներգետիկ համակարգի (Multi-Energy Systems, MES)՝ այսուհետ ԲԷՀ, վերլուծությունն է, որի տեխնոլոգիական ընտրությունը պետք է հիմնված լինի շենքի էներգասպառման, բեռների դինամիկայի և տվյալ տարածքի էներգառեսուրսային ներուժի վրա: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս օպտիմալացնել էներգասպառումը, նվազեցնել ածխածնային արտանետումները և բարձրացնել շենքային ֆոնդի էներգաարդյունավետությունը:

ԲԷՀ-ը դիտարկվում է որպես փոխկապակցված ենթահամակարգերի դինամիկ ամբողջություն, որի նպատակն է ապահովել էներգիայի արդյունավետ, հուսալի և շրջակա միջավայրին նվազ վնաս հասցնող արտադրություն, փոխակերպում, կուտակում և սպառում [6]: Մոդելի ձևակերպումը հիմնված է էներգետիկ հոսքերի հավասարակշռության, տեխնոլոգիական փոխազդեցությունների, ինչպես նաև տնտեսական և էկոլոգիական ցուցանիշների օպտիմալացման վրա (նկ. 2):



Նկ. 2. Բազմաէներգետիկ համակարգի կառուցվածքը

Համակարգի աշխատանքը տեղի է ունենում հետևյալ սկզբունքով. ֆոտովոլտային կայանն արտադրում է էլեկտրական էներգիա, որն առաջնահերթ ուղղվում է շենքի սպառմանը, ավելցուկը լիցքավորում է մարտկոցները, իսկ մնացածը հնարավոր է վաճառել ցանցին: Գեոթերմալ ջերմային պոմպն ապահովում է ջեռուցում և հովացում, աջակցվում է արևային ջերմային կոլեկտորների արտադրած տաք ջրով, անհրաժեշտության դեպքում լրացվում է բնական գազի կաթսայով: Մարտկոցները թույլ են տալիս գազաթային բեռները կրճատել և ֆոտովոլտային կայանից կամ ցանցից էլեկտրաէներգիա պահել՝ խնայողություն և կայունություն ապահովելու համար:

Ավտոմատ համակարգը հսկում է բոլոր բաղադրիչների աշխատանքի ժամանակը, բեռի բաշխումը, էներգիայի արտահոսքը և մարտկոցների լիցքավորման մակարդակները:

ԲԷՀ-ի մոդելավորման և օպտիմալացման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել էներգետիկ հավասարակշռության և պահի պահպանողականության օրենքը, որն արտահայտում է հետևյալ տրամաբանական և ֆիզիկական պահանջը. մուտքային և արտադրած էներգիան պետք է հավասարվի տվյալ պահին շենքի ընդհանուր էներգետիկ պահանջարկին, ներառյալ ներքին ջերմանջատումները և օժանդակ տեխնոլոգիաների ներդրումները: Այսպիսով, շենքի էներգետիկ պահանջարկի բավարարման գործընթացը ներկայացվում է էներգիայի պահի-հիմք հավասարակշռության միջոցով, ըստ որի համակարգի տվյալ պահին պահանջվող ամբողջական էներգաբեռը պետք է հավասարվի բոլոր հասանելի էներգետիկ աղբյուրների համախառն ներդրմանը: Այս սկզբունքը մաթեմատիկորեն արտահայտվում է հետևյալ կերպ [7].

$$Q_{\text{բեռ}}(t) = Q_{\text{ֆվ}}(t) + Q_{\text{ջլ}}(t) + Q_{\text{լե}}(t), \quad (1)$$

որտեղ $Q_{\text{բեռ}}(t)$ – ը պահին պահանջվող ջերմային կամ էլեկտրական բեռն է, $Q_{\text{ֆվ}}(t)$ – ն՝ ֆոտովոլտային համակարգի կողմից տվյալ պահին մատչելի էներգիան (հաշվի առնելով փոխակերպման և կորուստների գործոնները), $Q_{\text{ջլ}}$ – ն՝ ջերմային պոմպի արտածած ջերմային էներգիան, որը կախված է ՕԳԳ-ից և արտաքին պայմաններից [5], $Q_{\text{լե}}(t)$ – ն՝ լրացուցիչ էներգիայի աղբյուրների (օր.՝ էլեկտրական ռեզիստիվ ջեռուցում, գազային կաթսա) ներդրումը:


Հավասարումը ցույց է տալիս, որ բազմաէներգետիկ համակարգն ունի էներգիայի պահպանման բնույթ՝ տվյալ պահին շենքի պահանջարկը չի կարող գերազանցել առկա էներգետիկ աղբյուրների միակցված ներուժը [8]:

Բացի այդ, ֆոտովոլտային համակարգն ու ջերմային պոմպն ունեն ոչ հաստատուն և պայմաններից կախված արտադրողականություն՝ ֆոտովոլտային համակարգի արտադրողականությունը $Q_{\text{ֆվ}}(t)$ կախված է արևի ճառագայթման ինտենսիվությունից, ջերմաստիճանից և գործարկման այլ պարամետրերից, իսկ ջերմային պոմպի արտադրողականությունը՝ $Q_{\text{ջլ}}(t)$, ՕԳԳ-ից, որը կախված է արտաքին միջավայրի ջերմաստիճանից [9]: Այս հանգամանքից ելնելով գործում է համակարգերի փոխլրացման բնույթը՝ ամբողջ համակարգն ունի մուլտիմոդալ դինամիկ հնարավորություն, երբ աղբյուրներից որևէ մեկը ժամանակավորապես խափանվի կամ նվազի:

Այս դինամիկական պահանջում է էներգետիկ հավասարակշռություն ապահովող օժանդակ աղբյուրի առկայություն՝ $Q_{\text{լե}}(t)$, որն ապահովում է ֆոտովոլտային համակարգի (ՖՀ) և ջերմային պոմպի (ՋՊ) արտադրողականության կայունությունը: Եթե որևէ աղբյուր չի բավարարում այդ պահանջարկի իր բաժինը՝ համակարգը տեղափոխում է բեռն այլ աղբյուրների վրա (օրինակ՝ ՋՊ-ի փոխարեն օգտագործվում է գազային կաթսա) և ներմուծում էներգիա արտաքին աղբյուրից (հիմնականում՝ էլեկտրական ցանցից): Այսպիսով, լրացուցիչ էներգաբաժինը $Q_{\text{լե}}(t)$ հանդես է գալիս որպես փոխհատուցող հանգույց (*balancing node*), որն ապահովում է, որ համակարգում որևէ պահանջված էներգիա չմնա չմարված (նկ. 3):

ԲԷՀ-ի մոդելավորումն իրականացվում է հետևյալ փուլերով.

1. շենքի կամ համակարգի ամբողջական էներգասպառման գնահատում,
2. մոդելում ներառվող էներգակիրների ընտրություն (էլեկտրաէներգիա, ջերմային էներգիա, գազ, վերականգնվող աղբյուրներ և այլն),
3. ջերմային պոմպերի, կաթսաների, մարտկոցների, էլեկտրական փոխակերպիչների մոդելավորում,
4. համակարգի ամբողջական ինտեգրված էներգետիկ մոդելի կառուցում,
5. ներդրումային և շահագործման ծախսերի հաշվարկ,
6. հետզնման ժամկետի որոշում,
7. տարեկան շահույթ, էներգախնայողության մակարդակ,
8. ածխածնային արտանետումների հաշվարկ:



Նկ. 3. Բազմաէներգետիկ համակարգի աշխատանքի սկզբունքային գծապատկեր

Համակարգերի մաթեմատիկական մոդելի կազմումը հիմնված է էներգասպառման բեռի հաշվարկի և գնահատման վրա, ինչը կատարվում է ժամային քայլով՝ հնարավորություն տալով ավելի ճշգրիտ գնահատել համակարգի աշխատանքն ամբողջ տարվա ընթացքում: Կախված արտաքին օդի ջերմաստիճանի փոփոխություններից, ներքին ջերմանջատումներից, շենքի ջերմամեկուսացման և կորուստների հատկանիշներից որոշվում է շենքում էներգիայի պահանջի ճշգրիտ բաշխումը ջեռուցման, հովացման և տաք ջրամատակարարման համար, որպես տարվա էներգիայի ամբողջական բեռ [10]:

$$Q_{\text{տաք}} = \sum_{t=1}^N (Q_{\text{ջեռ}}(t) + Q_{\text{սառ}}(t)) , \quad (2)$$

որտեղ $Q_{տար}$ – ը շենքի տարեկան էներգետիկ բեռն է ($կՎտ\cdot\sigma$), $Q_{շեն}(t)$ – ն՝ ջեռուցման բեռը t -րդ ժամին, $Q_{սառն}(t)$ – ը՝ սառեցման բեռը t -րդ ժամին, N – ը՝ ժամերի կամ ենթաժամային քայլերի թիվն ամբողջ տարվա ընթացքում:

Ջեռուցման համակարգերի նախագծման համար հաշվարկվում է նաև տաք ջրամատակարարման բեռը [11]՝

$$Q_{տջ} = m \cdot cp \cdot (T_{ել} - T_{մտ}) , \quad (3)$$

որտեղ m – ը ջրի զանգվածային հոսքն է ($կգ/\sigma$ կամ $կգ/վ$), cp – ն՝ ջրի ջերմունակությունը ($կՋ/կգ^{\circ}C$ կամ $կՎտ/կգ^{\circ}C$), $T_{ել}$ – ն՝ ցանկալի ելքային ջերմաստիճանը, $T_{մտ}$ – ն՝ մուտքային ջրի ջերմաստիճանը:

Էներգիայի բեռի ճշգրիտ գնահատումը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ինտեգրել արևային ֆոտովոլտային և ջերմային պոմպերի համակարգերը:

Ֆոտովոլտային համակարգի արտադրողականությունը որոշվում է հետևյալ արտահայտությամբ [5]՝

$$E_{ֆվ}(t) = A \cdot G(t) \cdot \eta_{ֆվ}(t) \cdot PR_{ֆվ} , \quad (4)$$

որտեղ A – ն ֆոտովոլտային մոդուլի մակերեսն է ($մ^2$), $G(t)$ – ն՝ տվյալ պահին ընկնող ճառագայթվածությունը ($Վտ/մ^2$), $\eta_{ֆվ}(t)$ – ն՝ ֆոտովոլտային մոդուլի արդյունավետությունը տվյալ պահին, $PR_{ֆվ}$ – համաշխարհային կորուստների գործակից:

Ջերմային պոմպի աշխատանքային ցուցանիշը (COP) ներկայացվում է որպես արտադրած ջերմության և սպառած էլեկտրաէներգիայի հարաբերակցություն [8]՝

$$COP(t) = \frac{Q_{արմ}(t)}{W_{ներ}(t)} : \quad (5)$$

Պարզեցված ջերմաստիճանային կախվածությունը՝

$$COP(t) = a - b \cdot (T_{արմ}(t) - T_{ներ}(t)) , \quad (6)$$

որտեղ a, b – ն սարքավորողի տրամադրած կամ փորձարարական տվյալներն են, $T_{արմ}, T_{ներ}$ – ը՝ ջերմային հեղուկի համապատասխանաբար ելքային և մուտքային ջերմաստիճանները ($^{\circ}C$):

Սեզոնային արդյունավետությունը (SCOP) հաշվարկվում է ամբողջ ժամանակահատվածի համար՝

$$SCOP = \frac{\sum t Q_{արմ}(t)}{\sum t W_{ներ}(t)} : \quad (7)$$

Բազմաբնակարան շենքի ԲԷՀ-ի օրինակային մոդելի կազմման համար դիտարկվում է բնակելի նշանակության շենք, որի ընդհանուր մակերեսը կազմում է 5000 $մ^2$ և ներառում է 60 բնակարան: Շենքի տարեկան էլեկտրաէներգիայի սպառումը կազմում է 420 000 $կՎտ\cdot\sigma$, ջեռուցման և հովացման տարեկան պահանջը՝ 650 000 $կՎտ\cdot\sigma$, իսկ տաք ջրի պահանջը՝ 220 000 $կՎտ\cdot\sigma$ (2):

Տարածաշրջանային էներգետիկ ներուժից կախված, որպես էներգակիրներ, մոդելավորման համար ընտրվել են արևային էներգիա, երկրաջերմային էներգիա և բնական գազ (նկ. 1):

Կիրառվող տեխնոլոգիական համակարգերը ներառում են արևային ֆոտովոլտային (PV) համակարգ՝ էլեկտրաէներգիայի արտադրության համար, արևային ջերմային կոլեկտորներ՝ տաք

ջրի ապահովման համար, գեոթերմալ ջերմային պոմպ՝ ջեռուցման, հովացման և տաք ջրի աջակցման նպատակով, բնական գազի կաթսա՝ գազաթային բեռների ծածկման համար, և Li-ion (լիթիում-իոնային)՝ մարտկոցներով վերականգնվող էներգիայի պահեստավորում՝ համակարգի կայունությունն ապահովելու համար [12]: Կիրառվող համակարգերն ընտրվել են ըստ տեխնիկական տվյալների՝ արտադրողականության և կատարված հաշվարկների:

1. Արևային ֆոտովոլտային կայանը 600 մ^2 մակերեսով տեղադրված է տանիքին և ունի 90 *կՎտ/պիկ* հզորություն: Կայանն աշխատում է ավտոմատ կառավարման համակարգով (EMS), որը թույլ է տալիս արտադրած էներգիան ուղղել անմիջապես շենքի սպառմանը կամ մարտկոցային պահեստավորմանը: ՀՀ պայմաններում կայանի տարեկան արտադրությունը կազմում է մոտ 148000 *կՎտ-ժ*, ինչը հնարավորություն է տալիս զգալիորեն նվազեցնել արտաքին էլեկտրաէներգիայի պահանջը:

2. Արևային ջերմային կոլեկտորները զբաղեցնում են 175 մ^2 մակերես և նախատեսված են տաք ջրի արտադրության համար: Տարեկան էներգիա՝ 70000...80000 *կՎտ-ժ*, փոխանցվում է պահեստային ջրի բաքին, ինչն ապահովում է կայուն ջերմաստիճան և էներգիայի արդյունավետ օգտագործում ողջ տարվա ընթացքում:

3. Գեոթերմալ ջերմային պոմպը գործում է հող-ջուր սկզբունքով և տեղադրված է երկու միավոր՝ յուրաքանչյուրն 90 *կՎտ* հզորությամբ, ընդհանուր հզորություն՝ 180 *կՎտ*, $\text{COP} \approx 4,2$: Պոմպն աջակցում է ջեռուցմանը, հովացմանը և տաք ջրի արտադրությանը՝ պահպանելով կայուն արդյունավետություն տարբեր սեզոններում և ապահովելով նվազագույն տատանումներ [10]:

4. Բնական գազի կաթսան, 150 *կՎտ* հզորությամբ, օգտագործվում է արտաքին օդի ծայրահեղ ցածր ջերմաստիճանային պայմաններում՝ գազաթային բեռների ծածկման համար, աջակցելով էներգիայի ապահովմանը և բեռնման հավասարակշռմանը:

5. Մարտկոցային պահեստավորումն իրականացվում է 200 *կՎտ-ժ* տարողությամբ, ավտոմատ կառավարվող, Li-ion տեխնոլոգիայով, ինչն ապահովում է ֆոտովոլտային համակարգի արտադրած էներգիայի կլանումը և գազաթային բեռի նվազեցումը:


Համակարգերի այս ինտեգրումը նպաստում է շենքի էներգաարդյունավետության բարձրացմանը, էներգիայի ինքնավար օգտագործման մեծացմանը և արտաքին էներգակիրների պահանջի նվազեցմանը:

Արդյունքներ և քննարկում

Մշակված ԲԷՀ-ի մոդելավորման և տեխնիկատնտեսական գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ կլիմայական պայմաններում վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների ինտեգրումը բազմաբնակարան շենքերում ապահովում է նշանակալի էներգետիկ, տնտեսական և էկոլոգիական արդյունավետություն:

Մոդելավորված բնակելի շենքի համար հաշվարկված ընդհանուր ներդրումային ծախսը կազմել է 161 438 000 ՀՀ դրամ: Ներդրումների կառուցվածքում առավել մեծ բաժինը կազմում է

գեոթերմալ ջերմային պոմպերի համակարգը (56 %), որին հաջորդում են մարտկոցային պահեստավորումը (18 %) և արևային ֆոտովոլտային կայանը (9 %): Այս բաշխվածությունը վկայում է, որ համակարգի հիմնական կապիտալ ծախսերը պայմանավորված են ջերմային էներգիայի արտադրության և բեռի կայունացման ենթահամակարգերով:




Նկ. 4. Ներդրումային ծախսերի բաշխվածություն

Շահագործման տարեկան ծախսը բազմաէներգետիկ համակարգի կիրառման դեպքում կազմել է 21 225 460 ՀՀ դրամ, մինչդեռ առանց այդ լուծումների նույն շենքի տարեկան էներգետիկ ծախսը գնահատվել է 28 508 800 ՀՀ դրամ: Տարեկան խնայողությունը կազմել է 7 697 200 ՀՀ դրամ, ինչը բերում է ընդհանուր տարեկան ծախսերի շուրջ 27% կրճատման:

Կատարված հաշվարկներով ներդրումների պարզ հետգնումը կազմում է մոտավորապես 21 տարի: Չնայած հարաբերականորեն երկար հետգնման ժամկետին, կյանքի 25...30 տարվա շահագործման ցիկլում համակարգն ապահովում է դրական զուտ տնտեսական արդյունք՝ նվազեցված շահագործման ծախսերի և էներգակիրների գնաճի պայմաններում բարձրացող խնայողությունների հաշվին: Էներգետիկ հավասարակշռության վերլուծությունը ցույց է տալիս, որ շենքի ընդհանուր տարեկան էներգապահանջի զգալի մասն ապահովվում է տեղական վերականգնվող աղբյուրներով: Ֆոտովոլտային համակարգը տարեկան արտադրում է շուրջ 148 000 կՎտ·ժ էլեկտրաէներգիա, իսկ արևային ջերմային կոլեկտորները՝ 70 000...80 000 կՎտ·ժ ջերմային էներգիա: Ջերմային պոմպի բարձր COP≈4,2 ցուցանիշը թույլ է տալիս նվազագույնի հասցնել ցանցից սպառվող էլեկտրաէներգիան ջեռուցման և հովացման ռեժիմներում:

Բնապահպանական գնահատումը ցույց է տալիս արտանետումների էական կրճատում: Առանց համակարգի շենքի տարեկան CO₂ արտանետումները կազմում են մոտ 353900 կգ/տարի: Բազմաէներգետիկ համակարգի կիրառման դեպքում այդ ցուցանիշը նվազում է մինչև 95 183 կգ/տարի: Արտանետումների տարեկան կրճատումը կազմում է շուրջ 258 700 կգ CO₂, ինչը համարժեք է մոտ 73% նվազման (նկ. 5): Եթե դիտարկվի համակարգի 30 տարվա շահագործման

ցիկլը, ապա կրճատումը կգերազանցի 7 700 տ CO_2 , ինչը կարևոր ներդրում է ածխածնային հետքի նվազեցման և ապակարբոնիզացիայի գործընթացում:



Նկ. 5. CO_2 արտանետումների համեմատություն

Համակարգի դինամիկ աշխատանքը կնպաստի վերականգնվող աղբյուրների՝ որպես առաջնային էներգամատակարարներ հանդես գալուն, իսկ գազային կաթսան կգործի միայն որպես գազաթային բեռի հավասարակշռման աղբյուր (մոտ 10% բեռի ծածկում): Այս կառուցվածքը նվազեցնում է ներմուծվող բնական գազի օգտագործումը և բարձրացնում շենքի էներգետիկ ինքնաբավության մակարդակը:

Եզրակացություն

- Մշակվել է բազմաբնակարան շենքերի համար բազմաէներգետիկ համակարգերի ինտեգրման համալիր մեթոդաբանություն՝ հիմնված էներգետիկ հավասարակշռության մոդելավորման, տեխնիկատնտեսական գնահատման և CO_2 արտանետումների քանակական վերլուծության վրա: Վերականգնվող էներգիայի համակցված կիրառումը (PV, արևային ջերմային համակարգեր, գեոթերմալ ջերմային պոմպ, էներգիայի պահեստավորում) ապահովում է տարեկան CO_2 արտանետումների շուրջ 73% կրճատում: Համակարգը զգալիորեն նվազեցնում է բնական գազի սպառումը և բարձրացնում շենքի էներգետիկ ինքնաբավության մակարդակը:
- Տարեկան տնտեսական խնայողությունը կազմում է մոտ 7,7 մլն ՀՀ դրամ: Ներդրման պարզ հետգնումը գնահատվել է շուրջ 21 տարի՝ ապահովելով երկարաժամկետ տնտեսական կայունություն:
- Բազմաէներգետիկ ինտեգրված լուծումները կարող են դիտարկվել որպես արդյունավետ գործիք շենքային հատվածի ապակարբոնիզացիայի և էներգաարդյունավետ զարգացման ռազմավարությունների իրականացման համար:

Գրականության ցանկ

- [1] **Ս. Սարգսյան**, Վերականգնվող էներգիայի օգտագործումը աշխարհում – Հայաստանում: Նորարարությամբ դեպի մաքուր տեխնոլոգիաներ. Լուսաբաց, Երևան, 2009, 82 էջ:
- [2] **A. Karamyan, M. Arakelyan, S. Khachatryan**, Wood heating efficiency improvements in regions of Armenia: IEP conference Proceedings (2026) 3247, 050018, <<https://doi.org/10.1063/5.0306484>>.
- [3] **Ռ.Ս. Խարազյան**, Վերականգնվող էներգիայի աղբյուրներ և տեխնոլոգիաներ. Արևիկ, Երևան, 2012, 279 էջ:
- [4] IEA, International Energy Agency. Solar Heating and Cooling Programme: Annual Report, 2022.
- [5] **C.A. Balaras, et al.**, Solar Air Conditioning in Europe—An Overview. Energy and Buildings 39(7) (2007) 823–832.
- [6] **Կ.Ա. Սովսիսյան**, Գերթերմալ ջերմապոմպային կայանքների կիրառման հնարավորությունները և համակցված համակարգերի նորարարական լուծումները. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 3(90) (2024) 84-93, <<https://doi.org/10.54338/18294200-202.3-10>>:
- [7] **M.A. Rosen, B.Rezaie**, District Heating and Cooling with Renewable Energy: Review, Opportunities, and Challenges. Energy 45(1) (2012) 138–149.
- [8] **C. Felsmann, et al.**, Modeling of Multi-Energy Systems in Residential Buildings. Energy Procedia 62 (2014) 445–452.
- [9] **Г.П. Васильев**, Теплохладоснабжение зданий и сооружений с использованием низкопотенциальной тепловой энергии поверхностных слоев Земли: монография. Издательский дом “Граница”, Москва, 2006, 176с.
- [10] **Ս.Գ. Ավետիսյան**, Ջերմագազամատակարարման և օդափոխության համակարգերի էկոնոմիկա և էներգատնտեսական արդյունավետության բարձրացման մեթոդաբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Երևան, 2018, 64 էջ:
- [11] **ՀՀՇՆ 22-01-2024**. Շինարարական կլիմայաբանություն. ՀՀ շինարարական նորմեր, 259 էջ:
- [12] **П.А. Трубаев, Б.М. Гришко**, Тепловые насосы. Белгород, 2009, 142 с.

ПРИМЕНИМОСТЬ МУЛЬТИЭНЕРГЕТИЧЕСКИХ РЕШЕНИЙ В ЖИЛЫХ ЗДАНИЯХ

Мариам Арменовна Аракелян*, Сергей Ашотович Минасян, Эдгар Геворгович Нерсисян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

**mariamaraqelyan@nuasa.am*

В статье рассматривается разработка методологии теплового проектирования жилых зданий, включающей оптимальный выбор и эксплуатацию мультиэнергетических систем с интеграцией возобновляемых технологий. Предлагается разработка и оценка модели системного применения фотоэлектрических, солнечных тепловых и геотермальных тепловых насосных технологий. Представленная модель может служить эффективным технологическим решением для реализации энергоэффективных строительных проектов и принятия оптимальных технологических решений на этапах проектирования и строительства, учитывая значительный потенциал возобновляемой энергии в Республике Армения, особенно солнечных и геотермальных ресурсов. Указанные положения способствуют обеспечению устойчивого развития экономической и энергетической систем страны, а также сохранению окружающей среды.

Ключевые слова: мультиэнергетическая система, интеграция, энергоэффективность, основа момента энергии, модель, оценка, жизненный цикл, оптимизация

APPLICABILITY OF MULTI-ENERGY SOLUTIONS IN RESIDENTIAL BUILDINGS

Mariam Arakelyan*, Sergey Minasyan, Edgar Nersisyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**mariamaraqelyan@nuaca.am*

This article discusses the development of a methodology for thermal design of residential buildings, which includes the optimal selection and operation of multi-energy systems integrated with renewable technologies. A model is proposed and evaluated for the systematic application of photovoltaic, solar thermal, and geothermal heat pump technologies. The presented model can serve as an effective technological solution for implementing energy-efficient building projects and making optimal technological decisions during the design and construction phases, taking into account the significant potential of renewable energy resources in the Republic of Armenia, particularly solar and geothermal. These provisions can contribute to the sustainable development of the country's economic and energy systems, as well as environmental protection.

Keywords: multi-energy system, integration, energy efficiency, energy baseload, model, assessment, life cycle, optimization

Առաքելյան Մարիամ Արմենի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, հայցորդ, (+374)77890666, *mariamaraqelyan@nuaca.am*, **Մինասյան Սերգեյ Աշոտի, տ.գ.դ., պրոֆեսոր** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, (+374)91408689, *sergey.minasyan@yahoo.com* **Ներսիսյան Էդգար Գևորգի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, մագիստրոս, (+374)91451505, *nyan_edgar@mail.ru*

Արակелян Мариам Арменовна (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, соискатель, (+374)77890666, *mariamaraqelyan@nuaca.am*, **Минасян Сергей Ашотович, д.т.н., профессор** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, (+374)91408689, *sergey.minasyan@yahoo.com*, **Нерсисян Эдгар Геворгович** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, магистр, (+374)91451505, *nyan_edgar@mail.ru*

Arakelyan Mariam (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, postgraduate student, (+374)77890666, *mariamaraqelyan@nuaca.am*, **Minasyan Sergey, doctor of science (engineering), professor**, (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, (+374)91408689, *sergey.minasyan@yahoo.com*, **Nersisyan Edgar** (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, master's degree, (+374)91451505, *nyan_edgar@mail.ru*

Ներկայացվել է՝ 10.03.2026թ.

Գրախոսվել է՝ 02.04.2026թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԻ ԿԱԶՄԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԿԱՊԱԿՑԱՆՅՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ «ՍՈՒՊԵՐՓԵՅՎ» ՄԵԹՈԴՈՎ

Հակոբ Հարությունի Գյուլզադյան*, Վիգեն Հայկի Տեր-Սիմոնյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

*hakob_gyulzadyan@bk.ru

Ներկայացվում են ասֆալտբետոնի կազմի նախագծման ուղղությամբ համաշխարհային ճանապարհաշինությունում լայն տարածում ստացած «Սուպերֆեյվ» մեթոդին համապատասխան ՀՀ բնակավայրերի համար բիտումային կապակցանյութի $PG\ X\pm Y$ դասերի սահմանված արժեքները: Հիմնվելով ՀՀ բնակավայրերի համար նախապես որոշված ճանապարհաճաճկի առավելագույն և նվազագույն հաշվարկային ջերմաստիճանների վրա, ստացված են բիտումային կապակցանյութի դասերի բազային արժեքները: Բացի բազային արժեքներից ներկայացված են նաև PG բարձր դասի արժեքների ճշգրտումները, որոնք հաշվի են առնում ինչպես երթևեկության ինտենսիվությունը (ծառայության ժամկետի ընթացքում ստանդարտ առանցքների քանակը), այնպես էլ շարժման արագությունը:

Բանալի բառեր. ասֆալտբետոն, կապակցանյութ, շահագործական դաս, ճանապարհաճաճկի հաշվարկային ջերմաստիճաններ, հոգնածային ճաքեր, ջերմային ճաքեր, անվահետքեր, կապակցանյութի դաս

Ներածություն

Ինչպես նշվել է [1, 2], ճանապարհային ցանցի շահագործական բնութագրերի, երկարակեցության բարելավման և շարժման անվտանգության բարձրացման նպատակով 1988-1993 թթ. ԱՄՆ-ում ճանապարհային Հետազոտությունների Ռազմավարական Ծրագրի (Strategic Highway Research Program-SHRP) շրջանակում մշակվել է ասֆալտբետոնային խառնուրդների նախագծման «Սուպերֆեյվ» (Superior Performing Asphalt Pavement System - Superpave) մեթոդը [3-7]: Համակարգի մշակման հիմնական նպատակն է եղել կանխել կամ հետաձգել ասֆալտբետոնային ծածկերի հոգնածային, ջերմային ճաքերի և անվահետքերի առաջացումները [8]: «Սուպերֆեյվ» համակարգը ներառում է բիտումային կապակցանյութերի շահագործական բնութագրերի (PG - Performance Grading) որոշում, ասֆալտբետոնային խառնուրդի կազմի նախագծում և ասֆալտբետոնային խառնուրդի շահագործական ցուցանիշների գնահատում: «Սուպերֆեյվ» համակարգի այս երեք հիմնական բաղադրամասերը նախատեսված են երկարակյաց ասֆալտբետոնային ծածկեր ստանալու համար, որոնք պետք է բավարարեն երթևեկության ինտենսիվությամբ և կլիմայական պայմաններով ներկայացվող պահանջները:

Տարբեր երկրներում բիտումային կապակցանյութերի ավանդական դասակարգման հիմքում դրված են պենետրացիայի (ասեղի խորասուզման) և մածուցիկության սահմանափակումները: Բացի այն, որ պենետրացիայի փորձարկումը կրում է էմպիրիկ բնույթ և, հետևաբար, դրա արդյունքներն անմիջականորեն չեն հաղորդակցվում կապակցանյութի շահագործական բնութագրերի հետ, այն իրականացվում է որոշակի՝ $25\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում: Որևէ այլ ջերմաստիճանում պենետրացիայի փորձարկում բիտումային կապակցանյութի դասակարգման համար չի իրականացվում: Նույնը վերաբերում է նաև մածուցիկության փորձարկմանը, որը նախատեսվում է $60\text{ }^{\circ}\text{C}$ և $135\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճաններում՝ կանխատեսելու համար կապակցանյութի վարքը, համապատասխանաբար, բարձր շահագործական ջերմաստիճանի և ասֆալտբետոնային խառնուրդի փոման ժամանակ: Միջանկյալ ջերմաստիճաններում, երբ որպես կանոն տեղի է ունենում հոգնածային ճաքառաջացումը, մածուցիկության փորձարկում չի նախատեսվում [9, 10]: Ինչպես ըստ պենետրացիայի, այնպես էլ ըստ մածուցիկության կապակցանյութերի դասակարգումներում հաշվի չի առնվում կապակցանյութի երկարաժամկետ հնեցումը: Նույն պենետրացիան և մածուցիկությունն ունեցող տարբեր կապակցանյութեր դաշտային պայմաններում կարող են ցուցաբերել խիստ տարբեր շահագործական բնութագրեր: Ինչպես նշվել է [1]-ում, մի շարք երկրներ ներմուծել են «Սուպերփեյվ» համակարգը՝ ճանապարհային պատվածքների աշխատանքի երկարատևության և հուսալիության պահանջներից ելնելով [11-17]:

Նյութեր և մեթոդներ

Հետազոտության նպատակը

Աշխատանքի նպատակն է տեղայնացնել «Սուպերփեյվ» համակարգով կապակցանյութի ընտրության գործընթացը Հայաստանի Հանրապետության բնակավայրերի համար: [1]-ում, հիմնվելով LTPP (Long Term Pavement Performance) մոդելի վրա [18], ՀՀ բնակավայրերի համար սահմանվել են ճանապարհածածկի առավելագույն և նվազագույն հաշվարկային ջերմաստիճանները, որոնք բերված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ բնակավայրերի համար ճանապարհածածկի ամառային և ձմեռային հաշվարկային ջերմաստիճանները

N	Բնակավայրի անվանումը	Ծածկի հաշվարկային ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$		N	Բնակավայրի անվանումը	Ծածկի հաշվարկային ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$	
		ամառային, T_{MAX}	ձմեռային, T_{MIN}			ամառային, T_{MAX}	ձմեռային, T_{MIN}
1	2	3	4	5	6	7	8
1.	Ալավերդի	63,15	-14,09	17.	Հրազդան	60,96	-17,91
2.	Ապարան	60,91	-19,11	18.	Ղափան	65,41	-13,74
3.	Աշտարակ	65,39	-18,49	19.	Ճամբարակ	56,75	-16,38
4.	Արարատ	66,48	-23,68	20.	Մարտունի	56,85	-16,80
5.	Արթիկ	62,61	-24,55	21.	Մեղրի	66,12	-13,16

Աղ. 1-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8
6.	Արմավիր	65,51	-20,61	22.	Ջերմուկ	59,41	-18,29
7.	Արտաշատ	67,60	-20,66	23.	Մևան	57,72	-16,57
8.	Բերդ	63,16	-8,96	24.	Միսիան	59,30	-13,56
9.	Գավառ	59,17	-18,19	25.	Սպիտակ	61,21	-18,03
10.	Գյումրի	62,89	-23,68	26.	Ստեփանավան	65,23	-15,30
11.	Գորիս	59,73	-13,41	27.	Վանաձոր	62,42	-19,00
12.	Դիլիջան	61,61	-17,15	28.	Վայք	64,03	-16,70
13.	Եղեգնաձոր	63,68	-17,34	29.	Վարդենիս	56,83	-24,30
14.	Երևան	67,28	-17,63	30.	Քաջարան	61,39	-13,25
15.	Թալին	61,98	-24,57	31.	Տաշիր	60,58	-16,00
16.	Իջևան	64,51	-12,13	32.	Նոյեմբերյան	63,61	-13,30

«Սուպերփեյվ» համակարգով բիտումային կապակցանյութերի PG շահագործական դասերի գնահատումը կատարվում է երկու հիմնական քայլերով: Նախ ճանապարհաձածկի հաշվարկային ջերմաստիճանները դառնում են կապակցանյութի PG դասի ընդունման հիմք, որը կարող է ճշգրտվել, հաշվի առնելով երթևեկության ծավալները, արագությունները և հուսալիությունը: Երկրորդ, կապակցանյութի նմուշներով կատարվում են լաբորատոր փորձարկումներ, համոզվելու համար նախագծի իրականացման տեղանքի կլիմայական պայմանների և երթևեկության ծավալների հետ կապակցանյութի համապատասխանության մեջ:

«Սուպերփեյվ» համակարգով բիտումային կապակցանյութի փորձարկման համար կիրառվում են հետևյալ չորս հիմնական սարքավորումները [2]՝

- Դինամիկական սահքի ռեոմետր (Dynamic Shear Rheometer - DSR), որը չափում է դինամիկական G^* մոդուլը և փուլային δ անկյունը ճանապարհաձածկի բարձր շահագործական ջերմաստիճանների դեպքում՝ գնահատելու համար ծածկի կայունությունն անվահետքերի առաջացման նկատմամբ, և շահագործման միջանկյալ ջերմաստիճաններում՝ գնահատելու համար ծածկի կայունությունը՝ հոգնածային ճաքերի առաջացման նկատմամբ:
- Ծովող հեծանով ռեոմետր (Bending Beam Rheometer -BBR), որը չափում է ջերմաստիճանային ճաքերի նկատմամբ ճանապարհաձածկի դիմադրողականությունը շահագործման ցածր ջերմաստիճաններում:
- Մաքուր ձգման փորձասարք (Direct Tension Tester -DTT), որը չափում է սահմանային ձգող լարումները՝ բնութագրելու համար կապակցանյութի կոշտությունը և ռելաքսացիոն հատկությունները ճանապարհաձածկի շահագործման ցածր ջերմաստիճաններում:
- Պտտական վիսկոզիմետր (Rotational Viscometer-RV), որը չափում կապակցանյութի մածուցիկությունը՝ ապահովելու համար խառնուրդի խառնման և խտացման ջերմաստիճանների դեպքում դրա անհրաժեշտ մակարդակը:

Կապակցանյութի չափված բնութագրերի համար որպես սահմանափակող ցուցանիշներ ընդունվել են այնպիսի արժեքներ, որոնք հաղորդակցվում են անվահետքերի առաջացման նկատմամբ կայունության, ինչպես նաև հոգնածային և ջերմային ճաքակայունության հետ: Համաձայն PG դասի կապակցանյութերի AASHTO M 320 ստանդարտ մասնագրի [19], անվահետքերի նկատմամբ կայունության բնութագիրը՝ $G^* / \sin \delta$, պետք է լինի նվազագույնը 1,0 *կՊա* չինացած կապակցանյութի համար և 2,2 *կՊա*՝ պտտվող բարակաթաղանթ ջեռոցում (Rolling Thin-Film Oven - RTFO) հնացած կապակցանյութի համար: Հոգնեցման բնութագիրը՝ $G^* \cdot \sin \delta$, պետք է լինի առավելագույնը 5000 *ՄՊա* RTFO փորձասարքում և ճնշմամբ հնացման անոթի փորձով (Pressurized Aging Vessel - PAV) հնացրած կապակցանյութի համար: Ջերմային ճաքակայունության ապահովման համար RTFO և PAV փորձասարքերում հնեցրած կապակցանյութի համար իրականացվում է BBR փորձը ճանապարհաձածկի ցածր (ձմեռային) ջերմաստիճանից 10 °C -ով բարձր ջերմաստիճանում: Արդյունաբար սողքի առավելագույն *s* կոշտությունը պետք է կազմի 300 *ՄՊա*, իսկ *m*-արժեքը՝ նվազագույնը 0,300: RTFO և PAV փորձասարքերում հնացրած կապակցանյութի համար DTT փորձասարքի կիրառման դեպքում ձգման սահմանային հարաբերական դեֆորմացիան պետք է լինի նվազագույնը 1 %, երբ փորձի ջերմաստիճանը հավասար է ճանապարհաձածկի ցածր (ձմեռային) ջերմաստիճանին: Վերը նշված բոլոր ցուցանիշները, անկախ շինարարության շրջանի տեղաբաշխումից, մնում են անփոփոխ: Փոփոխվում են միայն կախված շահագործման ընթացքում ճանապարհային պատվածքի ջերմաստիճանից և ճանապարհային երթևեկության ծավալներից:

Արդյունքներ և քննարկում

«Սուպերփեյվ» PG համակարգն ի սկզբանե ձևավորված և աստիճանավորված է շահագործման որոշակի միջին պայմանների համար, որոնք են՝ երթևեկության մոտ 100 *կմ/ժամ* միջին արագություն և 10 *մ/վ* համարժեք ստանդարտ առանցք [8]: Որպես ստանդարտ առանցք ընդունված է Պետական ճանապարհային-Տրանսպորտային Ծառայողների Ամերիկյան Ասոցիացիայի (AASHTO – American Association of State Highway and Transportation Officials) ստանդարտ առանցքը, որը կազմում է 18000 *ֆունտ* կամ մոտ 8,16 *տ* (81,6 *կՆ*): Աղ. 2-ում բերված են տարբեր հաշվարկային բեռնվածքների դեպքում երթևեկության բնույթները սահմանափակող համարժեք ստանդարտ առանցքների քանակները: ՀՀ-ում գործող 115 *կՆ* (A-11,5) բեռնվածքի համար [20] սահմանափակող արժեքներն ընդունվել են ըստ [21]-ի:

Աղյուսակ 2

Առանցքային համարժեք բեռնվածքների համաձայնեցումները

Բեռնվածքի նորմը	Առանցքային բեռնվածքը, <i>կՆ</i>	Համարժեք ստանդարտ առանցքների քանակությունները կախված երթևեկության բնույթից, <i>մ/վ</i> առանցք		
		թեթև	միջին	ծանր
AASHTO	81,6	< 3,0	3,0...10,0	>10,0
ՀՀՇՆ 32-01-2022 – A 11,5	115,0	< 0,5	0,5...1,8	>1,8

Ճանապարհի այնպիսի տեղամասերում, ինչպիսիք են միևնույն մակարդակում փոխհատումները, խաչմերուկները, վերելքները, ավտոբուսային կանգառները, որոնք ենթարկվում են ավելի դանդաղ շարժվող կամ կանգնած երթևեկության ազդեցությանը, կապակցանյութի դասը պետք է ընդունել ավելի կոշտ՝ նվազեցնելու համար անվահետքերի առաջացումը: Այդպիսով, ավելի դժվար երթևեկության պայմանները պահանջում են կապակցանյութի PG բարձր դասի ճշգրտում կամ կարգաբերում դեպի վեր՝ այսինքն աճման կողմը: Այս պրոցեսը անգլերենում ստացել է “bumping” տերմինը: Կապակցանյութի PG ցածր դասի համար ճշգրտում չի պահանջվում:

Ճանապարհային Հետազոտությունների Ռազմավարական Ծրագրի (Strategic Highway Research Program-SHRP) հետազոտողներն առաջարկել են կապակցանյութի դասի ճշգրտման կանոններ, որոնք հիմնված են ինժեներական դատողությունների վրա [22]՝

- կապակցանյութի PG բարձր դասը պետք է բարձրացվի մեկ աստիճանով (6°C)՝ երթևեկության ցածր արագության դեպքում և երկու աստիճանով կանգնած կամ ստատիկ բեռների դեպքում,
- դիտարկել կապակցանյութի PG բարձր դասի բարձրացում մեկ աստիճանով, երբ երթևեկության հաշվարկային առանցքների քանակը գերազանցում է 10 *մլն* ESAL-ը (A 11,5 բեռնվածքի համար 1,8 *մլն* առանցք):

Կապակցանյութի դասի ճշտման համար վնասի վրա հիմնված կապակցանյութի PG դասակարգման ընթացակարգը (The damage-based PG binder grading procedure) մշակվել է որպես հիմք ընդունելով միջանկյալ արագություն և 3 *մլն* ESAL [23]: PG դասի ճշգրտումը կատարվում է ըստ աղ. 3-ի: Ինչպես երևում է աղ. 3-ից, բացակայում են ճշգրտումներ շատ դանդաղ երթևեկության և կանգնած բեռնվածքների համար: Ազգային կոոպերատիվ ճանապարհային հետազոտական ծրագրի (National Cooperative Highway Research Program - NCHRP) մասնագետները դանդաղ և արագ երթևեկության համար առաջարկել են ընդունել համապատասխանաբար 35 և 70 *կմ/ժամ* արագություններ [24]:

Վերջնականապես, հաշվի առնելով վերը նշված նկատառումները, կախված երթևեկության պայմաններից, ՀՀ բնակավայրերի համար սահմանվել են բիտումային կապակցանյութի PG դասեր, որոնք ներկայացված են աղ. 4-ում: Երթևեկության դասակարգումն ըստ ծանրության աստիճանի ընդունվել է ըստ աղ. 2-ի:

Աղյուսակ 3

Կապակցանյութի PG ճշտումներն ըստ վնասի վրա հիմնված դասակարգման

Երթևեկության արագությունը	Կապակցանյութի բազային PG դասը	Հաշվարկային առանցքների թիվը, <i>մլն</i> ESAL		
		<3	3...10	10...30
		Կապակցանյութի PG դասի ճշտումը		
Դանդաղ	52	-	10,3	16,8
	58	-	8,7	14,5
	64	-	7,4	12,7
	70	-	6,1	10,8
Արագ	52	3,1	13,0	19,2
	58	2,9	11,2	16,8
	64	2,7	9,8	14,9
	70	2,5	8,4	12,9

ՀՀ բնակավայրերի համար բիտումային կապակցանյութի PG դասերը

Բնակավայրի անվանումը	Կապակցա- կյութի բազային PG դասը	Կապակցանյութի ճշտված PG դասը							
		ցածր արագություն, <35 կմ/ժամ		միջին արագություն, 35...70 կմ/ժամ			բարձր արագություն, >70 կմ/ժամ		
		Երթևեկությունը							
		թեթև	միջին	թեթև	միջին	ծանր	թեթև	միջին	ծանր
Ալավերդի, Գորիս, Սիսիան, Քաջարան, Տաշիր, Նոյեմբերյան	PG 64–16	PG 76–16	PG 82–16	PG 76–16	PG 76–16	PG 82–16	PG 70–16	PG 76–16	PG 76–16
Ապարան, Գավառ, Դիլիջան, Եղեգնաձոր, Հրազդան, Ջերմուկ, Սպիտակ, Վանաձոր	PG 64–22	PG 76–22	PG 82–22	PG 76–22	PG 76–22	PG 82–22	PG 70–22	PG 76–22	PG 76–22
Աշտարակ, Արմավիր, Արտաշատ, Երևան, Վայք	PG 70–22	PG 82–22	PG 88–22	PG 82–22	PG 82–22	PG 88–22	PG 76–22	PG 82–22	PG 82–22
Արարատ	PG 70–28	PG 82–28	PG 88–28	PG 82–28	PG 82–28	PG 88–28	PG 76–28	PG 82–28	PG 82–28
Արթիկ, Գյումրի, Թալին	PG 64–28	PG 76–28	PG 82–28	PG 76–28	PG 76–28	PG 82–28	PG 70–28	PG 76–28	PG 76–28
Բերդ	PG 64–10	PG 76–10	PG 82–10	PG 76–10	PG 76–10	PG 82–10	PG 70–10	PG 76–10	PG 76–10
Իջևան, Ղափան, Մեղրի, Ստեփանավան	PG 70–16	PG 82–16	PG 88–16	PG 82–16	PG 82–16	PG 88–16	PG 76–16	PG 82–16	PG 82–16
Ճամբարակ, Մարտունի, Սևան	PG 58–22	PG 70–22	PG 76–22	PG 70–22	PG 70–22	PG 76–22	PG 64–22	PG 70–22	PG 70–22
Վարդենիս	PG 58–28	PG 70–28	PG 76–28	PG 70–28	PG 70–28	PG 76–28	PG 64–28	PG 70–28	PG 70–28

Եզրակացություն

Հիմնվելով ՀՀ բնակավայրերի համար ճանապարհածածկի՝ նախապես սահմանված առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների վրա, որոնք հաշվի են առնում ինչպես նախագծի իրականացման տեղանքի դիրքը (աշխարհագրական լայնությունը), այնպես էլ հուսալիության գործոնները, կատարվել է «Սուպերփեյվ» համակարգով ՀՀ բնակավայրերի համար բիտումային կապակցանյութի PG դասերի սահմանում: Կապակցանյութի PG դասի բազային արժեքներից բացի ներկայացված են նաև PG բարձր դասի արժեքների ճշգրտումները, որոնք հաշվի են առնում ինչպես երթևեկության ինտենսիվությունը (ծառայության ժամկետի ընթացքում ստանդարտ առանցքների քանակը), այնպես էլ շարժման արագությունը:

Գրականության ցանկ

- [1] Հ. Հ. Գյուլզադյան, Վ. Հ. Տեր-Միսոնյան, ՀՀ բնակավայրերի համար ասֆալտբետոնային խառնուրդների կազմի նախագծման «Սուպերփեյվ» մեթոդի ջերմաստիճանային բնութագրերը. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 3 (84) (2024) 3-11:
- [2] Հ. Հ. Գյուլզադյան, Վ. Հ. Տեր-Միսոնյան, Ասֆալտբետոնային խառնուրդների կազմի նախագծման «Սուպերփեյվ» մեթոդը. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 3 (84) (2022) 3-11:
- [3] R.J. Cominsky, SHRP-A-407. The Superpave Mix Design Manual for New Construction and Overlays, 1994, 184 p.

- [4] **R.J. Cominsky, B.M. Killingsworth, R.M. Anderson, D.A. Anderson, W.W. Crockford**, NCHRP Report 409: Quality Control and Acceptance of Superpave-Designed Hot Mix Asphalt. Transportation Research Board, National Research Council, Washington, D.C., 1998, 215 p.
- [5] **Superpave. Final Report of the TRB Superpave Committee**. TRB, 2005, pp.1 – 56.
- [6] Superpave Mix Design, Asphalt Institute, Superpave, Series No. 2, 3rd Edition, Lexington, KY, Asphalt Institute Research Center. 2001, 102 p.
- [7] **Superpave performance Graded Asphalt Binder Specification and Testing**. Superpave Series N1 (SP-1), Asphalt Institute, 1997, 70 p.
- [8] **T.W. Kennedy, G.A. Huber, E.T. Harrigan, R.J. Cominsky, C.S. Hughes, H.V. Quintus, J.S. Moulthrop**, Superior Performing Asphalt Pavements (Superpave): The Product of the SHRP Asphalt Research Project. Strategic Highway Research Program, National Research Council, Washington, D.C (1994). Report No. SHRP-A-410.
- [9] **Asphalt Institute** (2011). The asphalt binder handbook, Manual Series 26, Lexington, Kentucky, 834 p.
- [10] **E.R. Brown, P.S. Kandhal, F.L. Roberts, Y.R. Kim, D.Y. Lee, T.W. Kennedy**, Hot Mix Asphalt Materials, Mixture Design, and Construction, 3rd ed., NAPA Research and Education Foundation, Lanham, Maryland, 2009 .
- [11] **K.A.Tutu, S. Ntramah, Y.A. Tuffour**, Superpave performance graded asphalt binder selection for asphalt mixture design in Ghana
- [12] **A.S. Abbas**, Temperature zoning of iraq for asphalt mix design. J. Eng. Sustain. Dev. 21 (5) (2017).
- [13] **I.M. Asi, Y. Khalayleh**, Adaptation of superpave asphalt concrete mix design procedure to jordan climatic and traffic conditions. Int. J. Pavement Res. Technol. 3(4) (2010) 154-161.
- [14] **N. Charoentham, K. Kanitpong**, Development of a performance grading system for asphalt binders used in Thailand. Asian Transp. Stud. 2(2) (2012) 121-138.
- [15] **M.W. Mirza, Z. Abbas, M.A. Rizvi**, Temperature zoning of pakistan for asphalt mix design. Pak. J. Eng. Appl. Sci. 8 (2011) 49-60.
- [16] **M. Ronald, G. Chehab, M.N. Fakhreddine**, Determination of temperature zoning for the great lakes region of africa based on superpave system. In: Proceedings of the International Conference on Civil Infrastructure and Construction, Doha, Qata, 2020, 10.29117/cic.2020.0062.
- [17] **H.A. Salem, D. Uzelac, B. Matic**, Temperature zoning of libya desert for asphalt mix design. Appl. Mech. Mater. 638–640 (2014) 1414-1426.
- [18] **A. Mohseni**. LTPP Seasonal Asphalt Concrete (AC) Pavement Temperature Models. Federal Highway Administration, McLean, VA (1998). Report No. FHWA-RD-97-103.
- [19] **AASHTO M 320** - Standard Specification for Performance-Graded Asphalt Binder, 2021, 9 p.
- [20] **ՀՀՇՆ 32-01-2022**. Ավտոմոբիլային ճանապարհներ, 206 էջ:
- [21] **ГОСТ Р 71404-2024**. Нежесткие дорожные одежды. Правила проектирования. Москва, 101с.
- [22] **R.B. McGennis, R.M. Anderson, T.W. Kennedy, M. Solaimanian**, Background of SUPERPAVE asphalt mixture design and analysis. Report No. FHWA-SA-95-003, Prepared for the Federal Highway Administration, Asphalt Institute, Lexington, Kentucky, 1995.

- [23] **A. Mohseni, S. Carpenter, J.D' Angelo**, Development of SUPERPAVE high-temperature performance grade (PG) based on rutting damage, J. Assoc. Asph. Paving Technol. 74 (2005) 197–254.
- [24] **National Highway Cooperative Research Program**. A Manual for Design of Hot Mix Asphalt with Commentary, Transportation Research Board, Washington, D.C, 2011, NCHRP Report 673.

ВЫБОР ВЯЖУЩЕГО ПРИ ПРОЕКТИРОВАНИИ СОСТАВА АСФАЛЬТОБЕТОНА ПО МЕТОДУ "СУПЕРПЕЙВ" ДЛЯ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ РА

Акоп Арутюнович Гюлзадян*, Виген Грантович Тер-Симонян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

**hakob_gyulzadyan@bk.ru*

Представлены значения классов PG $X \pm Y$ битумного вяжущего для населенных пунктов Республики Армения в соответствии с получившим широкое распространение в мировом дорожном строительстве в области проектирования состава асфальтобетона методом "Суперпейв". На основе расчетных максимальных и минимальных температур дорожного покрытия, заранее определенных для населенных пунктов РА, получены базовые значения классов битумного вяжущего. Помимо базовых значений, представлены также скорректированные значения высокотемпературного класса PG, которые учитывают как интенсивность движения (количество стандартных осей в течение срока службы), так и скорость движения.

Ключевые слова: асфальтобетон, вяжущее, эксплуатационный класс, расчетные температуры покрытия, усталостные трещины, температурные трещины, колеиность, класс вяжущего

SELECTION OF "SUPERPAVE" MIX DESIGN BINDER FOR REGIONS OF RA

Hakob Gyulzadyan*, Vigen Ter-Simonyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**hakob_gyulzadyan@bk.ru*

This paper presents values of classes PG $X \pm Y$ of bitumen binder for regions of the Republic of Armenia in accordance with the "Superpave" method, which is widely used in global road construction in the field of asphalt concrete mix design. Based on the high and low pavement design temperature, predetermined for the regions of the Republic of Armenia, the basic values of the bitumen binder grades were obtained. In addition to the basic values, adjusted values of the high-temperature PG grade are also presented, which take into account both the traffic value (the number of standard axes during the service life) and the traffic speed.

Keywords: asphalt concrete, binder, Performance Grade, Design Pavement Temperatures, fatigue cracks, temperature cracks, rutting

Գյուլզադյան Հակոբ Հարությունի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, «Ճանապարհներ և կամուրջներ» ամբիոն, (+374)94151019, hakob_gyulzadyan@bk.ru, **Տեր-Սիմոնյան Վիգեն Հրանտի, տ.գ.թ. դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, «Ճանապարհներ և կամուրջներ» ամբիոն, (+374)91214705, vtersimonyan@gmail.com

Гюлзадян Акон Арутюнович, канд.техн.наук, доцент (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дорог и мостов, (+374)94151019, hakob_gyulzadyan@bk.ru, **Тер-Симонян Виген Грантович, канд.техн.наук, доцент** (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Дорог и мостов, (+374)91214705, vtersimonyan@gmail.com

Gyulzadyan Hakob, doctor of philosophy (PhD) in Engineering, Associate Professor (RA, Yerevan) – NUACA, Chair “Highways and Bridges”, (+374)94151019, hakob_gyulzadyan@bk.ru, **Ter-Simonyan Vigen, doctor of philosophy (PhD) in Engineering, Associate Professor** (RA, Yerevan) – Chair “Highways and Bridges”, (+374)91214705, vtersimonyan@gmail.com

Ներկայացվել է՝ 02.04.2026թ.

Գրախոսվել է՝ 29.04.2026թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

**FDR ԽԱՌՆՈՒՐԴԻ ՁԳՄԱՆ ԱՄՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ԲԱԶԱԼՏԵ
ԹԵԼԻԿՆԵՐՈՎ ԵՎ ՑԵՄԵՆՏՈՎ**

Հակոբ Հարությունի Գյուլզադյան*, Խաչիկ Սիմոնի Զքոյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

**hakob_gyulzadyan@bk.ru*

Ներկայացվում է ասֆալտբետոնային ծածկերով պատվածքների ամբողջ խորությամբ վերականգնման ժամանակ ստացվող FDR խառնուրդի մեջ բազալտե թելիկների և ցեմենտի ներմուծման ազդեցության գնահատման համար լաբորատոր փորձարկումների արդյունքները: Արձանագրվել է, որ FDR խառնուրդի ձգման ամրության բարելավման տեսակետից օպտիմալ են բազալտե թելիկների պարունակության 0,4 % և երկարության 20 մմ արժեքները: Արձանագրվել են ինչպես FDR խառնուրդում միայն ցեմենտի ներմուծման արդյունքում նախնական խառնուրդի հետ համեմատած ձգման ամրության սահմանի աճի, այնպես էլ ցեմենտի և բազալտե թելիկների համալիր ներմուծման արդյունքում միայն ցեմենտով ամրացված փորձանմուշների հետ համեմատած ձգման ամրության սահմանի աճի ցուցանիշները: Փորձանմուշների սեղմման ամրության սահմանի վրա համանման ազդեցությունների հետ համեմատությամբ արձանագրվել է, որ ինչպես միայն ցեմենտի ներմուծումը, այնպես էլ ցեմենտի և բազալտե թելիկների համալիր ներմուծումն ավելի արդյունավետ է ազդում FDR խառնուրդի ձգման, քան սեղմման ամրության բնութագրերի բարելավման վրա:

Բանալի բառեր. ասֆալտբետոն, ամբողջ խորությամբ վերաօգտագործում, հավելանյութեր, բազալտե թելիկներ, ցեմենտ, ճաքակայունություն, սեղմման ամրության սահման, խզման ժամանակ ձգման ամրության սահման

Ներածություն

Հայաստանի ճանապարհային ցանցի վերականգնման գործընթացներում վերջին տարիներին զգալի տարածում է ստացել ամբողջ խորությամբ վերաօգտագործման (հետագայում FDR – Full Depth Reclamation) տեխնոլոգիան [1, 2]: Համեմատած ոչ կոշտ ճանապարհային պատվածքների վերականգնման այլ տեխնոլոգիաների հետ, ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայի կիրառման ժամանակ զգալիորեն նվազում են նոր հավելանյութերի ներմուծումները, էներգիայի ծախսը և դեպի մթնոլորտ վնասակար արտանետումները: Կառուցվածքային տեսակետից ոչ կոշտ պատվածքների վերականգնման ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս լիովին վերացնել ճանապարհածածկի վրա անվա-
հետքերի (rutting) և արտացոլվող ճաքառաջացման (reflective cracking) հետ կապված բոլոր հիմ-
նախնդիրները: Գոյություն ունեցող ասֆալտբետոնի և ստորև տեղադրված շերտերի մանրացու-
մը թույլ է տալիս ստանալ պատվածքի հատիկային շերտ, որը կարող է օգտագործվել ինչպես

առանց հավելանյութերի կիրառման, այնպես էլ կայունացնող հավելանյութերով: Խառնուրդի մեջ կայունացնող հավելանյութերի ավելացման կարիք սովորաբար լինում է այն դեպքերում, երբ մանրացված նյութը չի ունենում անհրաժեշտ մեխանիկական բնութագրեր և կառուցվածքային ամրություն՝ դիմագրավելու համար սպասվող արտաքին բեռնվածքներին: FDR խառնուրդներում առավել տարածված հավելանյութերից է պորտլանդցեմենտը [3]: Որպես հավելանյութ FDR խառնուրդներում պորտլանդցեմենտը կիրառություն է ստացել նաև ՀՀ-ում: [4]-ում ներկայացված է FDR խառնուրդներում պորտլանդցեմենտի և փրփրաբիտումի համալիր կիրառման վերլուծություն:

Ասֆալտբետոնային խառնուրդների վերաօգտագործման պրակտիկայում որպես հավելանյութ կիրառություն են ստացել բազալտե թելիկները [5-8]: Բազալտե թելիկը առանձնանում է իր բարձր մեխանիկական ամրությամբ, որը թույլ է տալիս դիմակայել մեծ ծանրաբեռնվածություններին, ցածր ջրակլանմամբ, ինչը նվազեցնում է խոնավության հետևանքով առաջացող վնասները և կայուն քիմիական հատկություններով, որոնք ապահովում են երկարաժամկետ դիմացկունություն: [9]-ում ներկայացված է FDR խառնուրդի սեղմման ամրության փոփոխության վրա բազալտե թելիկների երկարության և պարունակության ազդեցությունը: Որպես օպտիմալ պարամետրեր սահմանվել են 0,4 % պարունակությունը և 20 մմ երկարությունը, որը մեր կողմից ընդունվել է հետագա լաբորատոր և դաշտային փորձարկումների համար: [10]-ում կատարվել է FDR խառնուրդի սեղմման ամրության փոփոխության վրա բազալտե թելիկների և ցեմենտի համալիր ազդեցության վերլուծություն: Արձանագրվել է, որ FDR խառնուրդում 4,0 % ցեմենտի և 0,4 % բազալտե թելիկների համալիր ներմուծումը միայն ցեմենտով ամրացված փորձանմուշների հետ համեմատած բերել է սեղմման ամրության սահմանի 16,2 % աճի:


Ինչպես ցույց է տալիս FDR տեխնոլոգիայի կիրառման փորձը, ստացվող կառուցվածքային շերտի աշխատունակությունը մեծ մասամբ պայմանավորվում է դրա սահքաղիմացկանությամբ և ճաքակայունությամբ: Կառուցվածքային շերտի նյութի սեղմման ամրության սահմանը ոչ լիովին է գնահատում այդ շերտի սահքաղիմացկանության և ճաքակայունության ցուցանիշները, քանի որ ոչ լրիվ է համապատասխանում ձևավորվող հաշվարկային սխեմային: Նշված հատկությունների բնորոշման համար կիրառվում են այլ ցուցանիշներ, որոնցից են անուղղակի ձգման ամրությունը (indirect tensile strength) և առաձգականության մոդուլը (resilient modulus) [11]: Մեր կողմից հետագա ուսումնասիրության համար ընդունվել է ԳՕՍՏ 12801-98 ստանդարտով կանոնակարգվող խզման ժամանակ ձգման ամրության սահմանը (предел прочности на растяжение при расколе): Խառնուրդի այդ բնութագիրը գրեթե լիովին համապատասխանում է անուղղակի ձգման ամրությանը և կարող է ընդունվել որպես կառուցվածքային շերտի սահքաղիմացկանության և ճաքակայունության ցուցանիշ:

Նյութեր և մեթոդներ

Լաբորատոր փորձարկումների նկարագրությունը

FDR խառնուրդի խզման ժամանակ ձգման ամրության փոփոխության վրա բազալտե թելիկների ներմուծման ազդեցության գնահատման նպատակով պատրաստվել են փորձարարական նմուշների չորս խմբաքանակներ: Առաջին խմբաքանակը կազմել է նախնական աղացած խառնուրդը՝ առանց որևէ հավելանյութի: Երկրորդից չորրորդ խմբաքանակներում նախնական խառնուրդին ավելացվել է համապատասխանաբար 0,3, 0,4 և 0,5 % բազալտե թելիկներ: Երկրորդից չորրորդ խմբաքանակներում փոփոխության է ենթարկվել նաև ներմուծվող բազալտե թելիկների երկարությունները: Ընդունվել են երեք երկարություններ՝ 5, 10 և 20 մմ, ստանալով ենթախմբեր: Յուրաքանչյուր ենթախմբում ընդգրկվել են երեքական նմուշներ, որոնց ընդհանուր զանգվածը կազմել է 5400 գրամ: Ընդհանուր առմամբ խզման ժամանակ ձգման ամրության սահմանի փորձարկման համար լրացուցիչ պատրաստվել է 30 զլանաձև փորձանմուշ, որոնց չափերը համապատասխանում են սեղմման ամրության ստուգման համար պատրաստված փորձանմուշների չափերին:

Խզման ժամանակ ձգման ամրության սահմանի որոշման փորձարկումն իրականացվել է ըստ ԳՕՍՏ 12801-98 ստանդարտի սխեմայի (նկ. 1): Փորձարկումն իրականացվել է լաբորատոր մամլիչով՝ փոփոխելով ազդող ուղղաձիգ ուժը՝ մինչև փորձանմուշի խզումը:




Նկ. 1. Ձգման ամրության սահմանի որոշման փորձարկման սխեմա

Նկ. 2-ում ցույց է տրված փորձարարական զլանաձև նմուշների խզման ժամանակ ձգման ամրության սահմանի որոշումը մամլիչային փորձասարքի վրա:

Խզման ժամանակ ձգման ամրության սահմանների փորձնական արժեքները որոշվել են ըստ ԳՕՍՏ 12801-98-ի հետևյալ բանաձևի՝

$$R_p = \frac{P}{h \cdot d} \cdot 10^{-2},$$



Նկ. 2. Գլանաձև նմուշների ճաքատաքացման գործընթացը՝ մինչև դրանց խզումը

որտեղ R_p -ն խզման ժամանակ ձգման ամրությունն է, $U\eta a$, P -ն՝ քայքայող ուժը, λ , h -ը՝ նմուշի բարձրությունը, $u\lambda$, d -ն՝ նմուշի տրամագիծը, $u\lambda$:

Արդյունքներ և քննարկում

Աղ. 1-4-ում բերված են ըստ առանձին խմբաքանակների խզման ժամանակ ձգման ամրության սահմանների փորձնական արժեքները, ինչը թույլ է տվել կատարել հետևյալ եզրակացությունը՝ բազալտե թելիկների ներմուծումը FDR խառնուրդի մեջ բերել է փորձանմուշների խզման ժամանակ ձգման ամրության սահմանների աճին: Համեմատած առանց բազալտե թելիկների փորձանմուշների, 0,3 % բազալտե թելիկների հավելումով փորձանմուշներում սեղմման ամրության աճը՝ կախված թելիկների երկարությունից կազմել է 10,0...27,9 %: 0,4 և 0,5 % բազալտե թելիկների հավելումով փորձանմուշներում համապատասխան աճերը կազմել են 12,8...30,0 և 13,6...30,7%: Հիմնվելով բազալտե թելիկների ներմուծման արդյունքում խզման ժամանակ ձգման ամրության աճերի արձանագրված արժեքների վրա, կարող ենք եզրակացնել, որ բազալտե թելիկների ներմուծման համար առավել օպտիմալ պարունակությունները կազմում են 0,4...0,5 %: Սակայն հաշվի առնելով, որ բազալտե թելիկների 0,5% պարունակության դեպքում ձգման ամրության աճը 0,4% պարունակության համեմատ աննշան է, մեր կողմից հետագա հետազոտությունների համար որպես օպտիմալ ընդունվել է բազալտե թելիկների ներմուծման 0,4% արժեքը:

Աղյուսակ 1

Առանց բազալտե թելիկների խմբաքանակի փորձանմուշների խզման ժամանակ ձգման ամրության որոշման արդյունքները

Փորձանմուշի №№	Փորձանմուշի լայնական հատվածքի մակերեսը, սմ^2	Քայքայող ուժը, Ն	Խզման ժամանակ ձգման ամրության սահմանը, ՄՊա
1	78,40	2600	0,26
2	78,50	2900	0,29
3	78,40	2900	0,29
Միջին արժեք	78,43	2800	0,28

Աղյուսակ 2

0,3 % բազալտե թելիկների հավելումով խմբաքանակի փորձանմուշների խզման ժամանակ ձգման ամրության որոշման արդյունքները

Փորձանմուշի №№	Փորձանմուշի լայնական հատվածքի մակերեսը, սմ^2	Քայքայող ուժը, Ն	Խզման ժամանակ ձգման ամրության սահմանը, ՄՊա	Չզման ամրության աճը, %
Բազալտե թելիկների երկարությունը 5 մմ				
1	78,46	3060	0,306	
2	78,43	3100	0,310	
3	78,39	3080	0,308	
Միջին արժեք	78,43	3080	0,308	10,0
Բազալտե թելիկների երկարությունը 10 մմ				
1	78,42	3310	0,331	
2	78,50	3340	0,334	
3	78,44	3340	0,334	
Միջին արժեք	78,45	3330	0,333	18,9
Բազալտե թելիկների երկարությունը 20 մմ				
1	78,47	3590	0,359	
2	78,50	3600	0,360	
3	78,46	3550	0,355	
Միջին արժեք	78,48	3580	0,358	27,9

Աղյուսակ 3

0,4 % բազալտե թելիկների հավելումով խմբաքանակի փորձանմուշների խզման ժամանակ ձգման

ամրության որոշման արդյունքները

Փորձանմուշի №№	Փորձանմուշի լայնական հատվածքի մակերեսը, $սմ^2$	Քայքայող ուժը, Ն	Խզման ժամանակ ձգման ամրության սահմանը, ՄՊա	Ձգման ամրության աճը, %
Բազալտե թելիկների երկարությունը 5 մմ				
1	78,44	3120	0,312	
2	78,46	3170	0,317	
3	78,46	3190	0,319	
Միջին արժեք	78,45	3160	0,316	12,8
Բազալտե թելիկների երկարությունը 10 մմ				
1	78,45	3470	0,347	
2	78,49	3480	0,348	
3	78,48	3460	0,346	
Միջին արժեք	78,47	3470	0,347	23,9
Բազալտե թելիկների երկարությունը 20 մմ				
1	78,47	3660	0,366	
2	78,50	3650	0,365	
3	78,50	3610	0,361	
Միջին արժեք	78,49	3640	0,364	30,0

Ներմուծվող բազալտե թելիկների երկարության մեծացումը դրական ձևով է արտահայտվել խզման ժամանակ ձգման ամրության արժեքների աճի վրա: Կախված խառնուրդում թելիկների պարունակությունից, խզման ժամանակ ձգման ամրության աճը 5 մմ երկարությամբ ներմուծվող թելիկների դեպքում կազմել է 10,0...13,6%: 10 և 20 մմ երկարությամբ ներմուծվող թելիկների դեպքում խզման ժամանակ ձգման ամրության աճերը համապատասխանաբար կազմել են 18,9...24,3 և 27,9...30,7 %: Խզման ժամանակ ձգման ամրության աճի արձանագրված արժեքները թույլ են տալիս եզրակացնել, որ խզման ժամանակ ձգման ամրության աճի տեսակետից ներմուծվող բազալտե թելիկների օպտիմալ երկարությունը կազմում է 10...20 մմ: Մեր կողմից հետազա հետազոտությունների համար որպես օպտիմալ ընդունվել է բազալտե թելիկների երկարության 20 մմ արժեքը:

Աղյուսակ 4

0,5 % բազալտե թելիկների հավելումով խմբաքանակի փորձանմուշների խզման ժամանակ

ձգման ամրության որոշման արդյունքները

Փորձանմուշի №№	Փորձանմուշի լայնական հատվածքի մակերեսը, սմ ²	Քայքայող ուժը, Ն	Խզման ժամանակ ձգման ամրության սահմանը, ՄՊա	Ձգման ամրության աճը, %
Բազալտե թելիկների երկարությունը 5 մմ				
1	78,45	3180	0,318	
2	78,45	3170	0,317	
3	78,40	3190	0,319	
Միջին արժեք	78,43	3180	0,318	13,6
Բազալտե թելիկների երկարությունը 10 մմ				
1	78,42	3490	0,349	
2	78,50	3490	0,349	
3	78,44	3460	0,346	
Միջին արժեք	78,45	3480	0,348	24,3
Բազալտե թելիկների երկարությունը 20 մմ				
1	78,47	3660	0,366	
2	78,49	3690	0,369	
3	78,50	3630	0,363	
Միջին արժեք	78,48	3660	0,366	30,7

Մեր կողմից փորձնականորեն գնահատվել է նաև FDR խառնուրդի ձգման ամրության բարելավման վրա ցեմենտի և բազալտե թելիկների համալիր ազդեցությունը:

Խառնուրդում պորտլանդցեմենտի պարունակությունն ընդունվել է անփոփոխ՝ 4% ըստ զանգվածի, իսկ բազալտե թելիկների ներմուծման պարունակությունը և երկարություններն ընդունվել են համապատասխանաբար 0,4 % և 20 մմ: Փորձանմուշների ընդհանուր քանակը կազմել է 6:

Աղ. 5-ում բերված են ցեմենտի և բազալտե թելիկների համալիր ներմուծմամբ փորձանմուշների խզման ժամանակ ձգման ամրության որոշման արդյունքները: Խզման ժամանակ ձգման ամրության փորձնական արժեքները որոշվել են ըստ բանաձևի:

Աղ. 6-ում բերված են որպես հիմնական ընդունված 0,4 % և 20 մմ երկարությամբ բազալտե թելիկների ներմուծմամբ տարբերակի համար խզման ժամանակ ձգման ամրության սահմանների համեմատությունն առանց ցեմենտի և ցեմենտի 4 % հավելումով դեպքերի համար:

Աղյուսակ 5

Ցեմենտի և բազալտե թելիկների համալիր ներմուծմամբ փորձանմուշների խզման ժամանակ ձգման ամրության որոշման արդյունքները

Փորձանմուշի №№	Փորձանմուշի լայնական հատվածքի մակերեսը, սս ²	Քայքայող ուժը, Ն	Խզման ժամանակ ձգման ամրության սահմանը, ՄՊա
Միայն ցեմենտի ներմուծմամբ փորձանմուշներ			
1	78,50	8130	0,813
2	78,40	8120	0,812
3	78,50	8050	0,805
Միջին արժեք	78,46	8100	0,810
Ցեմենտի և բազալտե թելիկների համալիր ներմուծմամբ փորձանմուշներ			
1	78,48	10000	1,000
2	78,50	9900	0,990
3	78,50	10400	1,040
Միջին արժեք	78,49	10100	1,010

Աղյուսակ 6

Խզման ժամանակ ձգման ամրության սահմանի վրա հավելանյութերի ներմուծման արդյունավետության համեմատական բնութագիր

Խզման ժամանակ ձգման ամրության սահմանի միջին արժեքը, ՄՊա				$\frac{R_{p3} - R_{p1}}{R_{p1}} \cdot 100\%$	$\frac{R_{p4} - R_{p3}}{R_{p4}} \cdot 100\%$
առանց հավելա նյութերի, R_{p1}	բազալտե թելիկների ներմուծմամբ, R_{p2}	ցեմենտի ներմուծմամբ, R_{p3}	բազալտե թելիկների և ցեմենտի ներմուծմամբ, R_{p4}		
0,280	0,364	0,810	1,010	189,3	24,7

Աղ. 5 և 6- ը թույլ են տվել կատարել հետևյալ եզրակացությունները՝

- ◆ FDR խառնուրդում 4 % ցեմենտի ներմուծումը նախնական խառնուրդի հետ համեմատած բերել է խզման ժամանակ ձգման ամրության սահմանի 189,3 % աճի,
- ◆ խառնուրդում 4,0% ցեմենտի և 0,4% բազալտե թելիկների համալիր ներմուծումը միայն ցեմենտով ամրացված փորձանմուշների հետ համեմատած բերել է խզման ժամանակ ձգման ամրության սահմանի 24,7 աճի:

Համեմատելով փորձանմուշների սեղմման ամրության փոփոխության վրա ցեմենտի և բազալտե թելիկների ներմուծման ազդեցության հետ [10], կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները՝

- ◆ ցեմենտի ներմուծման ազդեցությունը FDR խառնուրդի խզման ժամանակ ձգման ամրության արժեքի բարելավման վրա ավելի զգալի է, քան նույնի ազդեցությունը սեղմման ամրության սահմանի բարելավման վրա: Եթե 4 % ցեմենտի ներմուծումը բերել է FDR խառնուրդի սեղմման ամրության սահմանի 115,5 % աճի, ապա նույն քանակությամբ ցեմենտի ներմուծմամբ խզման ժամանակ ձգման ամրության սահմանի արժեքի աճը կազմել է 189,3 %,
- ◆ համեմատած FDR խառնուրդում միայն ցեմենտի ներմուծման հետ, ցեմենտի և բազալտե թելիկների համալիր ներմուծման դեպքում խզման ժամանակ ձգման ամրության սահմանի արժեքի աճն ավելի զգալի է սեղմման ամրության սահմանի աճի համեմատությամբ: Եթե ցեմենտով փորձանմուշներում բազալտե թելիկների ներմուծումը բերել է սեղմման ամրության սահմանի 16,2 % աճի, ապա խզման ժամանակ ձգման ամրության սահմանի արժեքի աճը կազմել է 24,7 %:

Եզրակացություն

Բազալտե թելիկների ներմուծումը FDR խառնուրդի մեջ բերել է փորձանմուշների խզման ժամանակ ձգման ամրության սահմանների աճին: Համեմատելով տարբեր պարունակություններով և երկարություններով բազալտե թելիկների ազդեցությունը փորձանմուշների ձգման ամրության փոփոխության վրա, որպես օպտիմալ ընդունվել են բազալտե թելիկների պարունակության 0,4 % և երկարության 20 մմ արժեքները:

FDR խառնուրդում 4 % ցեմենտի ներմուծումը նախնական խառնուրդի հետ համեմատած բերել է խզման ժամանակ ձգման ամրության սահմանի 189,3 % աճի: Խառնուրդում 4 % ցեմենտի և 0,4% բազալտե թելիկների համալիր ներմուծումը միայն ցեմենտով ամրացված փորձանմուշների հետ համեմատած բերել է խզման ժամանակ ձգման ամրության սահմանի 24,7 % աճի:

Ցեմենտի ներմուծման ազդեցությունը FDR խառնուրդի ձգման ամրության արժեքի բարելավման վրա ավելի զգալի է, քան նույնի ազդեցությունը սեղմման ամրության սահմանի բարելավման վրա: Եթե 4,0 % ցեմենտի ներմուծումը բերել է FDR խառնուրդի սեղմման ամրության սահմանի 115,5 % աճի, ապա նույն քանակությամբ ցեմենտի ներմուծմամբ ձգման ամրության սահմանի արժեքի աճը կազմել է 189,3 %: Համեմատած FDR խառնուրդում միայն ցեմենտի ներմուծման հետ, ցեմենտի և բազալտե թելիկների համալիր ներմուծման դեպքում ձգման ամրության սահմանի արժեքի աճն ավելի զգալի է սեղմման ամրության սահմանի աճից: Եթե ցեմենտով փորձանմուշներում բազալտե թելիկների ներմուծումը բերել է սեղմման ամրության սահմանի 16,2 % աճի, ապա ձգման ամրության սահմանի արժեքի աճը կազմել է 24,7 %:

Գրականության ցանկ

- [1] **Հ. Հ. Գյուլզադյան, Ա.Ս. Ղազարյան**, Ասֆալտբետոնային ծածկերի վերաօգտագործման տեխնոլոգիայի կիրառության միջազգային փորձի վերլուծություն, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ III (66) (2017) 32-39:
- [2] **Հ. Հ. Գյուլզադյան, Խ. Ս. Չքոյան**, Ճանապարհային պատվածքների ամբողջ խորությամբ վերաօգտագործելու փորձի վերլուծություն, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ I (82) (2022) 31-40:
- [3] **D.R. Luhr, W.S. Adaska, G.E. Halsted**, Guide to Full-Depth Reclamation (FDR) with Cement, Portland Cement Association, 2007.
- [4] **Խ.Ս. Չքոյան**, Ճանապարհային պատվածքի ամբողջ խորությամբ վերաօգտագործման տեխնոլոգիայում փրփրաբիտումի և ցեմենտի օգտագործման վերլուծություն, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ II (92) (2025) 89-96:
- [5] **I. Asi, F.I. Shalabi, J. Naji**, Use of basalt in asphalt concrete mixes, Construction and Building Materials 23(1) (2009) 498-506.
- [6] **N. Morova**, Investigation of usability of basalt fibers in hot mix asphalt concrete, Construction and Building Materials 47 (2013) 175-180.
- [7] **Y. Zheng, Y. Cai, G. Zhang, H. Fang**, Fatigue property of basalt fiber-modified asphalt mixture under complicated environment, Journal of Wuhan University of Technology-Mater. Sci. Ed. 29(5) (2014) 996-1004.
- [8] **Խ.Ս. Չքոյան**, Բազալտե թելիկների ֆիզիկամեխանիկական հատկությունները և դրանց կիրառությունը ճանապարհաշինարարության մեջ Հայաստանի Հանրապետությունում, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ II (92) (2025) 97-102:
- [9] **Խ.Ս. Չքոյան**, Լաբորատոր պայմաններում բազալտե թելիկների չափերի օպտիմալ որոշումն ասֆալտբետոնե խառնուրդներում, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ III (93) (2025) 16-26:
- [10] **Խ.Ս. Չքոյան**, Ասֆալտբետոնե խառնուրդների բարելավում բազալտե թելիկների և ցեմենտի հավելումով, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ III (93) (2025) 27-35:
- [11] **W. Fedrigo**, Full-depth reclamation of pavements with Portland cement: Setting the basis for a mix design method. MSc thesis, Federal University of Rio Grande do Sul, 2015.

**ПОВЫШЕНИЕ ПРОЧНОСТИ НА РАСТЯЖЕНИЕ FDR СМЕСИ С ИСПОЛЬЗОВАНИЕМ
БАЗАЛЬТОВЫХ ВОЛОКОН И ЦЕМЕНТА**

Акоп Арутюнович Гюлзадян*, Хачик Симонович Чколян

Национальный университет архитектуры и строительства Армении, Ереван, Армения

*hakob_gyulzadyan@bk.ru

Представлены результаты лабораторных испытаний для оценки эффекта введения базальтовых волокон и цемента в смесь FDR, получаемую при восстановлении на всю глубину дорожных одежд с асфальтобетонными покрытиями. Было установлено, что с точки зрения улучшения прочности на растяжение при разрыве смеси FDR, значения содержания базальтовых волокон 0,4% и их длины 20 мм являются оптимальными. Были зафиксированы, как показатели улучшения прочности на растяжение при разрыве в результате введения только цемента в смесь FDR по сравнению с исходной смесью, так и показатели аналогичных улучшений комплексного введения цемента

и базальтовых волокон по сравнению с образцами с введением в качестве добавок только цемента. По сравнению с аналогичным воздействием на предел прочности испытательных образцов на сжатие, было зарегистрировано, что как введение в качестве добавок только цемента, так и комплексное введение цемента и базальтовых волокон более эффективно влияют на улучшение характеристик прочности смеси FDR на растяжение, чем на сжатие.

Ключевые слова: асфальтобетон, повторное использование на всю глубину, добавки, базальтовые волокна, цемент, устойчивость к растрескиванию, предел прочности на сжатие, предел прочности на разрыв

IMPROVEMENT OF THE TENSILE STRENGTH OF FDR MIXTURE USING BASALT FIBERS AND CEMENT

Hakob Gyulzadyan*, Khachik Chkolyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

*hakob_gyulzadyan@bk.ru

This paper presents the results of laboratory investigations conducted to evaluate the effect of incorporating basalt fibers and cement into Full Depth Reclamation (FDR) mixtures obtained during the rehabilitation of asphalt concrete pavements. It was established that, from the standpoint of improving the tensile strength characteristics of the FDR mixture, the optimal parameters are a basalt fiber content of 0.4% and a fiber length of 20 mm. The study recorded an increase in the tensile strength limit of the mixture compared with the initial mixture as a result of introducing cement alone, as well as a further increase in tensile strength compared with specimens stabilized only with cement when cement and basalt fibers were incorporated jointly. In comparison with the corresponding effects on the compressive strength limit of the specimens, it was determined that both the incorporation of cement alone and the combined incorporation of cement and basalt fibers exert a more significant influence on the improvement of the tensile strength characteristics of the FDR mixture than on its compressive strength characteristics.

Keywords: Asphalt concrete, full depth reclamation, additives, basalt fibers, cement, crack resistance, compressive strength limit, indirect tensile strength limit at failure

Գյուլզադյան Հակոբ Հարությունի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, «Ճանապարհներ և կամուրջներ» ամբիոն, (+374)94151019, hakob_gyulzadyan@bk.ru, **Չքոլյան Խաչիկ Միսնի, տ.գ.թ.** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, «Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման» ամբիոն, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Гюлзадян Акон Арутюнович, к.т.н. доцент (РА, г. Ереван) – НУАСА, кафедра “Дорог и мостов”, (+374)94151019, hakob_gyulzadyan@bk.ru, **Чколян Хачик Симонович, к.т.н.** (РА, г. Ереван) – НУАСА, кафедра “Технологии и организации строительного производства”, ассистент, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Gyulzadyan Hakob, doctor of philosophy (PhD) in Engineering, Associate Professor (RA, Yerevan) – NUACA, Chair “Highways and Bridges”, (+374)94151019, hakob_gyulzadyan@bk.ru, **Chkolyan Khachik, doctor of philosophy (PhD) in Engineering** (RA, Yerevan) – NUACA, Chair “Technology and Organisation of Construction Production”, (+374)77028155, xachik.chqolyan@mail.ru

Ներկայացվել է՝ 10.04.2026թ.

Գրախոսվել է՝ 29.04.2026.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

ՄԵՔԵՆԱՑԱԿԱՆ ԵՎ ԽՈՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ ՕԴԱՏԻԶԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ ՕԲՑԵԿՏՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Լուսինե Ներսեսի Եղիյան

«Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՄՊԸ, ք. Երևան, ՀՀ

lusineyeghyan@gmail.com

Օդատիեզերական պատկերները լայնորեն կիրառվում են տարբեր ոլորտներում (շրջակա միջավայրի մշտադիտարկում, քաղաքաշինություն, աղետների կառավարում և այլն), սակայն պատկերից օբյեկտների ավտոմատ հայտնաբերումը մնում է բարդ խնդիր: Հոդվածում ուսումնասիրվում են մեքենայական և խոր ուսուցման մեթոդների կիրառումը՝ հենք ընդունելով դրանց կիրառական բաղադրիչն ու արդյունավետությունը: Դիտարկվում են ժամանակակից մոտեցումներ, մասնավորապես, CNN, Mask R-CNN և Segment Anything Model (SAM) մոդելները: Իրականացվում է փորձնական վերլուծություն՝ գնահատելով մոդելների ճշգրտությունը, կիրառելիությունը և վերջիններիս հնարավորությունները ՀՀ-ի համար: Արդյունքները ցույց են տալիս, որ խոր ուսուցման մեթոդներն ապահովում են բարձր ճշգրտություն և ավտոմատացման մակարդակ, միաժամանակ ունենալով որոշ սահմանափակումներ՝ կապված աղմուկի և ընդհանրացման խնդիրների հետ:

Բանալի բառեր. օդատիեզերական պատկերներ, խոր ուսուցում, մեքենայական ուսուցում, օբյեկտների հայտնաբերում, սեզմենտացիա, CNN, Mask R-CNN, Segment Anything Model

Ներածություն

Բարձր լուծաչափով օդատիեզերական պատկերները բարձացնում են տվյալների մշակման ավտոմատացման հնարավորությունները և ճշգրտությունը: Հատկապես կարևոր է տարբեր տիպի օբյեկտների՝ շենքերի, ճանապարհների, բնական կառույցների և այլ տարրերի հայտնաբերումն ու սեզմենտացիան, որոնք առանցքային նշանակություն ունեն տարածական վերլուծության համար:

Ավանդական մեթոդները (թվայնացում, սպեկտրալ դասակարգում և այլն) բարդ ֆոնային և կառուցվածքային օբյեկտների դեպքում (շինություն, ճանապարհ և այլն) ունեն ցածր կիրառելիություն: Խոր ուսուցման մեթոդների զարգացումը, մասնավորապես, կոնվոլյուցիոն նեյրոնային ցանցերի (CNN) կիրառումը, զգալիորեն բարձրացրել է տարբեր օբյեկտների հայտնաբերման և մեկնաբանման ճշգրտությունը [1]: Ժամանակակից semantic segmentation մոտեցումները ներառում են նաև Fully Convolutional Networks (FCN) ճարտարապետությունը [2]: Օդատիեզերական պատկերների մշակման համար լայնորեն կիրառվում են նաև Pyramid Scene Parsing Network (PSPNet) մոդելները [3], որոնք արագորեն զարգանում են, սակայն ներկայումս ամենատարածված մոդելներն են DeepLab-երը, որոնք լայնորեն կիրառվում են իմաստային սեզմենտացիայի

(semantic segmentation) խնդիրներում [4], բայցևայնպես պատկերի ճանաչման կամ հայտնաբերման համար կիրառվում են նաև YOLO ընտանիքի մոդելները [5]:

Տարբեր մոդելներ, օրինակ Mask R-CNN, ապահովում է օբյեկտների պիքսելային մակարդակով սեգմենտացիա, իսկ մշակված Segment Anything Model (SAM) առաջարկում է առավել համապիտանի մոտեցում՝ տարբեր բնույթի օբյեկտների ճկուն առանձնացման համար:

Միևնույն ժամանակ առկա են խնդիրներ, կապված տարբեր օբյեկտների բազմազանության, մոդելների ադապտացիայի և ադմուկի նկատմամբ կայունության հետ, ինչը պայմանավորում է թեմայի արդիականությունը:


Հոդվածում ուսումնասիրվում են մեքենայական և խոր ուսուցման մեթոդների կիրառման հնարավորություններն օդատիեզերական պատկերներում տարբեր օբյեկտների հայտնաբերման և սեգմենտացիայի միջոցով: Դիտարկվում են ժամանակակից մոտեցումներ, մասնավորապես, CNN-հիմքով մոդելներ, Mask R-CNN և Segment Anything Model (SAM): Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ խոր ուսուցման մեթոդներն ապահովում են բարձր ճշգրտություն և ավտոմատացման մակարդակ՝ միաժամանակ պահպանելով որոշ սահմանափակումներ՝ կապված ընդհանրացման և բարդ տեսարանների հետ:

Սույն հետազոտության նպատակն է գնահատել մեքենայական և խոր ուսուցման մոդելների կիրառելիությունը բարձր լուծաչափով օդատիեզերական պատկերների ավտոմատ սեգմենտացիայի համար: Ուսումնասիրվել և համեմատվել են U-Net, Mask R-CNN և SAM մոդելները՝ գնահատելով դրանց ճշգրտությունն ու կիրառելիությունը ՀՀ-ում:

Մոդելների կիրառման համար բարդ ռելիեֆը, քարքարոտ մակերեսները և խիտ կառուցապատված տարածքները, ուղղակիորեն ազդում են ճշգրտության վրա: Առաջարկված մոտեցումը փորձարկվել է Արալեզ բնակավայրում՝ շեշտադրելով ոչ թե տարածքը, այլ իրականացված մեթոդը:

Նյութեր և մեթոդներ

Իրականացվել է բարձր լուծաչափով օդատիեզերական պատկերներում օբյեկտների ավտոմատ առանձնացում՝ հիմնված Meta AI-ի Segment Anything Model (SAM) սեգմենտացիոն մոդելի վրա: SAM-ը նախագծված է որպես promptable և class-agnostic մոդել՝ ապահովելով zero-shot փոխանցելիություն նոր պատկերային բաշխումների և խնդիրների նկատմամբ [6] (նկ. 1): Ինչպես նաև իրականացվել է բարձր լուծաչափով օդատիեզերական պատկերից օբյեկտների հայտնաբերմանը միտված տարաբանյութ մեթոդների համադրում՝ ներառելով պատկերների հատվածավորում (tiling), սեգմենտացիոն դիմակների (mask)-երի համադրում և արդյունքների հետմշակում:



Նկ. 1. Աշխատանքի իրականացման պարզ սխեմա

Սեգմենտացիայից հետո իրականացվել է դիմակների (mask) հետմշակում՝ աղմուկից մաքրելու նպատակով: Հետմշակման փուլը հնարավորություն է տվել նվազեցնել false positive արդյունքները և բարելավել վերջնական արդյունքի ճշգրտությունը:

Մուտքային պատկեր

Հետազոտության ընթացքում կիրառվել է ՀՀ տարածքի բարձր լուծաչափով օդատիեզերական պատկեր՝ ստացված UAV/օդալուսանկարահանման միջոցով: Պատկերի տարածական լուծաչափը կազմել է մինչև 5 սմ/պիքսել: Մուտքային տվյալները ներկայացված են GeoTIFF ձևաչափով և ներառում են RGB ալիքներ: Հետազոտվող տարածքը ներառում է շենք-շինություններ և բարդ կառուցվածքային տարրեր, որոնք օգտագործվել են սեգմենտացիոն մոդելների համեմատական գնահատման համար՝ հետագա փուլերում վեկտորացումը և տարածական վերլուծությունը ճշգրիտ իրականացնելու նպատակով: Սեգմենտացիայի համար կիրառվել է RGB ներկայացում՝ որպես մուտքային տվյալ (նկ. 2):



Նկ. 2. Բարձր լուծաչափով պատկեր (հատված հետազոտվող տարածքից)

Կիրառվել է կետային ամպ, որպեսզի ուսուցման տվյալները և վալիդացիոն տվյալների համեմատությունը լինի առավել ճշգրիտ (տվյալ դեպքում շենք - շինությունների համար): Հատկապես, որ կիրառված օրինակի դեպքում ուսուցման փուլը բացակայում է (նկ. 3):

Կետային ամպի տվյալները կիրառվել են որպես լրացուցիչ ստուգաչափական աղբյուր՝ շենքերի եզրագծերի և բարձրությունների համեմատական գնահատման նպատակով: Կետային ամպի կիրառությունը հնարավորություն է տվել նվազեցնել false positive արդյունքները և բարձրացնել շենքերի ավելի բարձր տեսանելիություն [7]:



Նկ. 3. Օդալուսանկարը և լիդար տվյալների համակցություն

GPU հիշողության սահմանափակումներից խուսափելու համար կիրառվել է պատկերի բաժանում հատվածների (tiling) սահող պատուհանի (sliding window) սկզբունքով՝ սահմանված tile չափով և նվազեցնելով overlay/overlap-ը՝ եզրային անհամապատասխանությունները [2]:

Նախնական մշակում

Մուտքային պատկերը (GeoTIFF) փոխարկվում է հաշվարկների համար հարմար պատկերային ներկայացման ձևով ($H \times W \times C$): Պատկերի համար կիրառվում է ինտենսիվության մասշտաբավորում, մասնավորապես, ուսումնասիրված տարածքի համար (16-bit/float ռաստերներ) կիրառվել է $[0, 255]$ միջակայքը: Հետագայում իրականացվել է պատկերի բաժանում հատվածների (tiling), որի նպատակը մեծ ծավալների հաշվարկային բարդությունն ու GPU հիշողության սահմանափակումները նվազեցնելն է: Tile -ի չափերն ըստ պատկերի ընտրվել են $512 \dots 512$ px, իսկ համադրումը (overlap)՝ 10...25 %, որն օգնում է նվազեցնել եզրային կտրտվածության (edge effects) ազդեցությունը (նկ. 4) [6]:



Նկ. 4. Նախնական սեգմենտացիայի արդյունք

Ինչպես նշվեց վերևում, օդատիեզերական պատկերների սեգմենտացիայի համար լայնորեն կիրառվում են ինչպես դասական խոր ուսուցման մոդելներ, այնպես էլ նոր սերնդի foundation մոդելներ: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մոդելները՝ U-Net, Mask R-CNN և Segment Anything Model (SAM): Մոդելներն ունեն ճարտարապետական, մաթեմատիկական և գործառնական տարբերություններ, որոնց միջոցով կարելի է տարբերակել արդյունքների ճշգրտությունը (աղ. 1, 2, 3):

Աղյուսակ 1

Ալգորիթմի ճարտարապետական տարբերություններ

Մոդել	Տիպ	Հիմնական գաղափար
U-Net*	Սեմանտիկ սեգմենտացիա	Encoder-decoder + skip connection
Mask R-CNN**	Instance սեգմենտացիա	Օբյեկտների հայտնաբերում + mask
SAM***	Foundation model	Prompt-based սեգմենտացիա

* - **U-Net** — դասական encoder-decoder կառուցվածք է, որը լավ է աշխատում փոքր dataset-ներով [8],

** - **Mask R-CNN** — օբյեկտների հայտնաբերում + mask, լավ է instance-level խնդիրների համար [9],

*** - **SAM** — prompt-driven, zero-shot, չի պահանջում վերապատրաստում կոնկրետ տվյալների վրա [6]:

Աղյուսակ 2

Ալգորիթմի գործնական համեմատություն

Չափանիշ	U-Net	Mask R-CNN	Segment Anything Model (SAM)
Տվյալների պահանջ	Բարձր՝ պահանջում է մեծ ծավալի նշագրված (annotated) տվյալներ	Բարձր՝ պահանջում է ճշգրիտ instance-level annotation	Ցածր՝ չի պահանջում նախնական ուսուցում (zero-shot)
Ճշգրտություն	Բարձր՝ համապատասխան ուսուցման դեպքում	Բարձր՝ instance-level սեգմենտացիայի համար	Բարձր՝ ընդհանուր կիրառման դեպքում
Fine-tuning անհրաժեշտություն	Պարտադիր	Պարտադիր	Չի պահանջվում
Հաշվարկային արագություն	Միջին	Ցածր (հաշվարկային բարդության պատճառով)	Բարձր
Ընդհանրացման կարողություն (Generalization)	Սահմանափակ, կախված ուսուցման տվյալներից	Միջին	Բարձր
Կիրառելիություն օդատիեզերական պատկերներում	Արդյունավետ	Արդյունավետ	Բարձր արդյունավետություն

Աղյուսակ 3

Սեգմենտացիոն մոդելների համեմատական գնահատում

Մոդել	IoU	Precision	Recall	F1-score
U-Net	0,72	0,76	0,70	0,73
Mask R-CNN	0,78	0,81	0,75	0,78
SAM	0,82	0,84	0,80	0,82

Սեգմենտացիոն մոդելների գնահատման համար ընտրվել հատվածներ, որտեղ առկա են շենք-շինություններ, ճանապարհներ, ծառեր և այլն: Գնահատումն իրականացվել է reference segmentation տվյալների և մոդելների արդյունքների համեմատության միջոցով:

Համեմատական վերլուծության ընթացքում հաշվարկվել են IoU, Precision, Recall և F1-score ցուցանիշները: Գնահատման համար կիրառվել են հատվածավորված (tile-based) բարձր լուծաչափով օդատիեզերական պատկերներ, իսկ ստացված արդյունքները ներկայացնում են մոդելների հարաբերական արդյունավետությունը հետազոտվող տարածքի պայմաններում:

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ SAM մոդելն ապահովում է համեմատաբար բարձր ճշգրտություն և ավելի լավ ընդհանրացման կարողություն՝ հատկապես բարդ կառուցվածք ունեցող օբյեկտների դեպքում: U-Net և Mask R-CNN մոդելները ևս ցուցաբերել են բավարար արդյունքներ, սակայն դրանց արդյունավետությունը մեծապես կախված է նախնական նշագրված տվյալների որակից և ծավալից:

Արդյունքներ և քննարկում

Տարբեր սեգմենտացիոն մոդելների կիրառումը ցույց է տալիս, որ դրանց արդյունավետությունը կախված է ինչպես տվյալների բնույթից, այնպես էլ առաջադրված խնդրի տեսակից:

U-Net մոդելը կարող է ապահովել բարձր ճշգրտություն, հատկապես լավ նշագրված տվյալների առկայության դեպքում, սակայն դրա կիրառումը սահմանափակվում է մեծ ծավալի annotation-ի անհրաժեշտությամբ [10]:

Mask R-CNN մոդելը հնարավորություն է տալիս իրականացնել օբյեկտների instance-level հայտնաբերում և սեգմենտացիա, ինչը կարևոր է առանձին օբյեկտների տարանջատման համար, սակայն այն պահանջում է զգալի հաշվարկային ռեսուրսներ և բարդ ուսուցման գործընթաց:

Segment Anything Model-ը (SAM) առանձնանում է իր ճկունությամբ և zero-shot կիրառելիությամբ՝ հնարավորություն տալով իրականացնել սեգմենտացիա առանց նախնական վերապատրաստման տվյալների [11]: Այն հատկապես արդյունավետ է բարդ ճարտարապետական տեսք ունեցող օբյեկտների և մեծ չափերով պատկերների համար, ինչպես նաև հարմար է մեծ չափերի պատկերների մշակման համար: Միննույն ժամանակ որոշ դեպքերում հնարավոր է ստանալ ավելորդ կամ աղմուկային mask-եր, որը հետագա փուլերում պահանջում է հետմշակում [12]:

Ընդհանուր առմամբ, կատարված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ առավել արդյունավետ է SAM մոդելի կիրառումը, որը, պահպանելով բարձր ճշգրտություն, ապահովում է նաև բարձր ընդհանրացման կարողություն և չի պահանջում նախնական ուսուցում:

Եզրակացություն

Սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են օդատիեզերական պատկերների սեգմենտացիայի մեթոդները՝ կիրառելով U-Net, Mask R-CNN և Segment Anything Model (SAM) մոդելները: Մեթոդաբանությունը ներառել է տվյալների նախնական մշակում, սեգմենտացիա և հետմշակում:

Արդյունքները ցույց են տալիս, որ դասական մոդելներն ապահովում են բարձր ճշգրտություն՝ համապատասխան ուսուցման տվյալների առկայության դեպքում, մինչդեռ SAM մոդելը ցուցաբերում է բարձր արդյունավետություն առանց նախնական ուսուցման՝ ապահովելով լավ ընդհանրացում տարբեր պատկերային պայմաններում:

Խոր ուսուցման և foundation model-ների կիրառությունը հեռազննման պատկերների մշակման ոլորտում շարունակաբար ընդլայնվում է՝ ապահովելով ավելի բարձր ճշգրտություն, ավտոմատացման մակարդակ և տարբեր տարածական պայմաններում ընդհանրացման հնարավորություն [11]:

Այսպիսով, հետազոտության արդյունքները հաստատում են, որ SAM մոդելի կիրառումը հանդիսանում է արդյունավետ մոտեցում օդատիեզերական պատկերների ավտոմատ սեգմենտացիայի համար:

Ստացված համեմատական արդյունքները ցույց են տալիս, որ SAM մոդելը ապահովում է ավելի բարձր ընդհանրացման հնարավորություն և արդյունավետություն մեծածավալ օդատիեզերական պատկերների մշակման ընթացքում, ինչը հաստատում է foundation model-ների կիրառելիության բարձր ներուժը հեռագնման տվյալների ավտոմատ սեզմենտացիայի խնդիրներում [12]:

Գրականության ցանկ

- [1] **Y. LeCun, Y. Bengio, G. Hinton**, Deep Learning. Nature 521(7553) (2015) 436–444.
- [2] **J. Long, E. Shelhamer, T. Darrell**, Fully Convolutional Networks for Semantic Segmentation. CVPR, 2015.
- [3] **H. Zhao et al.**, Pyramid Scene Parsing Network. CVPR, 2017.
- [4] **L.-C. Chen et al.**, DeepLab: Semantic Image Segmentation with Deep Convolutional Nets. IEEE TPAMI, 2018.
- [5] **J. Redmon et al.**, YOLO9000: Better, Faster, Stronger. CVPR, 2017.
- [6] **A. Kirillov et al.**, Segment Anything. arXiv preprint arXiv:2304.02643, 2023.
- [7] **Y. Guo et al.**, Deep Learning for 3D Point Clouds: A Survey. IEEE TPAMI, 2020.
- [8] **O. Ronneberger, P. Fischer, T. Brox**, U-Net: Convolutional Networks for Biomedical Image Segmentation. MICCAI, 2015.
- [9] **K. He, G. Gkioxari, P. Dollár, R. Girshick**, Mask R-CNN. ICCV, 2017.
- [10] **Y. Li et al.**, Deep Learning in Remote Sensing Image Interpretation: A Review. IEEE GRSM, 2019.
- [11] **S. Minaee et al.**, Image Segmentation Using Deep Learning: A Survey. IEEE TPAMI, 2021.
- [12] **L. Ma et al.**, Deep Learning in Remote Sensing Applications: A Meta-Analysis and Review. ISPRS Journal, 2019.

ОБНАРУЖЕНИЕ И ИНТЕРПРЕТАЦИЯ ОБЪЕКТОВ НА АЭРОКОСМИЧЕСКИХ ИЗОБРАЖЕНИЯХ С ПРИМЕНЕНИЕМ МЕТОДОВ ГЛУБОКОГО ОБУЧЕНИЯ

Лусине Нерсесовна Егиян

ООО “Центр геопространственных технологий”, г. Ереван, РА

lusineyeghyan@gmail.com

Аэрокосмические изображения широко используются в различных областях (экологический мониторинг, градостроительство, управление чрезвычайными ситуациями и др.), однако автоматическое обнаружение объектов на изображениях остаётся сложной задачей. В данной статье рассматривается применение методов машинного и глубокого обучения с акцентом на их практическое использование и эффективность. Рассматриваются современные подходы, в частности модели CNN, Mask R-CNN и Segment Anything Model (SAM). Проводится экспериментальный анализ с оценкой точности, применимости и потенциала данных моделей для Республики Армения. Результаты показывают, что методы глубокого обучения обеспечивают высокую точность и уровень автоматизации, одновременно имея определённые ограничения, связанные с шумами и проблемами обобщения.

Ключевые слова: аэрокосмическое изображение, глубокое обучение, машинное обучение, обнаружение объектов, сегментация, CNN, Mask R-CNN, Segment Anything Model

OBJECT DETECTION AND INTERPRETATION IN AEROSPACE IMAGES USING DEEP LEARNING METHODS

Lusine Yeghiyan

“Center of Geospatial Technologies” LLC, Yerevan, RA

lusineyeghyan@gmail.com

Aerospace imagery is widely used in various fields (environmental monitoring, urban planning, disaster management, etc.); however, automatic object detection from images remains a challenging task. This article explores the application of machine learning and deep learning methods, focusing on their practical implementation and effectiveness. Modern approaches are considered, particularly CNN, Mask R-CNN, and Segment Anything Model (SAM). An experimental analysis is conducted to evaluate the accuracy, applicability, and potential of these models for the Republic of Armenia. The results show that deep learning methods provide high accuracy and a significant level of automation, while also having certain limitations related to noise and generalization issues.

Keywords: aerospace imagery, deep learning, machine learning, object detection, segmentation, CNN, Mask R-CNN, Segment Anything Model

Եղիյան Լուսինե Ներսեսի, (ՀՀ, ք. Երևան) – «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ, ԱՏՀ մասնագետ, (+374) 77221835, *lusineyeghyan@gmail.com*

Егиян Лусине Нерсесовна, (РА, г. Ереван) – ООО «Центр геопространственных технологий», ГИС специалист, (+374)77221835, *lusineyeghyan@gmail.com*

Yeghiyan Lusine (RA, Yerevan) - “Centre of Geospatial Technologies” LLC, GIS specialist, (+374)77221835, *lusineyeghyan@gmail.com*

Ներկայացվել է՝ 03.04.2026թ.

Գրախոսվել է՝ 29.04.2026.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԸՍՏ ԱՎՏՈՄՈԲԻԼԻ ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Աննա Հայրապետի Հայրապետյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

hayrapetyananna0609@gmail.com

Դիտարկված է ավտոմոբիլի հակաարգելափակող համակարգի (ՀԱՀ) ազդեցությունը լեռնային պայմաններում արգելակման ուղու և երթևեկության կայունության վրա: Տեսական վերլուծությունների, մաթեմատիկական մոդելավորման և փորձնական հետազոտությունների հիման վրա ցույց է տրվել, որ ՀԱՀ-ի աշխատանքի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ճանապարհի երկայնական թեքությամբ և ծածկույթի տեսակով: Կատարված հաշվարկները վերաբերում և բնութագրական են ՀՀ լեռնային պայմանների համար: Ներկայացված են ճանապարհի և ավտոդռոշի կցման գործակցի, հարաբերական սահքի և արգելակման ուղու կապի դիագրամները: Ցույց է տրված, որ կցման գործակցի արժեքի փոփոխության պայմաններում վերելք-վայրէջք ճանապարհին ՀԱՀ օգտագործումն ապահովում է երթևեկության անվտանգության և կայունության էական բարելավում:

Բանալի բառեր. արգելափակող համակարգ, արգելակման ուղի, կցման գործակցից, լեռնային ճանապարհ, երթևեկության անվտանգություն

Ներածություն

Լեռնային պայմաններում շահագործվող ավտոմոբիլների երթևեկության անվտանգությանը ներկայացվող հիմնական պահանջները դիտարկվում են արգելակային համակարգի արդյունավետությամբ և երթևեկության կայունության ապահովմամբ: Մեծ թեքությունները, կտրուկ շրջադարձերը, արագ փոփոխվող ռելիեֆը և կցման պայմանների հաճախակի փոփոխությունները մեծացնում են կողասահքի և կառավարման կորստի ռիսկերը:

Հակաարգելափակող համակարգն ապահովում է արգելափակված անիվի գլորումը և նվազեցնում է անիվի սահքով շարժման տևողությունը (անցած ճանապարհը), քանի որ անիվի գլորման ժամանակ կցման գործակցից (φ) էականորեն մեծ է սահքի գործակցից ($\varphi_{սահք}$): Ժամանակակից ավտոմոբիլները (մարդատար, բեռնատար, ավտոգնացքներ) կահավորված են ՀԱՀ-ով: Հատկանշական է, որ ՀԱՀ-ն ակտիվանում է բացառապես վթարային արգելակման ժամանակ, երբ գլորվող անիվները բլոկավորվում են և սկսվում է անիվի սահքի գործընթաց: ՀԱՀ-ը նվազեցնում է ճնշումն արգելակման խցում, ինչի արդյունքում անիվը սկսում է կրկին գլորվել, և այդպես պարբերաբար մինչև ավտոմոբիլի լրիվ կանգառը: Երբ ավտոմոբիլի արագությունը նվազում է մինչև 0,8...1,2 կմ/ժ, ՀԱՀ-ն ավտոմատ դանդաղեցնում է իր աշխատանքը [1]:

Ավտոմոբիլի ՀԱՀ-ն համարվում է ակտիվ անվտանգության կարևորագույն բաղադրիչ: Սակայն ՀԱՀ-ի ազդեցությունն արգելակման ուղու չափի վրա ներկայացվում է ոչ միանշանակ, որոշ հեղինակներ [2] նշում են, որ ՀԱՀ-ն մեծացնում է արգելակման ուղին, մյուսները՝ ընդհակառակը, նվազեցնում է [1,9,10]:

Սույն հոդվածը նվիրված է ՀԱՀ-ի աշխատանքի արդյունավետության գնահատմանը լեռնային պայմաններում, որտեղ գլխավոր գործոնը ոչ միայն արգելակման ուղին է, այլ նաև ավտոմոբիլի կառավարելիության պահպանումը:

Նյութեր և մեթոդներ

ՀԱՀ-ն կանխարգելում է ավտոմոբիլի անիվների լրիվ արգելափակումը, պահպանելով սահքն օպտիմալ ռեժիմում՝ 10...20 %, որտեղ կցման գործակիցը դողի և ճանապարհածածկույթի միջև առավելագույնն է [1-4,11].

$$\varphi = f(S), \quad 0 < S < 1, \quad (1)$$

որտեղ φ -ն կցման գործակիցն է, S -ը՝ անիվի հարաբերական սահքը:

Ճանապարհածածկույթի մեծ մասի համար առավելագույն φ -ն ձևավորվում է, երբ $S \approx 0,1 \dots 0,2$: Եթե անիվի սահքն առավելագույն է ($S=1$), կցման գործակիցը նվազում է 20...60 %-ով:

Հաշվենք արգելակման ուղու երկարությունը՝ S_{uwhp} , առանց ՀԱՀ-ի.

$$S_{uwhp} = \frac{V_0^2}{2 \cdot \varphi_u \cdot g} (u), \quad (2)$$

որտեղ V_0 -ն ավտոմոբիլի արագությունն է արգելակման սկզբում (u/u^P), φ_u -ն՝ կցման գործակիցը լրիվ սահքի ժամանակ, իսկ g -ն՝ ազատ անկման արագացումը (u/u^P):

ՀԱՀ-ի առկայության դեպքում, երբ անիվը գտնվում է կցման առավելագույն արժեքի պայմաններում (φ_{max}).

$$S_{ՀԱՀ} = \frac{V_0^2}{2 \cdot \varphi_{max} \cdot g} (u): \quad (3)$$

Համեմատությունը պայմանավորված է հետևյալ հարաբերակցությամբ.

$$\varphi_{max} \leq \varphi_u: \quad (4)$$

Փորձնական հետազոտություններով ապացուցված է [2, 5], որ φ_{max} և φ_u արժեքները տարբեր են, կախված ճանապարհի ծածկույթի վիճակից:

Չոր ասֆալտապատ ճանապարհի վրա. $\varphi_{max} = 0,85$, $\varphi_u = 0,6$,

թաց ասֆալտապատ ճանապարհի վրա. $\varphi_{max} = 0,6$, $\varphi_u = 0,45$,

խճաքարի, կոպիճի և փխրուն ձյան վրա. $\varphi_{max} = 0,3$, $\varphi_u = 0,4$:

Պատճառն արգելակման ժամանակ անիվի դիմաց սեպաձև գոյացության առաջացումն է:

Լեռնային ուղիներում ավտոմոբիլի արգելակման պայմանների առանձնահատկությունները հետևյալն են.

- երկայնական թեքություններ,
- փոքր շառավղով հաճախակի շրջադարձեր,

- ճանապարհների տարբեր վիճակներ՝ չոր ասֆալտ, թաց ասֆալտ, ձյուն, խիճ և այլն,
- սահմանափակ տեսանելիություն:

Դիտարկենք թեքության ազդեցությունն արգելակման դանդաղեցման վրա՝ $j(u/v^2)$: Արդյունավետ դանդաղեցումը կունենա հետևյալ տեսքը [6].

$$j = \varphi \cdot g \cdot \cos \alpha - g \cdot \sin \alpha, \quad (5)$$

որտեղ α -ն ճանապարհի երկայնական թեքության անկյունն է: Ինչքան մեծ է ճանապարհի երկայնական թեքության α անկյունը, այդքան փոքր է արգելակման արագացումը:

Դիցուկ՝ $\alpha = 10^\circ$ դանդաղեցումը կկազմի.

$$j = g \cdot \sin \alpha = 9,8 \cdot \sin 10^\circ \cdot 1,7 \text{ մ/վ}^2,$$

60 կմ/ժ (16,7 մ/վ) արագությամբ շարժվող ավտոմոբիլն արգելակում է $\alpha = 10^\circ$ թեք ճանապարհի վրա:

Չոր ասֆալտապատ ճանապարհի վրա ՀԱՀ-ի առկայության դեպքում $\varphi_{\max} = 0,8$ դանդաղեցումը կազմում է.

$$j_{\text{ՀԱՀ}} = 0,8 \cdot g \cdot \cos 10^\circ - g \cdot \sin 10^\circ = 6,02 \text{ մ/վ}^2 :$$

Անցած ճանապարհը կազմում է.

$$S_{\text{ՀԱՀ}} = \frac{16,7^2}{2 \cdot 6,02} = 23,24 \text{ մ} :$$

Առանց ՀԱՀ-ի սահքի պայմաններում, երբ

$$\varphi_u = 0,6,$$

արագացումը կազմում է.

$$j_u = 0,6 \cdot g \cdot \cos 10^\circ - g \cdot \sin 10^\circ = 4,09 \text{ մ/վ}^2,$$

անցած ճանապարհը կազմում է.

$$S_u = \frac{16,7^2}{2 \cdot 4,09} = 34,09 \text{ մ} :$$


Փաստորեն, ՀԱՀ-ի առկայությունն արգելակման ժամանակ անցած ճանապարհը կրճատում է մոտ 33 %-ով:

Նկ. 1- ում բերված է հարաբերական սահքի և կցման գործակցի կապի դիագրամները չոր ասֆալտի և խճապատ ճանապարհների վրա՝ ըստ աղ.1-ի բերված տվյալների:

Աղյուսակ 1

Կցման և սահքի գործակցիցների փոփոխությունն ըստ ճանապարհի տեսակի

$S(u)$	0,0	0,15	0,2	0,4	0,6	0,8	1,0
φ (ասֆալտ)	0,2	1,0	0,8	0,09	0,09	0,09	0,08
φ (խիճ, ձյուն)	0,1	0,3	0,5	0,42	0,25	0,05	0,5




Նկ. 1. Հարաբերական սահքի և կցման գործակցի կապի դիագրամները չոր ասֆալտի և խճապատ ճանապարհների վրա

Աղ. 2-ում ներկայացված են կցման գործակցի և արգելական ուղու միջև կապի հաշվարկային տվյալները, իսկ նկ. 2-ում բերված է այդ կապի դիագրամը:

Աղյուսակ 2


Կցման գործակցի և արգելական ուղու կապի հաշվարկային տվյալները

φ	0,2	0,3	0,4	0,5	0,6	0,7	0,8	0,9
$S(\text{մ})$	70	48	36	29	23	20	18	8



Նկ. 2. Կցման գործակցի և արգելական ուղու կապի դիագրամը

Այժմ դիտարկենք ավտոմոբիլի արգելական գործընթացի փուլերը և շարժման դինամիկան՝ ՀԱՀ-ի ակտիվացված և չակտիվացված աշխատանքային ռեժիմների դեպքում (նկ. 3).



Նկ. 3. 10° վերելքի պայմաններում ավտոմոբիլի արգելակման դանդաղեցման դիագրամները՝ ՀԱՀ-ի ակտիվացված և առանց ՀԱՀ-ի ([1])

ա) արգելակում առանց ՀԱՀ-ի (անիվների արգելափակման ռեժիմ)։

- առաջին փուլ - տևողությունը՝ 0...0,3 վ: Դանդաղեցումն արագ աճում է՝ հասնելով առավելագույն արժեքի՝ մոտ 8,6 մ/վ²,
- երկրորդ փուլ - անիվներն արգելափակված են՝ կցման գործակիցը նվազում է մինչև սահմանի գործակիցը $\varphi_v \approx 0,7 \dots 0,8$, արդյունքում դանդաղեցումը կտրուկ նվազում է: Փուլի տևողությունը կազմում է մոտ 0,3 վ,
- երրորդ փուլ - ավտոմոբիլը շարժվում է գրեթե հաստատուն դանդաղեցմամբ, սակայն դեկավարման հնարավորությունը և կուրսային կայունությունը կորցված են, ինչի հետևանքով կանգառի ուղին մեծանում է, իսկ ավտոմոբիլի շարժման ուղղությունը պատահական կամայական է,

բ) արգելակում ՀԱՀ-ի ակտիվացված վիճակում.

- առաջին փուլ - տևողությունը՝ 0...0,3 վ: Դանդաղեցումն արագ աճում է,
- երկրորդ փուլ - 0,3 վ-ից հետո համակարգը կանխարգելում է անիվների արգելափակումը, պարբերաբար մեծացնելով և նվազեցնելով ճնշումն արգելակման համակարգում: Արդյունքում դանդաղեցումը պահպանվում է գրեթե նույն մակարդակի վրա՝ 8,0...8,5 մ/վ², որը համապատասխանում է առավելագույն կցման գործակցին,
- երրորդ փուլ - դանդաղեցումը պահպանվում է առավելագույն բարձր մակարդակի վրա՝ մինչև ավտոմոբիլի լրիվ կանգառը: Ավտոմոբիլը պահպանում է կառավարելիությունը:

Արդյունքներ և քննարկում

Ճանապարհի երկայնական թեքության վրա արգելակման ժամանակ տեղի է ունենում բեռնվածության վերաբաշխում՝ վայրէջքի ժամանակ ուղղորդ անիվների վրա բեռնվածությունը

մեծանում է, իսկ հետևի առանցքի վրա՝ նվազում: Այդ երևույթն անվանվում է բեռնվածքի երկայնական վերաբաշխում [12]:

Հայտնի է, որ անիվ-ճանապարհ գույգի [1, 7, 8] շփման առավելագույն ուժն ուղիղ համեմատական է անիվի վրա ընկնող նորմալ բեռնվածությանը, այսինքն՝

$$F_{շփ} = \varphi \cdot F_{բեռ}, \quad (6)$$

որտեղ φ -ն անվադողի կցման գործակիցն է: Միաժամանակ հայտնի է, որ կցման գործակցի և անիվի վրա ընկնող բեռնվածության միջև կախվածությունը գծային չէ և ունի որոշակի փոփոխություն: Ավտոմոբիլի առանցքների վրա բեռնվածության փոփոխության ΔF պարզեցված մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$\Delta F = \frac{m \cdot j \cdot h}{L}, \quad (7)$$

որտեղ m -ը ավտոմոբիլի զանգվածն է ($կգ$), j -ն՝ դանդաղեցումը ($ւ/ւ^2$), h -ը՝ զանգվածի ծանրության կենտրոնի բարձրությունը ($ւ$), L -ը՝ անիվային բազան ($ւ$):

Ճանապարհի 10° թեքության վրա 8000 $կգ$ զանգվածով ավտոմոբիլի երկայնական բեռնվածության վերաբաշխման պայմաններում հաշվենք արգելակման ժամանակ արագացումը և արգելակման ուղին 60 $կւ/ժ$ (16,67 $ւ/ւ^2$) արագությամբ շարժվող ավտոմոբիլի համար:

Ծանրության ուժը կազմում է

$$G = m \cdot g = 8000 \cdot 9,81 = 78480 \text{ Ն},$$

նորմալ բաղադրիչը կլինի

$$N = G \cdot \cos\theta = 78480 \cdot \cos 10^\circ = 78480 \cdot 0,9848 = 77290 \text{ Ն},$$

իսկ դեպի ներքև ձգող ուժը՝

$$F_{\Delta q} = G \cdot \sin\theta = 78480 \cdot \sin 10^\circ = 78480 \cdot 0,1736 = 13630 \text{ Ն}:$$

Դեպի ներքև ձգող ուժը՝ $F_{\Delta q}$, արգելակմանը խոչընդոտող ուժն է վայրէջքի ժամանակ:

Ավտոմոբիլի արգելակման ժամանակ արգելակող ուժը նախ պետք է հաղթահարի տվյալ դիմադրող ուժը, իսկ դրա մնացած մասն ապահովում է արգելակման արդյունավետությունը:

Դիտարկենք արգելակման արագացումը և ավտոմոբիլի կանգառի ուղին ՀԱՀ-ի և առանց դրա արգելակման ժամանակ (աղ. 3):

Աղյուսակ 3

Արգելակման ուղին և արագացումը ՀԱՀ-ով և առանց դրա

Պարամետրեր	ՀԱՀ-ի միջոցով, $\varphi = 0,9$	Առանց ՀԱՀ-ի, $\varphi = 0,7$
Կցման առավելագույն ուժը, $F_{կց}$, Ն	$0,9 \cdot 77290 = 69560$	$0,7 \cdot 77290 = 54100$
Արագացմանը նպաստող ուժը, $F_{նւ} = F_{կց} - F_u$, Ն	$69560 - 13630 = 55930$	$54100 - 13630 = 40470$
Առավելագույն արագացում, j_w , $ւ/ւ^2$	$55930/8000 = 6,99$	$40470/8000 = 5,06$
Արգելակման ուղին, $S = V^2/2a$, $ւ$	$16,67^2 / 2 \cdot 6,99 = 19,9$	$16,67^2 / 2 \cdot 5,06 = 27,5$

Փաստորեն, ՀԱՀ-ի կիրառումը 10° թեք ճանապարհի վրա արգելակելու ժամանակ կանգառի ուղին կրճատում է $27,5-19,9=7,6$ մ կամ $27,6 \%$:

Առավել բարդ դինամիկա գոյություն ունի ավտոգնացքի վերելք-վայրէջքներում արգելակելու դեպքում, սակայն դա կդիտարկենք այլ հետազոտության մեջ:

Եզրակացություն

1. Արգելակման ընթացքում, երբ անիվն արգելափակված է, կցման սահքի գործակիցը մեծանում է, ինչի արդյունքում խաթարվում է ավտոմոբիլի կուրսային կայունությունը, որը կարող է սպառնալ երթևեկության անվտանգությանը:

2. Արգելափակող համակարգի աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է կցման գործակցի արժեքով, որի նվազման դեպքում կցման սահքի գործակիցը մեծանում է՝ առաջացնելով արգելակման ուղու երկարացում, որն իր հերթին կարող է հանգեցնել ճանապարհատրանսպորտային պատահարի հավանականության աճի:

Գրականության ցանկ

- [1] **Я.Н. Нефедьев**, Адаптивная АБС. Журнал автомобильных инженеров 2 (103) (2017) 22-27.
- [2] **Л.В. Гуревич, Р.А. Меламуд**, Тормозное управление автомобиля. Транспорт, Москва 1978, 152 с.
- [3] **А.С. Литвинов, Я.Е. Фаробин**, Автомобиль. Машиностроение, Москва, 1989, 240 с.
- [4] **А.И. Гришкевич**, Автомобили, Теория, учебник для вузов. Высшая школа, Минск, 1986, 208 с.
- [5] **Б. Игнашин**, Колеса. Режим доступа: <<https://www.kolesa.ru/article/svobodu-kolesam-istorija-abs-ot-30h-godov-do-nashih-dnej-2015-11-03>> (Дата обращения 18.11 2022)
- [6] **Н.А. Бухарин**, Тормозные системы автомобилей. Теория, конструкция, расчет и испытание. Машгиз. [Ленингр. отд-ние], Ленинград, Москва, 1950, 292 с.
- [7] **Т.М. Ткачева, К.А. Цибалов, Д.О. Шишкин**, Погрешности видеокамеры, спидометра и навигатора. Ажтомобиль. Дорога. Инфраструктура: электронный научный журнал 1(19) (2019) 17.
- [8] Автомобильный справочник Bosch, 3-е изд., Москва, За рулём, 2012, 1280 с.
- [9] **Е.А. Чудаков**, Теория автомобиля, Машгиз, Москва, 1950, 343 с.
- [10] **В.А. Иларионов**, Эксплуатационные свойства автомобиля, Машиностроение, Москва, 1966, 280 с.
- [11] **Ю.Л. Ревин**, Тормозные системы автомобилей, Транспорт, Москва, 1981, 216 с.
- [12] **Н. Heisler**, Advanced Vehicle Technology, 2nd ed., Butterworth-Heinemann, Oxford, 2002, 654 p.

ОЦЕНКА БЕЗОПАСНОСТИ ДОРОЖНОГО ДВИЖЕНИЯ НА ГОРНЫХ ДОРОГАХ В ЗАВИСИМОСТИ ОТ ТОРМОЗНОЙ СИСТЕМЫ ТРАНСПОРТНОГО СРЕДСТВА

Анна Айрапетовна Айрапетян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
hayrapetyananna0609@gmail.com

Исследовано влияние антиблокировочной тормозной системы автомобиля (АБС) на тормозной путь и устойчивость движения в горных условиях. На основе теоретического анализа, математического моделирования и экспериментальных исследований показано, что эффективность работы АБС в основном определяется продольным уклоном дороги и типом дорожного покрытия. Проведённые расчёты относятся к горным условиям Республики Армения и являются для них характерными. Представлены диаграммы зависимости коэффициента сцепления дороги и шины, относительного скольжения и тормозного пути. Показано, что применение АБС на участках дороги с подъёмами и спусками при изменении значения коэффициента сцепления обеспечивает существенное повышение безопасности и устойчивости движения.

Ключевые слова: антиблокировочная тормозная система, тормозной путь, коэффициент сцепления, горная дорога, безопасность движения

ASSESSMENT OF TRAFFIC SAFETY ON MOUNTAIN ROADS BASED ON THE VEHICLE BRAKING SYSTEM

Anna Hayrapetyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
hayrapetyananna0609@gmail.com

The effect of the anti-lock braking system (ABS) on braking distance and traffic stability under mountainous conditions is investigated. Based on theoretical analysis, mathematical modeling, and experimental studies, it is shown that the efficiency of ABS operation is mainly determined by the longitudinal road gradient and the type of road surface. The performed calculations are representative of and characterize the mountainous conditions of the Republic of Armenia. Diagrams illustrating the relationship between the tire-road adhesion coefficient, relative slip, and braking distance are presented. It is demonstrated that, under varying adhesion conditions on uphill and downhill road sections, the use of ABS provides a significant improvement in traffic safety and vehicle stability.

Keywords: anti-lock braking system, braking distance, adhesion coefficient, mountain road, traffic safety

Հայրապետյան Աննա Հայրապետի (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Տրանսպորտային, լոգիստիկ համակարգերի և շինարարական մեքենաների ամբիոն, դասախոս, (+374)91806019, hayrapetyananna0609@gmail.com
Айрапетян Анна Айрапетовна (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Транспортных, логистических систем и строительных машин, преподаватель, (+374)91806019, hayrapetyananna0609@gmail.com
Hayrapetyan Anna (RA, Yerevan) – NUACA, Chair of Transport Logistics Systems and Construction Machinery, lecturer, (+374)91806019, hayrapetyananna0609@gmail.com

Ներկայացվել է՝ 30.01.2026թ.

Գրախոսվել է՝ 10.02.2026.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

DOI: <https://doi.org/10.54338/18294200-2026.1-10>

ՏՐԱՆՍԴՈՐՏ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՑԱՆՈՒՄՆԵՐԻ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հասմիկ Գառնիկի Հարությունյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ
harutyunyanhasmik865@gmail.com*

Դիտարկվում է Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցում ավտոտրանսպորտային հոսքերի խճողումների և խցանումների առաջացման պատճառները, կատարվել է վերլուծություն և մշակվել են դրանց հաղթահարման ուղիները: Այն տվյալահեն և թվային մոդելավորման վրա հիմնված մոտեցում է՝ երթևեկության կարգավորման արդյունավետությունը բարձրացնելու համար: Առաջարկվում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ, ինչպես նաև կայանման և խելացի շարժունակության համալիր ռազմավարություն՝ քաղաքի տրանսպորտային համակարգի կայուն զարգացման նպատակով:

Բանալի բառեր. *ճանապարհափողոցային ցանց, ավտոմոբիլ, խճողում, խցանում, թողունակություն, մոդելավորում, կայանատեղ*

Ներածություն

Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի (ՃՓՑ) վրա նկատվող ավտոտրանսպորտային խճողումները և խցանումները վերջին տարիներին են համակարգային բնույթ ձեռք բերել՝ բացասաբար ազդելով քաղաքի տնտեսական ակտիվության, շրջակա միջավայրի որակի, հասարակական տրանսպորտի արդյունավետության և բնակիչների կենցաղային շարժունակության վրա [1]: Քաղաքի փոքր կենտրոնում քաղաքաշինական աշխատանքների խտացումն առանց տրանսպորտային հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների քանակի ավելացումը (ՀՀ-ում գրանցված է 950000-ից ավել միավոր տրանսպորտային միջոց) հանգեցրել է այդ հիմնախնդիրների սրացմանը: Առավել ևս այն, որ քաղաքի կենտրոնական հատվածում իրականացվող շինհրապարակներում բեռնատար ավտոմոբիլների մուտքն ու ելքն ավելի են բարդացնում երթևեկությունը և մեծացնում մայրուղային փողոցների երթևեկության ծանրաբեռնվածությունը:

Ներկայումս կիրառվող միջոցները (ակնադիտական դիտարկումներ, սահմանափակ քանակով թվային տեղեկատվական տվիչներ) չեն ապահովում տվյալահեն կառավարման համար պահանջվող մանրամասնությունները: Հետևաբար, քաղաքին անհրաժեշտ է իրական ժամանակի և հետազոտական մակարդակի ճշգրիտ տվյալների համակարգ, որը թույլ կտա պլանավորել և գնահատել քաղաքականությունները՝ նախքան դրանց լայնածավալ իրականացումը [1, 2]:

Նյութեր և մեթոդներ

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Երևան քաղաքի ՃՓՑ-ի վրա առկա խճողումները և խցանումները ոչ միայն երթևեկության խնդիր են, այլև տնտեսական, էկոլոգիական և քաղաքաշինական զարգացման արգելք: Արդյունավետ որոշումների կայացման համար անհրաժեշտ է ունենալ համակարգված, հիմնավորված և երկարաժամկետ ռազմավարություն՝ հիմնված թվային մոդելավորման, տրանսպորտային հոսքերի մեծածավալ տվյալների վերլուծության և միջազգային լավագույն փորձի կիրառման վրա (նկ. 1):



ա)



բ)

**Նկ. 1. Երևան քաղաքի մայրուղային փողոցներում տրանսպորտային հոսքի իրավիճակները.
ա - խցանված, բ - խճողումային**

Արդյունքում անհրաժեշտ է անցում կատարել տվյալահեն, գիտականորեն հիմնավորված նորարար կառավարման մոտեցումների: Առաջարկվում է կազմակերպել Երևան քաղաքի ՃՓՑ-ի համալիր թվային մոդելավորման գործընթացը, որի նպատակն է ստեղծել ինտեգրված տրանսպորտային մոդել, հնարավորություն տալով իրական ժամանակում գնահատել խցանումների բնույթն ու ծավալները, նախագծել և վերլուծել տարբեր միջոցառումների ազդեցությունը, հաշվարկել յուրաքանչյուր միջամտության կանխատեսելի արդյունքը՝ նախքան իրականացումը:

Նշված միջոցառումների իրականացման առաջարկվող փուլերն են [3-5]՝

1-ին փուլ. նախապատրաստում և տվյալների հավաքագրում, որը ներառում է՝

- ՃՓՑ-ի և երթևեկության պարամետրերի ինտեգրման նախնական գնահատում,
- ՃՓՑ-ի թվայնացում,
- 1-2 խաչմերուկի պիլոտային մոդելավորում:

2-րդ փուլ. քաղաքի մայրուղային փողոցների մոդելավորում՝

- խճողումների և խցանումների դինամիկայի վերլուծություն,
- փորձարարական հետազոտություններ մի քանի մայրուղային փողոցների վրա,
- կարգավորիչ միջամտությունների գնահատում:

3-րդ փուլ. Երևան քաղաքի ՃՓՑ-ի համար առաջարկությունների ներկայացում՝

- խցանումների նվազեցման թիրախային փաթեթի պատրաստում,
- ազդանշանային կամ տեղային օպտիմալացման առաջարկներ,
- հետագա "Smart Mobility Centr"-ի ստեղծման ճանապարհային քարտեզ:

Արդյունքներ և քննարկում

Երևան քաղաքի ՃՓՑ-ի վրա երթևեկության կարգավորման, խճողումների և խցանումների հաղթահարման նպատակով կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների վերաբերյալ առաջարկվում են.

Կարճաժամկետ միջոցառումներ: Այս միջոցառումները կարող են տևել մինչև 6 ամիս [6, 7].

- տրանսպորտային հոսքերի երթևեկության ինտենսիվության և խաչմերուկների թողունակության հաշվարկների իրականացում,
- բոլոր խաչմերուկների մոտեցումներում, բոլոր կողմերից 30 մ՝ երկարությամբ արգելել տրանսպորտային միջոցների կանգառը և կայանումը,
- երթևեկության կազմակերպման տեսանկյունից՝ փողոցային ցանցը կահավորել լուսավորող ճանապարհային նշաններով, տարին 3...4 անգամ թարմացնել ճանապարհային գծանշումը (գծանշում չլինելու պատճառով իրականացվում է անկազմակերպ երթևեկություն, արդյունքում նվազում է թողունակությունը և աճում են ճանապարհատրանսպորտային պատահարները),
- երթևեկելի գոտիների վերադասավորումը հստակ և ճիշտ իրականացնելու համար խաչմերուկների մոտեցումներում տեղադրել կրկնակի 5.15.2 «Երթևեկության ուղղությունները գոտիով» ճանապարհային նշանները,
- փողոցային ցանցի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի քանդման, կտրման, ինչպես նաև ծածկի տեղադրման աշխատանքներն իրականացնել գիշերային ժամերին (ժ. 01⁰⁰-07³⁰),
- փողոցային ցանցի վրա գտնվող գովազդային վահանակների սպասարկումն իրականացնել գիշերային ժամերին (ժ. 01⁰⁰-07³⁰),
- ընդհանուր տրանսպորտային հոսքին համընթաց կանոնավոր երթևեկությունն ապահովելու համար և երթևեկելի գոտիների ոչ ճիշտ վերադասավորման երևույթները կանխելու նպատակով ուղղորդ կղզյակներում և դրանց մոտեցումներում տեղադրել ուղղորդ նշաններ,
- բոլոր աղբամանները հանել երթևեկելի մասից (թեկուզ մայթերից համապատասխան հատվածներ հատկացնելով) և աղբահանությունն իրականացնել միայն գիշերը՝ մինչև առավոտյան ժ. 07³⁰-ը,
- լիկվիդացնել երթևեկելի մասի վրա գործող շարժական սննդի կետերը (նկ. 2):



Նկ. 2. Մայրուղային փողոցների վրա գործող շարժական սննդի կետեր

Միջնաժամկետ միջոցառումներ (տևողությունը 1-3 տարի) [4, 8, 9]:

- խաչմերուկների կոշտ լուսացուցային կարգավորման ռեժիմները փոխարինել.
- բազմաձրագրային լուսացուցային կառավարմամբ,
- տեղային ճկուն կառավարմամբ (խելացի) խաչմերուկներով,
- մայրուղային փողոցներում ներդնել լուսացուցային կոորդինացված կառավարում,
- քաղաքի մուտքերի մոտ, ինչպես նաև բոլոր մայրուղային փողոցների մոտ ստեղծել ստորգետնյա, վերգետնյա, բազմահարկ մոդուլային հիբրիդային ուղղահայաց ավտոկայանատեղեր,
- մայրուղային փողոցների վրա ամբողջությամբ արգելել կանգառը և կայանումը,
- երթուղային ուղևորատար տրանսպորտին (ԵՌԻՏ) բոլոր փողոցներում տալ առավելություններ՝ տրամադրել ազատված եզրային գոտիներ, ապահովել կանոնակարգված երթևեկություն,
- երթուղային ուղևորատար տրանսպորտի կանգառները հստակեցնել, բոլոր կանգառներում տեղադրել ԵՌԻՏ-ի կանգառ ժամանելու մասին տեղեկացնող էլեկտրոնային ցուցատախտակներ:

Երկարաժամկետ միջոցառումներ (տևողությունը 3...10 տարի) [10-12]:

- մայրուղային փողոցների վրա տարբեր մակարդակի տրանսպորտային հանգույցների կառուցում,
- մետրոյի զարգացում, նոր կայարանների կառուցում,
- Երևան քաղաքը շրջանցող ճանապարհների կառուցում (Հրազդան գետի վրայով «Կորեայի ձոր» հատվածում կամրջի կառուցում),
- երթևեկության կառավարման ավտոմատացված համակարգի ներդրում (կառավարման կետով),
- արագացնել «Ակադեմիական քաղաքի» կառուցումը:

Առաջարկվող ռազմավարությունը:

Երևանի բազմահարկ ավտոկայանատեղերի տեղակայման միացյալ ռազմավարություն, որը հիմնավորվելու է մակրոմոդելավորման, միկրոմոդելավորման և բաց գիտահետազոտական շերտի ներգրավմամբ: Այս համակարգերը հատկապես արդյունավետ են քաղաքի կենտրոնն ավտոմեքենաների մեծ հոսքերից ազատելու համար:

Քաղաքի մուտքի ճանապարհների վրա (Երևան-Աշտարակ՝ Մ1, Երևան-Երասխ՝ Մ2, Երևան-Սևան՝ Մ4, Երևան-Էջմիածին՝ Մ5) կայանատեղերի ստեղծումը թույլ կտա՝

- մարզերից Երևան մուտք գործող ավտոմեքենաները թողնել կայանավայրում և շարունակել երթևեկությունը երթուղային ուղևորատար տրանսպորտով, որը բավականին կնվազեցնի դեպի քաղաք մեքենաների հոսքի զգալի մասը,

- նվազեցնել վնասակար արտանետումները և ճանապարհատրանսպորտային պատահարները:

Համակարգային մոդելավորումը կարող է ցույց տալ ներքաղաքային բազմահարկ ավտոկայանատեղերի այն տարածքները, որտեղ դրանց ստեղծումը

- թեթևացնում է հոսքերը,
- բացառում է նոր խցանումների առաջացումը,
- ապահովում է կայանման կենտրոնացված լուծում,
- ազատում է մայրուղային փողոցները երկարատև կայանումից:

Բազմահարկ ավտոկայանատեղերի ներդրումը պետք է ուղեկցվի.

- փողոցային երկարատև կայանման սահմանափակմամբ,
- վճարովի գոտիների արդիականացմամբ,
- մշտական խստացված վերահսկողությամբ և սմարթ կայանման համակարգերի ներդրմամբ:

Այս աշխատանքների իրականացման համար առաջարկվող հիմնական քայլերն են՝ տվյալների հավաքագրում և մոդելավորում, ճարտարապետատեխնիկական առաջադրանքների ձևավորում՝ տեխնիկատնտեսական հիմնավորումով, քաղաքային կայանման ամբողջական քաղաքականության ներկայացում, ԵՌԻՏ-ի հետ փոխկապակցված շարժունակության նոր համակարգի մշակում [11, 13, 14]:

Եզրակացություն

Առաջին անգամ Երևան քաղաքի ՃՓՑ-ի համար առաջարկվում է տվյալահեն և բազմամակարդակ թվային մոդելավորման վրա հիմնված համալիր մոտեցում, որը թույլ է տալիս միաժամանակ գնահատել խցանումների ձևավորման պատճառները, մոդելավորել երթևեկության հոսքերի վարքագիծը և կանխատեսել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կարգավորիչ միջամտությունների արդյունավետությունը: Մշակվել է ինտեգրված «Smart Mobility Center» ձևավորման գաղափար, առաջարկվել է Երևան քաղաքի մուտքային մայրուղիներում բազմամակարդակ կայանատեղերի տեղաբաշխման ռազմավարություն, ձևավորվել է քայլային ներդրման (փուլային) մոդել:

Գրականության ցանկ

- [1] **Ա.Տ. Սարգսյան, Խ.Գ. Խաչատրյան**, Երևան քաղաքի տրանսպորտային հիմնախնդիրների լուծումը ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ. Ագրոգիտություն և տեխնոլոգիա 3/38 (2023) 224-230, DOI: 10.52276/25792822-2023.3-224
- [2] Modern Challenges of a Capital City (05.06.2025).
- [3] **D. Shoup**, Pricing curb parking. Transportation Research Part A: Policy and Practice. 154. (2021), DOI: 10.1016/j.tra.2021.04.012.
- [4] **С.Г. Гнездилов, и др.**, Развитие классификации и терминологии в области механизированных стоянок. Подъемно-транспортное дело 5–6 (2009) 12–14.

- [5] **П.В. Попов, А.Г. Кравец**, Алгоритм оценки уровня эффективности логистической инфраструктуры региона. Прикаспийский журнал: управление и высокие технологии 3 (2021) 54–61.
- [6] **А.Г. Кравец, А.А. Астанков, Г.А. Мокрушин**, Виртуальный ассистент водителя для поиска места на открытой парковке. Прикаспийский журнал: управление и высокие технологии 2(58) (2022) 35-44.
- [7] Առանձնիկ էրթնեկելի գոտիներ ավտոբուսների համար, URL: <<https://hy.armradio.am/archives/497004>> (20.06.2025թ.):
- [8] Gulf Rotary Smart Rotary Parking System Parking Solution, URL: <https://hydropark.en.made-in-china.com/product/vmJpDUgluRrX/China-Gulf-Rotary-Smart-Rotary-Parking-System-Parking-Solution.html?pv_id=1j160e2lo33e&faw_id=1j160e5itb4b&bv_id=1j160kk7j669&pbv_id=1j160dih4623l> (20.06.2025)
- [9] Pragmatic Frequently Asked Questions (02.07.2025)
- [10] **M. Kaci, S. Merabti, Z. Layate, H. Ait Said, S. Amrane, L. Terki**, Effective smart rotary parking management in urban areas. The Journal of Engineering and Exact Sciences 10(9):20027 (2024), DOI: 10.18540/jcecvl10iss9pp20027.
- [11] Transport Notes, Transport Economics, Policy and Poverty Thematic Group (17.08.2025).
- [12] **A.D. Zhukov**, Parking lots and parkings, <<https://www.stroyka.ru/Materials/>>.
- [13] **S.H. Bayih, S.L. Tilahun**. Dynamic vehicle parking pricing. A review. Operations Research and Decisions 34(1) (2024) 35-59, DOI: 10.37190/ord240103.
- [14] **Л.Н. Орлова, Е.А. Кочеткова**, Модульные быстровозводимые роторные парковки: современный подход к проектированию стоянок автомобилей. Приволжский научный журнал 4(48) (2018) 146-151.

ПРЕДЛОЖЕНИЯ ПО РЕГУЛИРОВАНИЮ ДОРОЖНОГО ДВИЖЕНИЯ И ПРЕОДОЛЕНИЮ ТРАНСПОРТНЫХ ЗАТОРОВ В ГОРОДЕ ЕРЕВАНЕ

Асмик Гарниковна Арутюнян

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
harutyunyanhasmik865@gmail.com*

Рассматриваются причины возникновения пробок и заторов на дорожной сети Еревана, проводится их анализ и разрабатываются пути их преодоления. Предлагается подход, основанный на данных и цифровом моделировании, для повышения эффективности регулирования дорожного движения. Предлагаются краткосрочные, среднесрочные и долгосрочные меры, а также комплексная стратегия парковки и интеллектуальной мобильности для устойчивого развития транспортной системы города.

Ключевые слова: *улично-дорожная сеть, автомобиль, перегруженность, затор, пропускная способность, моделирование, парковка*

PROPOSALS ON MEASURES FOR REGULATING TRAFFIC AND OVERCOMING TRAFFIC CONGESTION IN THE CITY OF YEREVAN

Hasmik Harutyunyan

*National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
harutyunyanhasmik865@gmail.com*

This article examines the causes of traffic jams and congestion on Yerevan's road network, analyzes them, and develops solutions. A data-driven and digital modeling approach is proposed to improve traffic management efficiency. Short-, medium-, and long-term measures are proposed, along with a comprehensive parking and smart mobility strategy for the sustainable development of the city's transportation system.

Keywords: *road and street network, automobile, congestion, traffic jam, capacity, modeling, parking*

Հարությունյան Հասմիկ Գառնիկի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Տրասպորտային, լոգիստիկ համակարգերի և շինարարական մեքենաների ամբիոն, հայցորդ, (+374)98492050, harutyunyanhasmik865@gmail.com
Арутюнян Асмик Гарниковна (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Транспортных, логистических систем и строительных машин, соискатель, (+374)98492050, harutyunyanhasmik865@gmail.com
Harutyunyan Hasmik (RA, Yerevan) – NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, Ph. D. student, (+374)98492050, harutyunyanhasmik865@gmail.com

Ներկայացվել է՝ 27.01.2026թ.

Գրախոսվել է՝ 05.03.2026.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ՀԻՐԻԴԱՅԻՆ ՈՒՂԱՀԱՅԱՑ
ԱՎՏՈԿԱՅԱՆՄԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ**

Վալերիկ Մամիկոնի Հարությունյան¹, Արման Տիգրանի Սարգսյան²,

Խաչատուր Գազիկի Խաչատրյան², Հասմիկ Գառնիկի Հարությունյան¹

¹Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

²Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչություն, ք. Երևան, ՀՀ
*vmh-1961@mail.ru

Հոդվածում ուսումնասիրվել է Երևանի քաղաքում ավտոկայանման ենթակառուցվածքների զգալի պակասի խնդիրը և առաջարկվել է նորարարական լուծում՝ հիբրիդային ուղղահայաց ավտոկայանման մոդուլների ներդրում: Առաջարկվող մոդուլը հիմնված է երեք նորարարական բաղադրիչների վրա՝ չափազործվող տրանսպորտային միջոցների վերամշակված մասերի օգտագործում, արհեստական բանականության վրա հիմնված ամրագրում (AI-PRS) և սոցիալապես հավասարակշռված վճարային համակարգ: Քաղաքաշինական վերլուծության հիման վրա առաջարկվել են ք. Երևանի տարբեր վարչական շրջաններում տեղակայման հնարավոր վայրեր: Արդյունքները վկայում են, որ առաջարկվող մոդելը ոչ միայն տեխնիկապես իրագործելի և տնտեսապես շահավետ է, այլև ապահովում է սոցիալական արդարություն և տարածքային արդյունավետություն՝ դառնալով ժամանակակից քաղաքային կայանման կառավարման կենսունակ և լայն կիրառելի լուծում:

***Բանալի բառեր.** հիբրիդային ուղղահայաց կայանում, արհեստական բանականություն, կայանման ամրագրում, ինտելեկտուալ տրանսպորտային համակարգեր, զուտ ներկա արժեք, ներքին եկամտաբերության նորմ*

Ներածություն


Ավտոկայանման հիմնախնդիրն այսօր դարձել է խոշոր քաղաքների ամենախնդրահարույց հարցերից մեկը՝ ոչ միայն տրանսպորտային, այլև սոցիալ-քաղաքաշինական: Երևան քաղաքի հագեցած կառուցապատման, ավտոմեքենաների թվի կայուն աճի և հասարակական տրանսպորտի բարեկարգմամբ պայմանավորված սահմանափակումների պայմաններում, խնդիրը ստացել է համակարգային բնույթ [1]: Ըստ ՀՀ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) կողմից տրամադրված տեղեկատվության, Հայաստանում հաշվառված ավտոմեքենաների թիվը մոտենում է 1 մլն: 2024 թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ավտոմոբիլային պարկը կազմում էր 911 264: Ընդհանուր առմամբ, Երևան քաղաքում չափազործվում է ամբողջ ՀՀ ավտոմոբիլային պարկի շուրջ 50...60 % -ը: Երևան քաղաքում տրանսպորտային միջոցների կայանման ենթակառուցվածքները գտնվում են խիստ անբավարար վիճակում [2]: Չնայած վերջին տարիներին իրականացված առանձին ծրագրերին, հանրային և մասնավոր կայանատեղիների ընդհանուր հզորությունը՝

(ներառյալ ստորգետնյա, վերգետնյա, կարմիր գծերով վճարովի, անվճար և թույլատրելի կայանման գոտիները), ընդհանուր առմամբ չի գերազանցում 10 000...12 000 տեղը: Օրինակ, Ազատության հրապարակի ստորգետնյա կայանատեղին ունի մոտ 500 տեղ, իսկ ք. Երևանի խոշոր առևտրային կենտրոնները (օր.՝ Megamall, Dalma, Yerevan Mall) միասին ապահովում են շուրջ 3000...4000 տեղ: Այսպիսով, մոտավոր հաշվարկներով մայրաքաղաքում առկա է մեկ կայանատեղի յուրաքանչյուր 45...55 մեքենայի համար՝ հատկապես խիտ բնակեցված և բարձր տնտեսական ակտիվության հատվածներում: Կայանման խիստ պակասը հանգեցնում է երթևեկելի գոտիների ապօրինի զբաղեցման, խցանումների, հանրային տրանսպորտի շարժունակության խաթարման և այլն: Այս իրավիճակում անհրաժեշտ է ոչ միայն նոր կայանատեղիներ կառուցել, այլև նորարարական մոդելների ներդրում կատարել, որը միաժամանակ կլինի տեղայնացված (համապատասխան նեղ և բարդ տեղանքներին), տեխնոլոգիապես հարմարեցված (ավտոմատ և պարզ կառավարելի) և սոցիալապես հավասարեցված (նպաստավոր՝ բոլոր խավերի համար): Ժամանակակից քաղաքաշինական փորձը ցույց է տալիս, որ առավել նպատակահարմար է կիրառել մեքենայացված և կիսամեքենայացված կայանման համակարգեր, որոնք ապահովում են բարձր հուսալիություն, անվտանգություն և շահագործման հարմարավետություն [3, 4]: Այս համակարգերից առանձնանում են մոդուլային արագ մոնտաժվող կառույցները, այդ թվում՝ ռոտորային տիպի կայանատեղիները, որոնք հնարավորություն են տալիս առավելագույն արդյունավետությամբ կազմակերպել ավտոմեքենաների տեղաբաշխումը սահմանափակ տարածքներում [2, 5, 6]: Վերոգրյալով պայմանավորված, սույն հոդվածի շրջանակներում քննարկվում են ավտոմատ ուղղահայաց կայանման համակարգերը, որոնք այսօր կիրառվում են բազմաթիվ խոշոր քաղաքներում՝ Չինաստանում, Ճապոնիայում, Կորեայում, Գերմանիայում և այլուր: Այս համակարգերը սովորաբար զբաղեցնում են միայն 2 ավտոմեքենայի տարածք (մոտ 30 մ²), սակայն կարող են ապահովել շուրջ 12...18 ավտոմեքենայի կայանումը՝ օգտագործելով մեխանիկական ռոտացիա: Չնայած ճարտարագիտական պարզությանը՝ համակարգերն ունեն մի շարք թերություններ, մասնավորապես, բարձր ինքնարժեք (մոտ 80 000...100 000\$), տեղադրման համար բարդ ենթակառուցվածքների և հաղորդակցուղիների անհրաժեշտություն, սոցիալապես մեկուսացված վճարային համակարգ (մեկ սակագին՝ բոլորի համար) և այլն [7-9]: Ներկայացնենք Հիբրիդային ուղղահայաց կայանման մոդուլի սխեմատիկ տեսքը (նկ. 1) [10]:

Նյութեր և մեթոդներ

Այս հետազոտությունը նպատակ ունի մշակել և տեսականորեն հիմնավորել նորարարական հիբրիդային ուղղահայաց կայանման մոդուլը՝ որպես ք. Երևանի (ոչ միայն) կայանատեղիների պակասի թեթևացման միջոց: Ներկայացված մոդելն առաջինն է ք. Երևանի պայմաններում, որը համադրում է ավտոմոբիլի վերամշակված մասերի կիրառումը, (աղ. 1), AI-PRS ինտելեկտուալ ամրագրման համակարգը և սոցիալական սակագնային քաղաքականությունը մեկ միասնական տեխնոլոգիական հարթակում՝ ապահովելով ինչպես տարածքային, այնպես էլ տնտեսական

արդյունավետություն: Հիբրիդային ուղղահայաց կայանման համակարգի նախնական տեխնիկատնտեսական գնահատման համար ստեղծվել է կառուցվածքային մոդել, որը հաշվի է առնում տեղադրման մակերեսը, ավտոմեքենաների քանակը, կառուցման արժեքը, շահագործման ծախսերը և սոցիալական գործոնները:



Նկ. 1. Հիբրիդային ուղղահայաց կայանման մոդուլի սխեմատիկ տեսքը

Չշահագործվող ավտոմեքենաների վերամշակման դեպքում մոդուլի կառուցման արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով [10, 11]՝

$$C_{hիբ} = C_{ստ.} \cdot (1 - \alpha) , \quad (1)$$

որտեղ $C_{hիբ}$ -ը հիբրիդային մոդուլի վերջնական արժեքն է, (\$), $C_{ստ.}$ -ն՝ ստանդարտ մոդուլի արժեքը (80 000...100 000 \$), α -ն՝ վերամշակման ծավալի գործակիցը:

Արժեքային գնահատականները հիմնված են շուկայական իրացվելիք գներով, ինչն ամրագրված է աղ. 1-ում:

Աղյուսակ 1

Մոդուլի արժեքային կառուցվածքն ըստ բաղադրիչների և խնայողության գործակիցների

№	Բաղադրիչներ	Փաստ./Վերամշ. արժեքը, \$	Հիմնավորում
1	2	3	4
1	Մետաղական կրող կոնստրուկցիա	28000 / 9800	Մետաղը ստացվում է չշահագործվող, ապամոնտաժված տրանսպորտային միջոցներից (օր.՝ լիսեռներ, կամրջակներ, կախոցներ): Շուկայական հումքային արժեքը՝ ~ 0,6 \$/կգ (նորինը՝ 1,2 \$/կգ): Տիպիկ կրող կառուցվածքը պահանջում է ~ 6 տ մետաղ՝ (50 % խնայողություն)
2	Հիդրավլիկ և մեխանիկական շարժակազմ	20000 / 20000	Զի կարող փոխարինվել

Աղ. 1-ի շարունակություն

1	2	3	4
3	Էլեկտրականություն և կառավարում	12000 / 12000	Չի կարող փոխարինվել
4	Տեղադրում և հիմք	8000 / 7200	Պտուտակների և խողովակային տարրերի որոշ մասեր հնարավոր է ստանալ ապամոնտաժված շինարարական մետաղական կոնստրուկցիաներից (խնայողություն ~10%)
5	Ծրագրային ապահովում	6000 / 5500	Ծրագրային ապահովում տեղական ծրագրավորողների կողմից (~ 8 % խնայողություն)
ԸՆԴՀԱՆՈՒՐ		74000*/ 54500**	(~ 26 % խնայողություն) $\alpha=0,27$

*-համարժեք է 28 638 000 ՀՀԴ., **- համարժեք է 21 091 500 ՀՀԴ. (փոխարժեքն ըստ 29.07.25թ.)

Մեկ տրանսպորտային միջոցի մեկ ժամվա վճարման սակագինը՝ առանց սոցիալական խմբերի տարանջատման, հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$P_0 = \frac{C_{hhp} + M.Y}{V.Y.T} \text{ ՀՀԴ./ժ}, \quad (2)$$

որտեղ M -ը միջին տարեկան սպասարկման ծախսն է (\$), N -ը՝ կայանման տեղերի քանակը, Y -ը՝ շահագործման տարիների քանակը, V -ն՝ օրական կայանվող ավտոմեքենաների քանակը, T -ն սարքավորման աշխատանքային ժամերն են տարվա ընթացքում:

Ընդհանուր առմամբ, միջազգային փորձում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հստակեցվել է, որ միջինում մեկ տեղի սպասարկման համար տարեկան ծախսվում է մոտ 300 \$ գումար (հաշվի առնելով, որ առկա են վերամշակված տարրեր +30 % անվտանգությունից ելնելով): Սարքավորման շահագործական երկարակեցությունը կազմում է շուրջ 15 տարի [12]: Ժամը 22:00-ից մինչև 09:00-ն և կիրակի օրերին առաջարկվում է նախատեսել անվճար կայանում:

$$P_0 = \frac{54020+4680.15}{12.15.(252.13)} = \frac{124700}{589680} = 0,211 \text{ \$}/\text{ժ} \approx 100 \text{ ՀՀԴ./ժ} :$$

Սակագնային համակարգում առաջարկվում է փոփոխական մոդել՝ ըստ վարորդի սոցիալական կարգավիճակի.

$$P_i = P_0 \cdot (1 - \beta_i), \quad (3)$$

որտեղ P_i -ն i -րդ սոցիալական խմբի սակագինն է, P_0 -ն՝ հիմնական սակագինը, β_i -ն i -րդ սոցիալական խմբի գեղչի գործակիցն է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինիս կանոնակարգման համար առկա չեն իրավական հիմքեր, առաջարկվում է օգտագործել Երևանի քաղաքապետարանի կողմից սահմանված արտոնությունները՝ հասարակական ուղևորատար տրանսպորտի օգտագործման համար [13]:

Տեխնոլոգիական նորարարական համակարգերը, ինչպիսին է AI-PRS-ն, պահանջում են ոչ միայն կապիտալ ներդրումներ, այլև շարունակական տեխնիկական սպասարկում, անսարքությունների ապահովագրում, ծրագրային թարմացումներ և համակարգի արդիականացում: Բացի այդ, անհրաժեշտ է վերականգնել ներդրումը ողջ ցիկլի ընթացքում: Նմանատիպ կայանման մո-

դուլների համար միջազգային գործունեությունում շահութաբերությունը սովորաբար տատանվում է 15...30 % սահմաններում, կախված համակարգի բարդությունից, սպասարկման ծախսերից և ներդրման ծավալից: Նախագծի բնույթը հնարավորություն է տալիս տեղայնացնել որոշ տարրեր (օրինակ՝ ծրագրային ապահովում), ինչի շնորհիվ հնարավոր է նվազեցնել ինքնարժեքը և որոշակիորեն մեղմել սակագինը՝ պահպանելով նպատակային շահույթը: Հաշվի առնելով շահութաբերության նպատակային գործակիցը՝ առաջարկվում է մեկ ժամվա համար հետևյալ սակագինը՝

$$P = P_0(1+0,3) = 100,1,3 = 130 \text{ դր./ժամ} :$$

Վերոնշյալով պայմանավորված, սահմանվում է ժամային վճար 130 *դրամ*, 8 ժամյա վճար՝ 900 *դրամ*, օրական՝ 1500 *դրամ*: Միաժամանակ տրանսպորտային միջոցների կայանման վճարը հաշվարկվելու է համարժեք (օր.՝ կայանման սկիզբ 10:00, կայանման ավարտ 13:40, վճարը՝ 480 դր.):

Արդյունքներ և քննարկում

Երևանի վարչական շրջաններում տարածքների օգտագործման կառուցվածքի և ավտոճանապարհային ցանցի խտության գնահատման հիման վրա անհրաժեշտ է իրականացնել մոդուլի տեղադրման տարածքների նախնական քարտեզագրում, հիմնվելով հետևյալ պարամետրերի վրա՝


- տեղադրման նվազագույն մակերես $\approx 30...35 \text{ մ}^2$ (2 ավտոմեքենայի չափ),
- հասանելիություն հանրային տրանսպորտի կանգառներին ($\leq 150 \text{ մ}$),
- ստորգետնյա և վերգետնյա խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:

Որպես առաջարկ աղյուսակի տեսքով ներկայացվել են որոշ վարչական շրջանների այն կոորդինատները, որտեղ հնարավոր է տեղակայել հիբրիդային ուղղահայաց կայանման մոդուլներ և ապահովել շուրջ 4 անգամ ավել ավտոմեքենաների կայանում (նկ. 2), (աղ. 2):

Աղյուսակ 2

Հիբրիդային ուղղահայաց կայանման մոդուլների տեղակայման առաջարկվող վայրերը

№	Վարչական շրջան	Կոորդինատներ	Մոդուլի քանակը	Համեմատություն ըստ կայանված ավտոմեքենաների, առաջ/հետո
1	Կենտրոն	40.177366, 44.501468	6	13+5 (մոդուլների դիմաց)/72
2	Նոր Նորք	40.196620, 44.568121 և 40.196326, 44.568682	22	62/264
3	Կենտրոն	40.176392, 44.503773	2	8/24
4	Կենտրոն	40.176024, 44.509085	20	0+5 (գրոսաշրջային ավտոբուսներ) /240
5	Շենգավիթ	40.151952, 44.482848	6	18/72
6	Կենտրոն	40.177853, 44.510348	15	30+40 (մոդուլների դիմաց)/180
7	Արաբկիր	40.197756, 44.493463	10	35/120



Նկ. 2. Հիբրիդային ուղղահայաց կայանման մոդուլների քաղաքաշինական տեղակայման գծապատկերի օրինակ

AI-PRS համակարգի նորարարական բաղադրիչներից մեկը կարճաժամկետ ամրագրման կառավարման համակարգն է: Հաշվի առնելով տեղանքի սահմանափակ հնարավորությունները և օգտվողների փոփոխական վարքագիծը՝ համակարգը նախատեսում է ամրագրում և ավտոմատ չեղարկում, երբ սահմանված ժամանակահատվածում օգտատերը չի մոտենում կայանատեղիին: Համակարգը մոդուլի ազատ տեղերի մատչելիությունն ըստ ժամանակի դիտարկում է հետևյալ ֆունկցիայի տեսքով [7, 9, 14]՝

$$A(t) = A_0 - \sum_{i=1}^n R_i(t), \quad (4)$$

որտեղ $A(t)$ -ն ժամանակի t պահին մոդուլում հասանելի տեղերն են, A_0 -ն՝ մոդուլի ընդհանուր տեղերի քանակը, $R_i(t)$ -ն՝ օգտատեր i -ի կողմից ամրագրված տեղերի քանակը:

Այս նպատակով կիրառվում է հետևյալ պարզեցված ժամանակային ֆունկցիան՝

$$R_i(t) = \begin{cases} 1, & \text{եթե } t \leq t_{\text{ժամանում}}^i \leq t + \Delta t + \sigma \\ 0, & \text{հակառակ դեպքում} \end{cases}, \quad (5)$$

որտեղ $R_i(t)$ -ն տվյալ t պահին i -րդ օգտատիրոջ ամրագրման ակտիվ վիճակն է (1՝ ակտիվ, 0՝ չեղարկված), t -ն ամրագրման պահն է, $t_{\text{ժամանում}}^i$ -ը i -րդ վարորդի փաստացի ժամանման պահն է, Δt -ն՝ նախնական ամրագրման ժամանակահատվածը (ընդունվում է 5 ր), σ -ն՝ թույլատրելի ուշացման միջակայքը (ընդունվում է 1 ր):

Դիցուկ կայանման մոդուլում կա $A_0 = 12$ տեղ: Ներկա պահին ունենք 4 օգտատեր, որոնք միաժամանակ ամրագրել են կայանատեղեր և առաջիկա 5 ր (+ 1 ր թույլատրելի) ընթացքում պետք է ժամանեն: Ամրագրման պահը 10:00, մոտենալու առավելագույն ժամանակահատվածը 10:06: Արդյունքները ներկայացվել են աղ. 3-ում:

Աղյուսակ 3

Ամրագրված օգտատերերի ժամանման պահերի գնահատականն ու ակտիվության կարգավիճակը

Օգտատեր (i)	1	2	3	4
Ամրագրում	10:00	10:00	10:00	10:00
Ժամանում	10:07	10:06	10:03	10:10
$R_i(t)$	0	1	1	0

Արդյունքում ստացվում է, որ $10:06$ -ին՝ $A(t)=12 - (0+1+1+0) = 10$:

Այս ֆունկցիայի հիման վրա, AI համակարգը կիրառում է սպասարկման առաջնահերթությունների ալգորիթը՝ հիմնված ավտոմեքենայի գտնվելու վայրի, ժամանման կանխատեսման և օգտատիրոջ ակտիվության վրա:

Ընդհանուր առմամբ հիբրիդային ուղղահայաց կայանման մոդուլը տնտեսապես արդյունավետ է հետևյալ պատճառներով [11, 15]՝

- **տարածքի արդյունավետ օգտագործում** – $30...35$ u^2 տարածքում ապահովում է 12 -ից 16 ավտոմեքենայի կայանում,
- **ինքնարժեքի նվազեցում** – վերամշակված մասերի կիրառմամբ սարքավորման արժեքը նվազում է շուրջ $26...30$ %-ով,
- **կարճ վերադարձի ժամկետ** – համաձայն միջազգային փորձի, ուղղահայաց ավտոկայանման մոդուլների ներդրումները վերադառնում են $4...6$ տարում,
- **սոցիալական սակագնային քաղաքականություն** – տարբեր խմբերի համար գների ճկունությունը բարձրացնում է սարքավորման կիրառելիությունը և եկամուտների կայունությունը:

Դիցուք ընդունենք 12 ավտոմեքենայի կայանում ապահովող $54,500$ \$ արժեքով նորարարական սարքավորում, որի ժամային սակագինը 130 ηp . է, օրական աշխատում է 13 ժ տարեկան 252 $օր$ (տոնական և հիշատակի, շաբաթ ու կիրակի օրերին անվճար կայանում): Ընդունենք, որ սարքավորումն օրական ապահովում է նվազագույնը 12 ավտոմեքենայի կայանում (հազեցվածությունը՝ 100 %): Տարեկան եկամտաբերությունը կլինի.

$$\mathcal{D}_n = P \cdot V \cdot T, \quad (6)$$


$$\mathcal{D}_n = 130 \cdot 12 \cdot 13 \cdot 252 = 5\,110\,560 \text{ } \eta p. (\sim 13\,205,6 \$):$$

Տարեկան սպասարկման ծախսը՝ $C_{սպ.} = 300 \times 12 = 3\,600$ \$, հետևաբար տարեկան մաքուր դրամական հոսքը (մաքուր շահույթը) կլինի.

$$C_{շահ.} = \mathcal{D}_n - C_{սպ.} = 13\,205 - (300 \times 12) = 9\,605,6 \$ (\sim 3\,745\,950 \text{ } \eta p.) \quad (7)$$

իսկ ներդրման վերադարձի ժամկետ կլինի (նկ. 3).

$$T_{վեր.} = 54,500 / 9,605 \approx 5,6 \text{ տարի} : \quad (8)$$



Նկ. 3. Կուտակային դրամական հոսքերի դինամիկան և ներդրման վերադարձի կետը

Այժմ հաշվարկենք նաև այն նվազագույն հագեցվածության տոկոսային հարաբերակցությունը, որի ժամանակ կատարված ծախսերը ծածկվում են (շահույթը բացակայում է): Սարքավորման տարեկան սպասարկման համար անհրաժեշտ է 3 600 \$ (12 տեղ մոդուլ) գումար, իսկ սարքավորման տարեկան մասնաբաժինը կազմում է $\approx 3,633$ \$: Տարեկան ընդհանուր ծախսը կազմում է $\approx 7\,233$ \$: Լիարժեք լցվածության դեպքում տարեկան եկամուտը 13 205 \$ է: Լցվածության տոկոսը, որ ծածկում է և գործառնական ծախսերը և սարքի արժեքի ամբողջ վերադարձը՝ 15 տարում կազմում է $\approx 55\%$: Ներդրման տնտեսական արժեքը գնահատելու համար հաշվի ենք առնում գումարի ժամանակային արժեքը: Ընդունելով զեղչի տոկոսադրույք $r=10\%$ (բանկային ավանդ կամ պարտատոմսեր) և շահագործման ժամկետը $T=15$ տարի՝ գուտ ներկա արժեքը (NPV) կկազմի՝


$$NPV = \sum_{t=1}^{15} \frac{C_{շահ}}{(1+r)^t} - C_{հիք} = \sum_{t=1}^{15} \frac{9,605}{(1+0,10)^t} - 54\,500 \approx +18\,561 \text{ USD} : \quad (9)$$

Քանի որ $NPV > 0$ -ից, նշանակում է, որ նախագիծն ավելացնում է սահմանված գումարային արժեքը, այսինքն առաջարկվող մոդելի կիրառելիությունը տնտեսապես հիմնավորված է: Տնտեսական արդյունավետության գնահատման միջազգային գործիքներից ամենակարևորներից մեկը ներքին եկամտաբերության նորմ է՝ IRR-ն է (Internal Rate of Return), որը սահմանվում է որպես այն զեղչի տոկոսադրույքը (r^*), որի դեպքում նախագծի գուտ ներկա արժեքը (NPV) հավասար է զրոյի [15]:

$$NPV(r^*) = \sum_{t=1}^T \frac{C_{շահ}}{(1+r^*)^t} - C_{հիք} = 0 ,$$

$$0 = \sum_{t=1}^{15} \frac{9,605.6}{(1+r^*)^t} - 54\,500, \quad r^* \approx 15,6\% :$$

Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ եթե զեղչի տոկոսադրույքը (r) շուկայում աճի մինչև $\approx 15\%$ (նկ. 4), նախագիծը դեռ կմնա «շահավետ» ($NPV=0$): Ընդհանուր առմամբ, միջազգային գուծունեությունում ենթակառուցվածքային ծրագրերի համար IRR-ը $\geq 12\%$ դիտվում է որպես բավարար, այսինքն առաջարկվող նախագիծը գերազանցում է այդ շեմը [11, 12, 14]:



Նկ. 4. Զուտ ներկա արժեքի փոփոխությունը զեղչի տոկոսադրույքի նկատմամբ

Ռոտորային հիբրիդային ուղղահայաց կայանման մոդուլի համար առաջարկվում է տանիքային հատվածում տեղադրել նաև արևային վահանակներ, որոնք ապահովում են էներգիայի հասանելիությունն արտակարգ իրավիճակների ժամանակ, օրինակ՝ հոսանքի բացակայության դեպքում, որպեսզի տրանսպորտային միջոցներն անվտանգ դուրս բերվեն կայանատեղիից: Արտակարգ ռեժիմի համար անհրաժեշտ է գնահատել ռոտորի պտտման էներգիայի պահանջը՝ հաշվի առնելով միաժամանակ առավելագույն 12 ավտոմեքենայի դուրս բերումը, իսկ իրական օգտագործման պարագայում՝ 2...3 պտույտ, քանի որ ոչ բոլոր վարորդները միաժամանակ կլինեն տեղում:

Գործնական փորձերի և իրական արտադրողների տվյալների հիման վրա հայտնի է, որ 12 ավտոմեքենայի համար նախատեսված ռոտորային ավտոմատացված կայանման համակարգերում օգտագործվում է 15 կՎտ հզորությամբ շարժիչ: Այս արժեքն ընտրվել է՝ հաշվի առնելով ռոտորի շառավիղը ($r \approx 2,5$ մ), միջին ավտոմեքենայի զանգվածը ($m \approx 1500$ կգ) և մեխանիկական կորուստների, փոխանցման արդյունավետության ($\eta \approx 0,75$) ազդեցությունը: Այս գործնական մոտեցումը թույլ է տալիս ռոտորը պտտել միաժամանակ ամբողջ հարթակով՝ ապահովելով անվտանգ մուտք և ելք բոլոր ավտոմեքենաների համար [14, 15]:

Արտակարգ ռեժիմի համար անհրաժեշտ է գնահատել, թե քանի պտույտ կարող է իրականացնել համակարգը միայն արևային վահանակների տրամադրած էներգիայի հաշվին: Առաջարկվող համակարգում նախատեսվում է տեղադրել 4 արևային վահանակ, յուրաքանչյուրը 0,3 կՎտ հզորությամբ, ընդհանուր հզորություն՝ $P_{արև} = 1,2$ կՎտ: Օրվա միջին արևային լույսի 5 ժամով ստացվում է $P_{արև}^5 = 6$ կՎտ էներգիա:

Հաշվարկված մեկ պտույտի էներգիայի սպառումը, երբ առկա են բոլոր 12 ավտոմեքենաները, կազմում է մոտ 0,77 կՎտժ, հետևաբար, երկու պտույտի դեպքում՝ 1,54 կՎտժ, երեք պտույտի դեպքում՝ 2,31 կՎտժ: Այսպիսով, վերջինս համեմատելով արևային վահանակների արտադրած 6 կՎտժ էներգիայի հետ ստացվում է, որ արտակարգ ռեժիմում՝ հոսանքի բացակայության դեպքում, հնարավոր է կատարել առնվազն 2...3 պտույտ, ապահովելով ավտոմեքենաների անվտանգ դուրս բերումը:

Եզրակացություն

- Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ առաջարկվող հիբրիդային ուղղահայաց կայանման մոդուլը տեխնիկապես իրագործելի է, ֆինանսապես հիմնավորված և սոցիալապես՝ արդար: Տեխնիկական տեսանկյունից համակարգը հիմնված է մոդուլային կառուցվածքի վրա, ներառում է վերամշակված տրանսպորտային միջոցների տարրեր և ապահովում է արդյունավետ տարածական օգտագործում՝ նվազեցնելով քաղաքային միջավայրի ծանրաբեռնվածությունը:
- Տեխնիկատնտեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ մոդուլի արժեքը նվազում է շուրջ 26...30 %, ներդրման վերադարձի ժամկետը կազմում է 5...6 տարի, իսկ ներքին

եկամտաբերության նորմը (IRR) գերազանցում է միջազգային շեմը ($\approx 15,6\%$): Տնտեսական գնահատման հիման վրա ստացվել է դրական զուտ ներկա արժեք ($NPV \approx +18,561$ USD) և բավարար ներքին եկամտաբերության նորմ ($IRR \approx 15,6\%$), ինչը գերազանցում է ընդունված միջազգային շեմը: Վերադարձի ժամանակահատվածն ընդունելի է ենթակառուցվածքային նախագծերի համար, որտեղ շահագործման տևողությունը գերազանցում է 15 տարին: Քաղաքաշինական վերլուծությունը ցույց է տալիս, որ ք. Երևանի կենտրոնական և բարձր պահանջարկ ունեցող հատվածներում նման կայանման մոդուլների ներդրումը թույլ է տալիս էականորեն նվազեցնել ավտոկայանման ճգնաժամը:

- Կարևոր է ընդգծել, որ մոդուլը չի սահմանափակվում միայն Երևան քաղաքում կիրառմամբ, այն ունի կիրառելիության լայն ներուժ նաև այլ խիտ բնակեցված քաղաքներում, որտեղ տարածքային ռեսուրսները սահմանափակ են, իսկ կայանման ճգնաժամը՝ նույնքան սուր:

Գրականության ցանկ

- [1] **Ա.Տ. Սարգսյան, Խ.Գ. Խաչատրյան**, Երևան քաղաքի տրանսպորտային հիմնախնդիրների լուծումը ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ, Ագրոգիտություն և տեխնոլոգիա 3/38 (2023) 224-230, DOI: 10.52276/25792822-2023.3-224.
- [2] **D. Shoup**, Pricing curb parking. Transportation Research Part A: Policy and Practice 154 (2021), DOI: 10.1016/j.tra.2021.04.012.
- [3] **А.Г. Кравец, А.А. Астанков, Г.А. Мокрушин**, Виртуальный ассистент водителя для поиска места на открытой парковке, Прикаспийский журнал: управление и высокие технологии 2(58) (2022) 35-44.
- [4] Modern Challenges of a Capital City, < <https://evnreport.com/raw-unfiltered/modern-challenges-of-a-capital-city-part-2-transportation/> > (05.06.2025).
- [5] **П.В. Попов, А.Г. Кравец**, Алгоритм оценки уровня эффективности логистической инфраструктуры региона, Прикаспийский журнал: управление и высокие технологии 3 (2021) 54–61.
- [6] Առանձին երթևեկելի գոտիներ ավտոբուսների համար, URL: <<https://hy.armradio.am/archives/497004>> (20.06.2025).
- [7] **С.Г. Гнездилов и др.**, Развитие классификации и терминологии в области механизированных автомобильных парковок. Подъемно-транспортное дело 5-6 (2009) 12–14.
- [8] **A.D. Zhukov**, Parking lots and parkings, <<https://www.stroyka.ru/Materials/>>.
- [9] Gulf Rotary Smart Rotary Parking System Parking Solution, URL: <https://hydropark.en.made-in-china.com/product/vmJpDUgluRrX/China-Gulf-Rotary-Smart-Rotary-Parking-System-Parking-Solution.html?pv_id=1j160e2lo33e&faw_id=1j160e5itb4b&bv_id=1j160kk7j669&pbv_id=1j160dih4623l> (20.06.2025).
- [10] Parkmatic Frequently Asked Questions (02.07.2025).
- [11] **S.H. Bayih, S.L. Tilahun**, Dynamic vehicle parking pricing. A review. Operations Research and Decisions 34(1) (2024) 35-59. DOI 10.37190/ord240103.
- [12] **M. Kaci, S. Merabti, Z. Layate, H. Ait Said, S. Amrane, L. Terki**, Effective smart rotary parking management in urban areas. The Journal of Engineering and Exact Sciences 10(9):20027 (2024). DOI: 10.18540/jcecvl10iss9pp20027.

- [13] Երևանի հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգ,
<<https://transport.yerevan.am/privilege>> (23.06.2025).
- [14] Transport Notes, Transport Economics, Policy and Poverty Thematic Group,
<<https://assets.publishing.service.gov.uk/media/57a08c6ee5274a31e00011fa/C21-trn-14-EENote2.pdf>> (17.08.2025).
- [15] **Л.Н. Орлова, Е.А. Кочеткова**, Модульные быстро возводимые роторные парковки: современный подход к проектированию стоянок автомобилей, Приволжский научный журнал 4(48) (2018) 146-151.

ПРЕДЛОЖЕНИЕ ПО ВНЕДРЕНИЮ НОВЫХ ГИБРИДНЫХ ВЕРТИКАЛЬНЫХ ПАРКОВОЧНЫХ МОДУЛЕЙ В ГОРОДСКОЙ СРЕДЕ ЕРЕВАНА

**Валерик Мамиконевич Арутюнян^{1*}, Арман Тигранович Саркисян², Хачатур Гагикович
Хачатрян², Асмик Гарниковна Арутюнян¹**

¹Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

²Управление по строительству и благоустройству мэрии Еревана, г. Ереван, РА

*vmh-1961@mail.ru

В данной статье рассматривается проблема существенного дефицита парковочной инфраструктуры в г.Ереване и предлагается инновационное решение – внедрение гибридных вертикальных парковочных модулей. Предлагаемый модуль основан на трёх инновационных компонентах: использовании переработанных деталей неиспользуемых транспортных средств, резервировании парковочных мест на основе искусственного интеллекта (AI-PRS) и социально сбалансированной системе оплаты. На основе анализа городского развития были предложены возможные места для размещения в различных административных районах г. Еревана. Результаты показывают, что предлагаемая модель не только технически осуществима и экономически выгодна, но и обеспечивает социальную справедливость и территориальную эффективность, становясь жизнеспособным и широко применимым решением для современного управления городскими парковками.

Ключевые слова: гибридная вертикальная парковка, искусственный интеллект, резервирование парковочных мест, интеллектуальные транспортные системы, чистая приведенная стоимость, внутренняя норма доходности

PROPOSAL TO IMPLEMENT NEW HYBRID VERTICAL PARKING MODULES IN YEREVAN'S URBAN ENVIRONMENT

Valerik Harutyunyan^{1*}, Arman Sargsyan², Khachatur Khachatryan², Hasmik Harutyunyan¹

¹National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

²Construction and Improvement Department of the Yerevan Municipality, Yerevan, RA

*vmh-1961@mail.ru

This article examines the problem of a significant lack of parking infrastructure in the city of Yerevan and proposes an innovative solution - the introduction of hybrid vertical parking modules. The proposed module is based on three innovative components: the use of recycled parts of unused vehicles, artificial intelligence-based reservation (AI-PRS), and a socially balanced payment system. Based on an urban

development analysis, possible locations for deployment in different administrative districts of Yerevan were proposed. The results indicate that the proposed model is not only technically feasible and economically beneficial, but also ensures social justice and territorial efficiency, becoming a viable and widely applicable solution for modern urban parking management.

Keywords: Hybrid vertical parking, Artificial intelligence, Parking reservation, Intelligent transportation systems, Net present value, Internal rate of return.

Հարությունյան Վալերիկ Մամիկոնի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Տրանսպորտային, լոգիստիկ համակարգերի և շինարարական մեքենաների ամբիոն, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Սարգսյան Արման Տիգրանի, տ.գ.թ.** (ՀՀ, ք. Երևան) - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ճանապարհների միջին նորոգման և հիմնանորոգման ծրագրի պատասխանատու ինժեներ, (+374)98692637, arman-sargsyan-97@mail.ru, **Խաչատրյան Խաչատուր Գագիկի, տ.գ.թ.** (ՀՀ, ք. Երևան) - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ճանապարհների միջին նորոգման և հիմնանորոգման ծրագրի պատասխանատու ինժեներ, (+374)41693060, xachatryanx.1998@gmail.com, **Հարությունյան Հասմիկ Գառնիկի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Տրանսպորտային, լոգիստիկ համակարգերի և շինարարական մեքենաների ամբիոն, հայցորդ, (+374)098492050, harutyunyanhasmik865@gmail.com

Арутюнян Валерик Мамиконович, к.т.н., доцент (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Транспортных, логистических систем и строительных машин, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Саркисян Арман Тигранович, к.т.н.** (РА, г. Ереван) - Управление по строительству и благоустройству мэрии Еревана, Программа среднего ремонта и капитального ремонта дорог, ответственный инженер, (+374)98692637, arman-sargsyan-97@mail.ru, **Хачатрян Хачатур Гагикович, к.т.н.** (РА, г. Ереван) - Управление по строительству и благоустройству мэрии Еревана, Программа среднего ремонта и капитального ремонта дорог, ответственный инженер, (+374)41693060, xachatryanx.1998@gmail.com **Арутюнян Асмик Гарниковна**, (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Транспортных, логистических систем и строительных машин, соискатель (+374)098492050 harutyunyanhasmik865@gmail.com

Harutyunyan Valerik, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor (RA, Yerevan) – NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Sargsyan Arman, doctor of philosophy (PhD) in Engineering** (RA, Yerevan) - Engineer in charge of the program for medium repairs and major repairs of roads of the Construction and Improvement Department of the Yerevan Municipality, (+374)98692637, arman-sargsyan-97@mail.ru, **Khachatryan Khachatur, doctor of philosophy (PhD) in Engineering** (RA, Yerevan) - Engineer in charge of the program for medium repairs and major repairs of roads of the Construction and Improvement Department of the Yerevan Municipality, (+374)41693060, xachatryanx.1998@gmail.com, **Harutyunyan Hasmik** (RA, Yerevan) –NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, Ph. D. student (+374)098492050, harutyunyanhasmik865@gmail.com

Ներկայացվել է՝ 26.01.2026թ.

Գրախոսվել է՝ 16.02.2026.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

**ԲՆԱԿԼԻՄՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԻ
ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

**Վալերիկ Մամիկոնի Հարությունյան*, Արմեն Վալերիկի Հարությունյան, Անահիտ Վարդգեսի
Հարությունյան, Զինար Վահանի Ներսեյան, Կարապետ Հակոբի Մոսիկյան**

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

**vmh-1961@mail.ru*

Հոդվածում քննարկվում է բնակլիմայական գործոնների ազդեցությունն ավտոճանապարհների թողունակության վրա: Որոշվել է երկգոտի ճանապարհի գոտու թողունակությունը՝ հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, ճանապարհի վիճակը և ավտոմոբիլի ազատ երթևեկության միջին արագությունը: Նոր ճանապարհների նախագծման դեպքում թեթև մարդատար ավտոմոբիլների փաստացի առավելագույն թույլատրելի արագությունն առաջարկվում է որոշել վերլուծական եղանակով, ելնելով հաշվարկի սխեմայից, երկրաչափական պարամետրերի պահանջներից և տրանսպորտաշահագործական բնութագրերից, հաշվի առնելով օդերևութաբանական գործոնների ազդեցությունը, ճանապարհի հետ ավտոմոբիլի փոխազդեցությունը և վարորդի կողմից երթևեկության պայմանների ընկալումը:

Բանալի բառեր. *ավտոճանապարհ, ավտոմոբիլ, արագություն, թողունակություն, բնակլիմայական գործոն, թաց ծածկ, միջին քառակուսային շեղում*

Ներածություն

Հաղորդակցուղիների գործունեությունը բնութագրող կարևոր չափանիշներից է դրանց թողունակությունը: Թողունակությունը դա ավտոմոբիլների առավելագույն քանակն է, որը կարող է բաց թողնել ճանապարհահատվածը միավոր ժամանակահատվածում՝ դիտարկվող ճանապարհի մեկ կամ երկու ուղղություններով տվյալ բնակլիմայական պայմաններում:

Ավտոճանապարհների համար դասակարգվում է թողունակության երեք հասկացություն՝ հաշվարկային, փաստացի և նորմատիվային:

Հաշվարկային թողունակությունը որոշվում է տեսական եղանակով՝ տարբեր հաշվարկային բանաձևերով: Այդ նպատակով կարող են կիրառվել տրանսպորտային հոսքի տարբեր մաթեմատիկական մոդելներ և էմպիրիկ բանաձևեր, որոնք հիմնված են հետազոտական տվյալների ամփոփման վրա:

Փաստացի թողունակությունը հնարավոր է որոշել միայն գործող ճանապարհներին՝ ձևավորված ճանապարհային երթևեկության պայմաններում: Այդ տվյալներն ունեն հատկապես մեծ գործնական նշանակություն, քանի որ որոշակի արագության մակարդակի և երթևեկության անվտանգության ապահովման դեպքում այն հնարավորություն է տալիս գնահատել իրական թողունակությունը:

Առավել հասարակ է նորմատիվային թողունակության կիրառումը, որը տրվում է պաշտոնական նորմատիվային փաստաթղթերում (Շինարարական նորմերում) [1, 2]:

Նյութեր և մեթոդներ

Ավտոճանապարհների թողունակությունն առավել նկատելի նվազում է բնակլիմայական գործոնների՝ անձրևի, ձյան տեղումների, մերկասառույցի, մառախուղի և այլնի ներգործության ժամանակաընթացքում [1, 3]: Այն բացատրվում է նրանով, որ այդպիսի գործոնները նկատելիորեն ներագործում են ճանապարհի, ավտոմոբիլի և վարորդի վիճակի վրա (ավտոմոբիլի փոխազդեցությունը ճանապարհի հետ, վարորդի կողմից ճանապարհի և շրջակա իրադրության ընկալումը): Արդյունքում նվազում է արագությունը, տրանսպորտային հոսքում մեծանում են միջակայքերը և որպես հետևանք՝ նվազում է թողունակությունը, առաջանում են խճողումներ և կանգառներ: Այդ իսկ պատճառով թողունակությունը պարտադիր ստուգում են ճանապարհի վիճակի և եղանակային պայմանների համար՝ տարվա առավել վատ եղանակային ժամանակահատվածներում (ձմեռային և աշնանային): Բնական հետազոտումները ցույց են տվել, որ ոչ միայն Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի (ՃՓՑ), այլ նաև արտաքաղաքային ճանապարհների ուղեմասերում և խաչմերուկներում բնակլիմայական պայմանների վատթարացման դեպքում նվազում է թողունակությունը: Կախված ճանապարհի նշանակությունից, կարգից, պահպանումից և եղանակային պայմաններից թողունակության գնահատման ժամանակ կարող են ընդունվել ճանապարհի մակերևույթի հետևյալ հաշվարկային վիճակները՝

- **ձմեռային ժամանակահատված.**

- ձյունաթափի և ձյունաբքի ժամանակ, մինչ ձյունամաքիչ մեքենաների անցումը, ձյան շերտն առկա է երթևեկելի մասի և կողնակների վրա,
- երթևեկելի մասը մաքրված է, սառույցը և ձյունն առկա են երթևեկելի մասի եզրին և կողնակների վրա,
- ճանապարհաձածկը պատված է մերկասառույցով,
- ճանապարհաձածկը մշակվել է քիմիական և իներտ նյութերով, խոնավ է:

- **գարնանային-աշնանային ժամանակահատված.**

- ճանապարհաձածկը թաց է և մաքուր,
- ճանապարհաձածկը թաց է, մաքուր գոտու եզրամասերը ցեխոտ են:

Արդյունքներ և քննարկում

Երկգոտի ճանապարհի գոտու թողունակությունը, հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, որոշվում է հետևյալ բանաձևով [4, 5].


$$P = \omega \alpha V_0 q_{max} , \quad (1)$$

որտեղ ω -ն գործակից է, կախված հանդիպակաց երթևեկելի գոտու բեռնվածությունից, α -ն գործակից է, կախված ճանապարհային պայմաններից և ճանապարհի տեսակից, V_0 -ն երթևեկության արագությունն է ազատ պայմաններում, q/σ , q_{max} -ն՝ դիտարկվող տեղամասում երթևեկության առավելագույն խտությունը, u_{ph}/σ :

Ճանապարհի թողունակության հաշվարկի համար ավտոմոբիլի ազատ երթևեկության միջին արագությունը, հաշվի առնելով ճանապարհի վիճակը և եղանակային պայմանները, հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\bar{V}_0 = V_{ph. max} - 3\sigma_v \quad \text{կամ} \quad V_0 = K_{h. u.} V_{tun. max} - 3\sigma_v, \quad (2)$$

որտեղ $V_{ph. max}$ -ն ավտոմոբիլի փաստացի հնարավոր առավելագույն արագությունն է ըստ դինամիկական բանութագրերի կամ անվտանգության պայմանների՝ եղանակային տվյալ պայմաններում, $V_{tun. max}$ -ն ավտոմոբիլի առավելագույն արագությունն է չափանմուշային պայմաններում, σ_v -ն տրանսպորտային հոսքում ավտոմոբիլի ազատ երթևեկության արագության միջին քառակուսային շեղումն է: Որպես չափանմուշային ընդունվում է ճանապարհի ուղղագիծ հորիզոնական հատվածը՝ չոր, կցման բավարար գործակցով ծածկը, ամրացված կողնակներով, օդի ջերմաստիճանը՝ 20°C , երբ բացակայում է անձրևը, քամին և մառախուղը, $K_{h. u.}$ -ն հաշվարկային արագության ապահովման գործակիցն է [4, 7]:



Նկ. 1. Միջին քառակուսային շեղման կախվածությունն առավելագույն արագությունից

Տրանսպորտային հոսքի ազատ երթևեկության արագության միջին քառակուսային շեղումն ընդունում են նկ.1-ի տվյալներով հետևյալ արագությունների համար.

$$V_{ph. max} = K_{h. u.} V_{tun. max}, \quad (3)$$

$$K_{h. u.} = \frac{V_{ph. max}}{V_{tun. max}}: \quad (4)$$

Ճանապարհային պայմանները և հնարավոր առավելագույն կամ առավելագույն թույլատրելի արագությունները հաշվի առնող α գործակիցը հանդիպակաց երթևեկությամբ երկգոտի ճանապարհի համար որոշվում է հետևյալ բանաձևով [5, 6]՝

$$\alpha=0,65-0,00425 V_{\text{ph. max}}: \quad (5)$$


Համընթաց երթևեկությամբ բազմագոտի ճանապարհների համար՝ մինչև 110 կմ/ժ առավելագույն արագության դեպքում՝

$$\alpha=0,65-0,005 V_{\text{ph. max}}: \quad (6)$$

Թեթև մարդատար ավտոմոբիլի փաստացի առավելագույն հնարավոր կամ առավելագույն թույլատրելի արագությունը նոր նախագծվող ճանապարհների համար կարելի է որոշել վերլուծական եղանակով, հաշվի առնելով հաշվարկի սխեման, երկրաչափական պարամետրերի նկատմամբ պահանջները և տրանսպորտաշահագործական բնութագրերը: Այդ դեպքում հիմնական խնդիրն է ճանապարհի վրա օդերևութաբանական գործոնների ազդեցության պարտադիր հաշվի առնելը, որոնցից են՝ ճանապարհի հետ ավտոմոբիլի փոխազդեցությունը և երթևեկության պայմանների ընկալումը վարորդի կողմից [2, 6, 7]:

Ճանապարհի թողունակության որոշման համար $V_{\text{ph. max}}$, V_0 -ն կարելի է որոշել հաշվարկով կամ թեթև մարդատար ավտոմոբիլի ազատ երթևեկության արագության նկատմամբ դիտարկման տվյալներով՝ եղանակային անբարենպաստ պայմաններում ճանապարհի բոլոր բնորոշ տեղամասերում՝ հաշվարկային արագությունների դեպքերում: Ձյան տեղումների կամ ձյան առկայության դեպքում առավելագույն հնարավոր արագությունը որոշվում է երթևեկության հիմնական հավասարումից, նրա մեջ տեղադրելով ձոճման դիմադրության և կցման գործակցի համապատասխան արժեքները (նկ. 2) [1, 5, 8]:


Վայրէջքների վրա առավելագույն թույլատրելի արագությունը որոշվում է ճանապարհի վրա հանկարծակի խոչընդոտ առաջանալուց առաջ արգելակման պայմանից, իսկ հաշվարկային արագության ապահովման գործակիցը որոշվում է արգելակման ուղղու հավասարումից՝ չափանմուշային պայմանների դեպքում:



Նկ. 2. Կցման (ϕ) և ձոճման դիմադրության (f) գործակիցների կախվածությունը ճանապարհաճաճակի վրա չխտացված ձյան հ բարձրության դեպքում

Վայրէջքի վրա թույլատրելի առավելագույն արագությունը որոշվում է ճանապարհաձածկի վրա հանկարծակի խոչընդոտ առաջանալու պայմանից, իսկ հաշվարկային արագության ապահովվածության գործակիցը գտնում են արգելակման ուղու հավասարումից [9-12]:

Հաշվարկային արագության ապահովման գործակիցը ճանապարհաձածկի տարբեր վիճակներում և երկայնական թեքությամբ հատվածներում ներկայացված է նկ. 3-ում:



ա) վերելքի վրա

բ) վայրէջքի վրա

Նկ. 3. Երկայնական թեքության և ճանապարհաձածկի վիճակի ազդեցությունը երթևեկության արագության վրա. 1-չոր մաքուր ծածկ, $f=0,015$, 2 - ձյան փխրուն շերտ, $h=25$ մմ, $f=0,02$, 3 - ձյան խտացված շերտ, $f=0,04$, 4 - ձյան փխրուն շերտ, $h=20$ մմ, $f=0,09$, 5 - ձյան փխրուն շերտ, $h=40$ մմ, $f=0,10$, 6 - ձյան փխրուն շերտ, $h=80$ մմ, $f=0,15$, 7 - ձյան փխրուն շերտ, $h=10$ մմ, $f=0,17$, 8 - ծածկի վրա մերկասառույց, $f=0,09$, 9 - չոր մաքուր, $\varphi=0,5...0,6$, 10 - թաք մաքուր, $\varphi=0,4$, 11 - թաք, $\varphi=0,3$, 12 - տոփանված ձյուն, $\varphi=0,2$, 13 - մերկասառույց, $\varphi=0,1$

Եզրակացություն

- Բնակլիմայական գործոնները նվազեցնում են ճանապարհի թողունակությունը: Ավտոճանապարհների վրա բնակլիմայական գործոնների (անձրև, ձյուն, մերկասառույց, մառախուղ և այլն) ազդեցության պայմաններում նվազում է տրանսպորտային հոսքի արագությունը, մեծանում են տարածական և ժամանակային միջակայքերը և արդյունքում նվազում է թողունակությունը:
- Նոր ճանապարհների նախագծման ժամանակ հաշվարկային արագությունը անհրաժեշտ է որոշել վերլուծական եղանակով, հաշվի առնելով հաշվարկի սխեման, երկրաչափական պարամետրերը և տրանսպորտաշահագործական բնութագրերը: Այդ դեպքում հիմնական խնդիրն է ճանապարհի հետ ավտոմոբիլի փոխազդեցության և վարորդի կողմից երթևեկության պայմանների ընկալման պարտադիր հաշվի առնելը:

Գրականության ցանկ

- [1] Г.И. Клиновштейн, М.Б. Афанасьев, Организация дорожного движения: Учеб. для вузов, 5-е изд., перераб. и доп., Транспорт, Москва, 2001, 247 с.
- [2] ՀՀՇՆ 32-01-2022. Ավտոմոբիլային ճանապարհներ, ՀՀ Շինարարական նորմեր, Երևան, 2022, 203 էջ:
- [3] В.Ф. Бабков, Дорожные условия и безопасность движения, Транспорт, Москва, 2003, 290 с.

- [4] **В.И. Коноплянко**, Информация в дорожном движении, МАДИ, Москва, 2007, 65 с.
- [5] **В.В. Сильянов, Е.М. Лобанов**, Пропускная способность автомобильных дорог, Транспорт, Москва, 2009, 152 с.
- [6] **B.S. Kerner**, Introduction to Modern Traffic Flow Theory and Control: The Long Road to Three-Phase Traffic Theory, Springer, 2009, 278 p.
- [7] **Л.В. Булавина**, Расчет пропускной способности магистралей и узлов, УГТУ, 2019, 43 с.
- [8] Highway Capacity Manual, TRB, Washington, DC, 2020, 1134 p.
- [9] **В.И. Коноплянко**, Организация и безопасность дорожного движения, Транспорт, Москва, 2001, 183 с.
- [10] **Д.С. Самойлов**, Организация и безопасность городского движения: учеб. для вузов, 2-е изд., перераб. и доп. Москва, 1981, 256 с.
- [11] **Е.М. Лобанов**, Пропускная способность автомобильных дорог, Транспорт, Москва, 1970, 152 с.
- [12] **Я.В. Хомяк**, Организация дорожного движения, Высшая школа, Киев, 2006, 276 с.

ВЛИЯНИЕ КЛИМАТИЧЕСКИХ ФАКТОРОВ НА ПРОПУСКНУЮ СПОСОБНОСТЬ ДОРОГ

Валерик Мамиконович Арутюнян*, **Армен Валерикович Арутюнян**,
Анаит Вардгесовна Арутюнян, **Чинар Ваановна Нерсесян**, **Карпет Акопович Мосикян**

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

*vmh-1961@mail.ru

В статье обсуждается влияние климатических факторов на пропускную способность автомобильных дорог. Определена пропускная способность полосы двухполосной дороги с учетом климатических условий, состояния дороги и средней скорости свободного движения автомобиля. В случае проектирования новых дорог предлагается фактическую максимальную допустимую скорость легковых автомобилей определять аналитическим методом, исходя из схемы расчета, требований к геометрическим параметрам и транспортно-эксплуатационных характеристик, с учетом влияния метеорологических факторов, взаимодействия автомобиля с дорогой и восприятия условий движения водителем.

Ключевые слова: *автомобильная дорога, автомобиль, скорость, пропускная способность, климатический фактор, мокрое покрытие, среднеквадратическое отклонение*

THE IMPACT OF CLIMATIC FACTORS ON ROAD CAPACITY

Valerik Harutyunyan*, **Armen Harutyunyan**, **Anahit Harutyunyan**, **Chinar Nersesyan**,
Karapet Mosikyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

*vmh-1961@mail.ru

The article discusses the impact of bioclimatic factors on the capacity of highways. The capacity of a two-lane road has been determined by taking into account bioclimatic conditions, road conditions, and the average free-flow speed of vehicles. For the design of new roads, it is recommended to determine the actual

maximum permissible speed of light passenger cars analytically, based on the calculation scheme, geometric parameter requirements, and transport-operational characteristics. This approach considers the influence of meteorological factors, the interaction between the road and the vehicle, and the driver's perception of traffic conditions.

Keywords: highway, vehicle, speed, capacity, climatic factor, wet pavement, root mean square deviation

Հարությունյան Վալերիկ Մամիկոնի, տ.գ.թ., դոց. (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Տրանսպորտային, լոգիստիկ համակարգերի և շինարարական մեքենաների ամբիոն, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Հարությունյան Արմեն Վալերիկի, տ.գ.թ., դոց.** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Տրանսպորտային, լոգիստիկ համակարգերի և շինարարական մեքենաների ամբիոն, (+374)43116611, armharutyunyan77@mail.ru, **Հարությունյան Անահիտ Վարդգեսի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Տրանսպորտային, լոգիստիկ համակարգերի և շինարարական մեքենաների ամբիոն, դասախոս, (+374)95683341, ann.harutyunyan1970@gmail.com, **Ներսեսյան Չինար Վահանի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Տրանսպորտային, լոգիստիկ համակարգերի և շինարարական մեքենաների ամբիոն, ասիստենտ, (+374)77490858, chinar.nersesyan@mail.ru, **Մոսիկյան Կարապետ Հակոբի, տ.գ.թ., դոց.** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Տրանսպորտային, լոգիստիկ համակարգերի և շինարարական մեքենաների ամբիոն, (+374)94854540, karomosikyan@mail.ru

Арутюнян Валерик Мамиконевич, к.т.н., доцент (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Транспортных, логистических систем и строительных машин, (+37410) 567572, (+37493) 100825, vmh-1961@mail.ru, **Арутюнян Армен Валерикович, к.т.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Транспортных, логистических систем и строительных машин, (+374)43116611 armharutyunyan77@mail.ru, **Арутюнян Анаит Вардгесовна** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Транспортных, логистических систем и строительных машин, преподаватель, (+374)95683341, ann.harutyunyan1970@gmail.com, **Нерсисян Чинар Вагановна** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Транспортных, логистических систем и строительных машин, ассистент, (+374)77490858, chinar.nersesyan@mail.ru, **Мосикян Карапет Акопович, к.т.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Транспортных, логистических систем и строительных машин, (+374)94854540 karomosikyan@mail.ru

Harutyunyan Valerik, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Harutyunyan Armen, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor** (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374)43116611, armharutyunyan77@mail.ru, **Harutyunyan Anahit** (RA, Yerevan) – NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, lecture, (+374)95683341, ann.harutyunyan1970@gmail.com, **Nersesyan Chinar** (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, assistant, (+374)77490858, chinar.nersesyan@mail.ru, **Mosikyan Karapet, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor** (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374)94854540, karomosikyan@mail.ru

Ներկայացվել է՝ 30.01.2026թ.

Գրախոսվել է՝ 15.02.2026.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2026թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՍՏԱՌԻ ԴԻԶԱՅՆ. ԿՈՆՍՏԴՈՒԿՏԻՎԻԶՄԻՑ ՍՈՑԻԱԼԻԶՄ (1920–1960)

Նարե Թաթուլի Նադարյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ**nadaryan.nare@nuaca.am*

Հոդվածում ուսումնասիրվում է հայկական պաստառային արվեստի գեղագիտական համակարգի ձևավորումը 1920–1960 թթ.: Ձևավորման ընթացքը պայմանավորված է երեք հիմնական փուլերով՝ 1920–1930-ականների կոնստրուկտիվիստական ավանգարդին բնորոշ ձևաբանական նորարարություններով, 1930–1950-ականների սոցիալիստական ռեալիզմի գաղափարական և գեղագիտական ինստիտուցիոնալացմամբ, ինչպես նաև 1950–1960-ականների հետպատերազմյան շրջանում ձևավորված գեղարվեստատեխնիկական համախմբմամբ: Վերլուծությունը հիմնված է ձևաբանական, կոմպոզիցիոն, սեմիոտիկ, գունային և տառաձևային ուսումնասիրությունների վրա: Հայկական պաստառային արվեստը դիտարկվում է համաշխարհային արվեստագիտական մոտեցումների համատեքստում՝ օգտագործելով Առնհեյմի, Բերգերի, Գոմբրիխի, Բարտի, Բենյամինի և Մեզսի տեսական նախադրյալները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայկական պաստառը ձևավորվել է որպես բազմաշերտ տեսողական հաղորդակցման համակարգ, որը միավորում է ազգային գունապատկերային ավանդույթները, խորհրդային գաղափարախոսական մոդելները և 1920–1930-ականների եվրոպական ավանգարդին բնորոշ ձևաբանական ազդեցությունները: Արդյունքում բացահայտվում է, որ 1920–1960 թթ. պաստառային արվեստի զարգացման ընթացքում ձևավորվել է ազգային-խորհրդային համադրված գեղագիտական լեզու, որն իր հիմքում կրում է ինչպես խորհրդային պատկերագրության գաղափարական կառուցվածքները, այնպես էլ հայկական գունային և կոմպոզիցիոն մտածողության առանձնահատկությունները:

Բանալի բառեր. *հայկական պաստառ, դիզայն, կոնստրուկտիվիզմ, սոցիալիստական ռեալիզմ, գունային համակարգ, ձևաբանական վերլուծություն*

Ներածություն

20-րդ դարի առաջին կեսը հայ գրաֆիկական արվեստի և տեսողական հաղորդակցության զարգացման առանցքային փուլերից էր: Այս ժամանակահատվածում պաստառը ոչ միայն դարձավ սոցիալ-քաղաքական ուղերձների փոխանցման հիմնական միջոց, այլ նաև գործեց որպես նոր գեղարվեստական մոտեցումների, ձևաբանական կառուցվածքների և գունապատկերային մտածողության ձևավորման հարթակ: Հայկական պաստառի և գրաֆիկական արվեստի ուսում-

նասիրող Հակոբ Բաբայանը նկատում է, որ խորհրդային շրջանի հայկական պաստառը ձևավորվում էր պետական գաղափարախոսության ազդեցության ներքո, սակայն միաժամանակ պահպանվում էին ազգային գեղագիտական առանձնահատկությունները [1]:

Հայկական պաստառային արվեստի ձևավորումը պայմանավորված էր երկու հիմնական ուղղություններով: Մի կողմից այն զարգանում էր սոցիալիստական ռեալիզմի ինստիտուցիոնալացված գեղագիտական համակարգում, իսկ մյուս կողմից՝ ռուսական և եվրոպական (հատկապես՝ Կենտրոնական Եվրոպայի) ավանգարդի, մասնավորապես, կոնստրուկտիվիզմի ձևաբանական ներգործության ազդեցությամբ:

Հայաստանի արվեստաբանական և գրաֆիկական դիզայնի պատմության կարևոր հետազոտող Մարկոս Երզնկյանը փաստում է, որ հայ գրաֆիկական արվեստը՝ ներառյալ պաստառային դիզայնը, ձևավորվել է ինքնատիպ ձևով՝ միավորելով տեղական պատկերագրական ավանդույթները և միջազգային ձևաբանական հոսանքները [2]:

Ռուդոլֆ Առնհեյմի ձևակերպմամբ՝ «պաստառը պետք է կառուցված լինի այնպես, որ դիտողի ուշադրությունն աստիճանաբար ուղղվի դեպի հաղորդվող գաղափարի կորիզը» [3]: Այս սկզբունքն առանցքային է ինչպես կոնստրուկտիվիստական կոմպոզիցիոն լուծումների, այնպես էլ սոցիալիստական ռեալիզմի կերպարային կառուցվածքների վերլուծության համար, և կարևոր դեր է խաղում հայկական գրաֆիկական դպրոցի ձևավորման գործընթացում:

Սույն հոդվածում հայկական պաստառը դիտարկվում է որպես բազմաշերտ տեսողական հաղորդակցության համակարգ, որը ներառում է յուրահատուկ կառուցվածք, նշանաբանական շերտեր, գունապատկերային կազմակերպություն և գաղափարական խորհրդաբանություն: Վերլուծության տեսական շրջանակը կառուցված է Ռ. Առնհեյմի [3], Ջ. Բերգերի [4], Է. Գոմբրիխի [5], Ռ. Բարտի [6], Վ. Բենյամինի [7] և Ֆ. Մեզսի [8] մոտեցումների հիման վրա, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել հայկական պաստառի ձևաբանական, գաղափարական և հաղորդակցման առանձնահատկությունների խորքային շերտերը:

Հոդվածի գիտական նորույթը պայմանավորված է հայկական պաստառային արվեստի (1920–1960 թթ.) ամբողջական տեսողական հաղորդակցման համակարգի տեսանկյունից ուսումնասիրությամբ և դրա զարգացման փուլային կառուցվածքի հիմնավորմամբ:

Նյութեր և մեթոդներ

Ուսումնասիրության համար օգտագործվել են 1920–1960 թթ. հայկական պաստառների բնօրինակ տպագրությունները, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում, Գրականության և արվեստի թանգարանում և Հայաստանի պատմության թանգարանում: Ավելացվել են նաև թվայնացված նյութեր (UCLA Library Digital Collections «Soviet Armenian Posters» և Armenia Ephemera Digital Project հարթակներում):

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են 1920–1960 թթ. ստեղծված շուրջ 20 հայկական պաստառներ, որոնք ընտրվել են ժամանակագրական ընդգրկվածության, գեղարվեստական առանձնահատկությունների և պահպանվածության աստիճանի հիման վրա:

Հոդվածի մեթոդաբանությունը կառուցված է բազմաշերտ վերլուծական մոտեցումների համադրության վրա, ինչը հնարավորություն է տալիս ամբողջական կերպով բացահայտել հայկական պաստառի գեղագիտական, ձևաբանական և գաղափարական առանձնահատկությունների համակարգը: Գործնական վերլուծությունն իրականացվել է հետևյալ փոխկապակցված ուղղություններով.

1. Կոմպոզիցիոն-ձևաբանական վերլուծություն

20-րդ դարի տեսողական ընկալման հոգեբանության և գեղագիտության խոշոր տեսաբան Ռուդոլֆ Առնհեյմի մոտեցումների հիման վրա ուսումնասիրվել են պաստառների կոմպոզիցիոն կառուցվածքները՝ ձևերի հարաբերակցությունը, գծային կազմակերպումը և պատկերի ընդհանուր հավասարակշռությունը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս բացահայտել պաստառի կառուցման խորքային օրինաչափությունները [3]:

2. Գունային համակարգի վերլուծություն

Գունային համակարգի ուսումնասիրությունը հիմնված է Բաուհաուսի ներկայացուցիչ Իռինգեն Իտենի [9] և արվեստաբան Էռնստ Գոմբրիխի [5] կողմից ներկայացված գունային հակադրությունների ու ներդաշնակության տեսական մոդելների վրա: Թոմփսոնի տեխնոլոգիական դիտարկումները ցույց են տալիս, որ գունային ընտրությունները պայմանավորված էին ոչ միայն գեղագիտական, այլև տպագրական տեխնոլոգիաների սահմանափակումներով [10]: Վերլուծվել է գունային համակարգի տրամաբանությունն ինչպես կոնստրուկտիվիստական, այնպես էլ սոցիալիստական ռեալիզմի փուլերում՝ բացահայտելով գույների գաղափարական և նշանաբանական դերակատարությունը:

3. Սեմիոտիկական վերլուծություն

Ռոլան Բարտի «պատկերի հոետորաբանություն» մոդելի հիման վրա բացահայտվել են պաստառներում առկա երկրորդային իմաստային շերտերը, խորհրդային գաղափարախոսական կոդերը և մշակութային սիմվոլիկան: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս վերլուծել, թե ինչպես է պատկերը ձևավորում դիտողի ընկալումը և հաղորդակցական ազդեցությունը [6]:

4. Պատմամշակութային և գաղափարական վերլուծություն

Պաստառային արվեստը դիտարկվել է իր սոցիալական, մշակութային և քաղաքական միջավայրի մեջ՝ հիմնվելով Վալտեր Բենյամինի զանգվածային հաղորդակցության վերաբերյալ տեսական դիտարկումների վրա: Այս մեթոդը հնարավորություն է տալիս հասկանալ պաստառի գաղափարական գործառույթները և դրա ազդեցությունը հասարակական գիտակցության վրա [7]:

5. Համեմատական վերլուծություն

Հայկական պաստառային արվեստը համադրվել է ռուսական, վրացական, ուկրաինական և լեհական խորհրդային պաստառային դպրոցների հետ՝ բացահայտելու ընդհանուր գեղագիտական օրինաչափությունները և ազգային առանձնահատկությունների ձևավորման մեխանիզմները: Համեմատական դիտարկումներն ապահովում են հետազոտության մեթոդաբանական ամբողջականությունն ու դրա տեղայնացումը միջազգային արվեստագիտական համատեքստում:

Վերլուծության ընթացքում պաստառների կոմպոզիցիոն և գունային կառուցվածքները դիտարկվել են նաև սխեմատիկ մոդելավորման սկզբունքով՝ առանձնացնելով հիմնական առանցքները, տեսողական կենտրոնները, գունային հակադրությունների դաշտերը և տիպոգրաֆիկ շեշտադրումները, ինչը թույլ է տալիս տեսական եզրահանգումները հիմնավորել կառուցվածքային մակարդակում:

Արդյունքներ և քննարկում

Արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել հայկական պաստառային արվեստի երեք ձևաբանական և գաղափարական փուլերը, որոնք տարբեր ճյուղերում արտացոլում են խորհրդային մշակութային քաղաքականության և միջազգային արվեստագիտական միտումների փոխազդեցությունը:

1. Վաղ խորհրդային կոնստրուկտիվիստական փուլ (1920–1930 թթ.)

1920–1930-ականների հայկական պաստառները ձևավորվում էին ռուսական և եվրոպական կոնստրուկտիվիզմի ուղղակի ներգործության պայմաններում: Այս շրջանը բնորոշվում է դինամիկ կոմպոզիցիաներով, հստակ ուղղաձիգ և անկյունային գծային կառուցվածքներով, ինչպես նաև կտրուկ գունային հակադրություններով (կարմիր–սև–սպիտակ): Այս ձևաբանական մոդելները ստեղծում էին արագ ընկալվող տեսողական ազդակներ, որոնք ուժեղացնում էին քաղաքական կոչերի անմիջականությունն ու գործողություն հրահանգող բնույթը:

Առնհեյմի ընկալման հոգեբանության համաձայն՝ թեք ու անկյունային կոմպոզիցիաները ստեղծում են լարվածության կենտրոններ, որոնք դիտողի ուշադրությունը կենտրոնացնում են հիմնական ուղերձին: Այդ պատճառով կոնստրուկտիվիստական հայկական պաստառները կարևորում էին ոչ թե պատկերի դեկորատիվությունը, այլ դրա ֆունկցիոնալ բնույթը:

Այս շրջանի պաստառներում կիրառվող տառաձևերը ևս կրում էին կոնստրուկտիվիզմին բնորոշ երկրաչափական և հստակ կառուցվածք: Տեքստային հատվածները հաճախ ընդգրկվում էին կոմպոզիցիայի ընդհանուր ռիթմի մեջ՝ հանդես գալով ոչ միայն տեղեկատվական, այլև արտահայտչական տարրերի դերում:

Նկ. 1-ում ներկայացված պաստառը (1932 թ., Հայաստանի ազգային արխիվ) բնորոշ օրինակ է. թեք ուղղությունները, նկարչական մակերեսի ձգումը դեպի վեր, խիստ ռիթմիկ կառուցվածքը և կարմիր–սև–կանաչ գունաշարը ձևավորում են ուժեղ գաղափարական լարվածություն՝ ընդգծելով գաղափարական մոտեցումը և հասարակական փոխակերպումների ինտենսիվությունը:



Նկ. 1. Վաղ խորհրդային հայկական պաստառ, 1932 թ. (Հայաստանի ազգային արխիվ)

2. Սոցիալիստական ռեալիզմի ինստիտուցիոնալացված փուլ (1930–1950 թթ.)

1930-ականների վերջից խորհրդային մշակութային քաղաքականության համակարգումը բերում է գեղագիտական նախադրյալների արմատական փոփոխության: Սոցիալիստական ռեալիզմը գործում էր ոչ միայն որպես գեղարվեստական մեթոդ, այլև որպես գաղափարախոսության հստակ կառուցվածք, որը կարգավորում էր կերպարային համակարգը, կոմպոզիցիոն շեշտադրումները և գույների հոգեբանական ազդեցությունը [11]: Այս համատեքստում հայկական պաստառներում ձևավորվում է «հերոսացված աշխատավորի» պատկերագրական մոդելը, որը, ինչպես ընդգծում է Ա. Սիմոնյանը [12], միավորում էր խորհրդային գաղափարախոսությունն ու ազգային գեղագիտական ավանդույթները՝ ներկայացվելով որպես ազգ-պետության կառուցման գլխավոր խորհրդանիշ: Այս շրջանի հիմնական հատկանիշներն են.

- իրականությանը մոտ, բայց իդեալականացված կերպարներ,
- աշխատավորի և գյուղացու մարմնավորման սիմվոլիկ չափազանցում,
- դասական համաչափությամբ կառուցված կոմպոզիցիաներ,
- պայծառ և ներդաշնակ գունավորման կիրառում՝ գաղափարական «կարգավորվածություն» փոխանցելու նպատակով:

Տիպոգրաֆիկ լուծումներում գերակշռում էին առավել խոշոր, ընթեռնելի և մոնումենտալ տառաձևերը, որոնք նպաստում էին գաղափարական ուղերձների հստակ փոխանցմանը և ուժեղացնում կերպարային համակարգի ազդեցությունը:

Նկ. 2-ում ներկայացված 1940-ականների պաստառն (Գրականության և արվեստի թանգարան) արտացոլում է տվյալ ժամանակաշրջանի սոցիալիստական գեղագիտական շերտերը: Կերպարի մասշտաբային ընդգծումը կիրառվում է աշխատավորի կենտրոնական դերի և նրա ազգային-քաղաքական նշանակության ցուցադրման նպատակով: Գունային հարթությունների հավասարակշռված դասավորությունը, կոմպոզիցիայի կենտրոնացված կառուցվածքը և սիմվոլիկ տարրերի նպատակային օգտագործումը ձևավորում են արտադրողականության, հավաքական աշխատանքի և սոցիալական զարգացմամբ պայմանավորված առաջընթացի գաղափարները:



Նկ. 2. Սոցիալիստական ռեալիզմի հայկական պատատառ, 1940-ականներ (Գրականության և արվեստի թանգարան)

3. Գեղարվեստատեխնիկական համախմբման փուլ (1950–1960 թթ.)

1950–1960-ականներին հայկական պատատառային արվեստը հասնում է ձևաբանական և տեխնոլոգիական համախմբման: Այս շրջանը բնութագրվում է՝

- տպագրական տեխնոլոգիաների զարգացմամբ,
- գունային ավելի լայն և հարստացված կիրառությամբ,
- կոմպոզիցիոն կառուցվածքի բարդացմամբ,
- հրատարակչության ոճական մեղմացմամբ և «կլորացմամբ»,
- արևելյան և արևմտաեվրոպական ձևաբանական տարրերի համադրմամբ:

1950–1960-ականներին տառաձևային համակարգերը դառնում են ավելի բազմազան և ճկուն: Տեքստն ու պատկերը ձևավորում են ավելի հավասարակշռված հարաբերություն, ինչը վկայում է պատատռի ոչ միայն գաղափարական, այլև դիզայնի և գործառնության ուժեղացման մասին:

Այս շրջանի պատատառները դառնում են ոչ միայն գաղափարախոսական հաղորդակցության գործիք, այլև գեղարվեստադիզայնային մշակույթի ձևավորման կենտրոն: Պատկերագրական շերտերը պարզեցվում են, գունային տարածությունները դառնում են ավելի հավասարակշռված, իսկ կոմպոզիցիոն կառուցվածքներն՝ ավելի ռիթմիկ և ներդաշնակ:

Նկ. 3-ում (1950–1960 թթ., Armenia Ephemera Digital Project) ներկայացված պատատառը վերաբերում է խորհրդային շրջանում մշակութային լուսավորության և կրթական արժեքների տարածմանն ուղղված տեսողական արտադրությանը: Այն բացահայտում է այս փուլին բնորոշ «մեղմացված մոդեռնիզմի» միտումները՝ պարզեցված պատկերագրություն, հավասարակշռված գունային մոտեցում և կոմպոզիցիոն կառուցվածքի ներդաշնակություն: Այս նոր մոդելը նախադրյալ է դառնում հայկական գեղարվեստական դիզայնի ինքնուրույն լեզվի ձևավորման համար:

Երեք փուլերի համադրական դիտարկումը ցույց է տալիս, որ հայկական պատատառային արվեստում աստիճանաբար ձևավորվում է ազգային–խորհրդային տեսողական լեզու, որի հիմքում միահյուսվում են եվրոպական ավանգարդի ձևաբանական սկզբունքները, խորհրդային պատկերագրական համակարգը և հայկական գունապատկերային ավանդույթները:



Նկ. 3. Կրթական-մշակութային բնույթի հայկական պաստառ, 1950–1960 թթ.
(Armenia Ephemera Digital Project)

Եզրակացություն

Հայկական պաստառային արվեստի 1920–1960 թթ. զարգացումը ներկայացվում է որպես ազգային տեսողական մշակույթի ինստիտուցիոնալ ձևավորման առանցքային փուլ, որի ընթացքում բյուրեղացել են երեք հիմնարար գեղարվեստական ու գաղափարական շերտեր՝ կոնստրուկտիվիստական ավանգարդը, սոցիալիստական ռեալիզմի ինստիտուցիոնալ համակարգը և հետպատերազմյան գեղարվեստատեխնիկական համախմբումը: Այս փուլային զարգացումները որոշիչ դեր են ունեցել ազգային պաստառի տեսողական լեզվի, գեղագիտական արժեքների և գաղափարախոսական ուղղվածության ձևավորման մեջ:

Չնայած պաստառը խորհրդային մշակութային քաղաքականության շրջանակում գործել է որպես գաղափարական հաղորդակցության առաջնային միջոց, այն միաժամանակ պահպանել և վերաիմաստավորել է ազգային գունապատկերային ավանդույթները, կերպարային կառուցվածքները և կոմպոզիցիոն մտածողության ներքին տրամաբանությունը: Այս համադրական գործընթացի արդյունքում ձևավորվեց ազգային-խորհրդային միավորող մոդել, որտեղ միահյուսվում էին եվրոպական ավանգարդից եկող ձևաբանական նորարարությունները և սոցիալիստական ռեալիզմի պատկերազրական չափորոշիչները:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հայկական պաստառը չի սահմանափակվում քարոզչական գործառնությամբ: Այն հանդես է գալիս որպես ինքնուրույն գեղարվեստատեսողական համակարգ, որը միավորում է արտահայտչականության բազմաշերտ մակարդակները՝ կոմպոզիցիոն կառուցվածքից մինչև նշանաբանական և գունային կազմակերպություն: Պաստառը դառնում է ոչ միայն գաղափարական հաղորդակցության, այլև գեղագիտական մտածողության և մշակութային ինքնության ձևավորման միջավայր, որտեղ արտացոլվում են ժամանակի գեղագիտական, տեխնոլոգիական և հասարակական միտումները:

Հետազոտության արդյունքում հիմնավորվեց հայկական պաստառային արվեստի զարգացման եռափուլ կառուցվածքային մոդելը, որը հնարավորություն է տալիս 1920–1960 թթ. գեղարվեստ-

տական գործընթացները դիտարկել որպես մեկ ամբողջական տեսողական համակարգի փոխկապակցված փուլեր: Միաժամանակ հիմնավորվեց ազգային-խորհրդային տեսողական լեզվի ձևավորման գործընթացը, որն առաջացել է եվրոպական ավանգարդի, խորհրդային պատկերագրության և հայկական գեղարվեստական ավանդույթների փոխազդեցության արդյունքում:

Վերջնական հաշվով, 1920–1960 թվականները կարելի է դիտարկել որպես հայկական պատանային արվեստի ինքնուրույն և ամբողջական տեսողական համակարգի կայացման փուլ: Կոնստրուկտիվիստական ձևաբանական փորձարարությունը, սոցիալիստական ռեալիզմի գաղափարական պատկերագրությունը և հետպատերազմյան տեխնոլոգիական վերափոխումները համատեղ ձևավորեցին տեսողական հաղորդակցության մոդել, որը դարձել է հայկական գեղարվեստական դիզայնի ինքնատիպության հիմնասյուներից մեկը:

Գրականության ցանկ

- [1] Հ. Բաբայան, Խորհրդային պատանային Հայաստանում, Երևան, 1987:
- [2] Մ. Երզնկյան, Հայկական գրաֆիկայի խնդիրներ, Երևան, 2016:
- [3] R. Arnheim, Art and Visual Perception: A Psychology of the Creative Eye, Berkeley–Los Angeles–London, 1974.
- [4] J. Berger, Ways of Seeing, London, 1972.
- [5] E.H. Gombrich, Art and Illusion: A Study in the Psychology of Pictorial Representation, Princeton University Press, 1960.
- [6] R. Barthes, Image—Music—Text, London, 1977.
- [7] W. Benjamin, The Work of Art in the Age of Mechanical Reproduction, 1936.
- [8] P. Meggs, History of Graphic Design, New York, 1998.
- [9] J. Itten, The Art of Color, New York, 1961.
- [10] D. Thompson, The Materials and Techniques of Medieval Painting, Mineola, NY, 2012.
- [11] K. Clark, The Soviet Poster: Art and Ideology, London, 2011.
